

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ “ԱԲՈՎՅԱՆ” ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2015



COUNTERPART
INTERNATIONAL



Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերային պայմանագրի շրջանակներում՝ ***“Դրավունքների պաշտպանություն առանց սահմանների”*** հասարակական կազմակերպության միջոցով:

Զեկույցի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են ***“Դրավունքների պաշտպանություն առանց սահմանների”*** ՀԿ-ին և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	7
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ և ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ	
ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ	11
Երկսեռ անձնակազմի առկայություն	12
Հիգիենա և առողջություն	13
“ԱԲՈՎՅԱՆ” ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԵՆՍԱՊԱՑՄԱՆՆԵՐԸ	15
“Աբովյան” քրեակատարողական հիմնարկի տեղակայումն ու ճարտարապետաշինարարական կառուցվածքը	15
Քրեակատարողական հիմնարկի շենքը, ընդհանուր պայմանները	16
ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՊԱՏԺԻ ԿՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	18
Ապրելու տարածք և բնակեցում	18
Կացարանների ջեռուցում ու օդափոխություն.....	19
Լուսավորություն.....	20
Կահավորանք և վերանորոգում	21
ԲՆԱԿԵՑՈՒՄ	22
Կացարանային սենյակների նկարագրություն	23
Կացարան N 1, առաջին հարկ (26 մահճակալ, 25 բնակիչ)	23
Կացարան N 2, VIP, առաջին հարկ (11 մահճակալ, 9 բնակիչ).....	24
Կացարան N 3, երկրորդ հարկ (68 մահճակալ և 68 բնակիչ).....	24
Կացարան N 4, երկսեռականոց, երկրորդ հարկ (20 մահճակալ 19 բնակիչ)	25
Կացարան N 5, հիվանդների սենյակ, երկրորդ հարկ (5 մահճակալ 5 բնակիչ).....	25
Կացարան N 6, մայր և երեխա, երկրորդ հարկ	26
Խուց N 1	26
Պատժախուց.....	27
Կարանտինային սենյակ	27
ԿԱՊԸ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ.....	28
___ Կապն ընտանիքի հետ.....	29
___ Կարճատև տեսակցություններ	30
___ Երկարատև տեսակցություններ.....	31
___ Թերթեր, ամսագրեր	32
___ Հեռախոսային կապն արտաքին աշխարհի հետ	32
___ Նամակագրություն	33
ՄԱՆԻՏԱՐԱՀԻԳԻՆԵՐԻ Կ ՊԱՅՄԱՆՆԵՐ	33
___ Անձնական հիգիենիայի ապահովման հնարավորություններ	35
___ Լոգանք և կանացի հիգիենիայի պահպանման հնարավորություն	35
___ Անձնական հիգիենիայի ապահովման այլ հնարավորություններ.....	35

Լվացք	35
Զուգարան	36
Մաքրություն և ախտահանում	37
Հիգիենիկ պարագաների տրամադրում	37
Գրադարան	38
ԻՐԱԶԵԿՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	38
ԽՈՀԱՆՈՑ և ՄՆՈՒՆԴ	39
Ճաշարան-Խոհանոց	39
Հղի կամ երեխա ունեցող կանանց սննդակարգը	42
Սննդի որակ և ճաշացանկ	42
Քրեակատարողական հիմնարկի սննդի և ճաշարանի խնդիրները	44
Զուր	44
ՄՆՆԴԻ ՊԱՀՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՊԱՀԵՍՏՆԵՐ	45
Նկարագրություն	45
ԵՐԵԽԱՆԵՐ և ՀՂԻ ԿԱՆԱՅՔ	46
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔ	47
Կրթություն	47
Աշխատանք	48
ԺԱՄԱՆՑ	50
Սպորտ, մարմնամարզություն	50
Կրոն	51
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	52
ԿԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ԲԺՇԿԱԿԱՆ	
ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	52
ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ	
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ	55
Բուժկետ	55
Գինեկոլոգի սենյակ	56
Ստոմատոլոգիական սենյակ	56
Բժշկական սպասարկման կարգ, ծառայությունների որակ և կարիքներ	57
Դեղամիջոցների տրամադրում	59
Բժշկական անձնակազմի համալրվածություն և վերապատրաստում	60
Բժշկական անձնակազմի վերաբերմունք	61
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	61
Վարչակազմի և հսկիչների վերաբերմունք	61
Դիմելաձև	63
Հանդերձանք	63
Հոգեբանի և սոցիալական աշխատողի վերաբերմունք	63
Միջանձնային հարաբերություններ, կոնֆլիկտներ	64

___ Միջանձնային Կոնֆլիկտներ	65
___ Վերաբերմունք ազգային փոքրամասնությունների նկատմամբ	66
___ Խոշտանգման և դաժան վերաբերմունքի օրինակներ	66
___ Խտրականության և ոչ հավասար հնարավորությունների դրսևորումները Աբովյան քաղ-ում	66
ՌԵԺԻՄ և ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	70
Կարգապահական ընթացակարգեր	71
Օրվա կարգացուցակ	72
___ Խանութից օգտվելու խնդիր	72
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	73
ՔԿՀ աշխատակազմ և կառուցվածք	73

Ներածություն

«Ազատագրված կանանց իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» վերնագրով զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից՝ «Քաունթերֆարթ ինթերնեշնլ» Հայաստանի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: Սույն զեկույցը պատրաստվել է «Հայաստանում ազատագրված կանանց իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակն էր ՄԱԿ-ի 65/229 բանաձևին (Բանգկոկի կանոններ) համապատասխան օրենսդրական բարեփոխումների և դրանց կիրառելիությունն ապահովող Միջազգային բանտային ռեֆորմի (Penal Reform International) ուղեցույցների հիման վրա մոնիթորինգի նոր չափանիշներ մշակելը և դրանք Հայաստանում ներդնելը:

Զեկույցում անդրադարձ է կատարվում այնպիսի կարևորագույն խնդիրների, ինչպիսիք են դատապարտյալների պահման պայմանները, առողջապահական ծառայությունների որակը, սննդի որակը, սանիտարահիգիենիկ պայմանները, դատապարտյալների զբաղվածությունը, ՔԿՀ աշխատակազմի վերաբերմունքը դատապարտյալների նկատմամբ, դատապարտյալների միջև միջանձնային հարաբերությունները և այլն:

Զեկույցի պատրաստմանը մասնակցել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ակտիվիստներ, լրագրողներ, ինչպես նաև շահագրգիռ այլ անձինք: Զեկույցի պատրաստման նպատակով Աղվերանում կազմակերպվել է երկօրյա դասընթաց «Դատապարտյալ կանանց իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում՝ Բանգկոկի կանոնների կիրառմամբ» թեմայով:

Զեկույցը հասցեագրվում է այն բոլոր կառույցներին, անհատներին և որոշում կայացնողներին, ովքեր հետաքրքրված են Հայաստանում քրեակատարողական համակարգի բարեփոխումներով և ազատագրված կանանց պաշտպանության արդյունավետության բարձրացմամբ:

Հուսով ենք, որ զեկույցում բարձրացված խնդիրները կհամախմբեն բոլոր շահագրգիռ ուժերի ջանքերը՝ համարժեք բարեփոխումների իրականացումն ապահովելու համար:

Կազմակերպությունն իր խորին շնորհակալությունն է հայտնում այն բոլոր անձնաց, ովքեր աջակցեցին “Աբովյան” քրեակատարողական հիմնարկում մարդու իրավունքների մոնիթորինգի անցկացմանն ու սույն զեկույցի կազմմանը: Մասնավորապես՝ մեր երախտագիտությունն ենք հայտնում Դավիթ Թումասյանին, Ավետիք Իշխանյանին և Տիգրան Սաֆարյանին՝ դիտորդների վերապատրաստման գործում իրենց ցուցաբերած աջակցության համար:

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում Աշխեն Բաբայանին, Անի Աղազյուլյանին, Աննա Մուրադյանին, Շողինե Սողոմոնյանին, Սուսաննա Էլբակյանին, Եվգենիա Իվանովային, Անահիտ Մկրտչյանին, Հայկ Թադևոսյանին, Հասմիկ Հարությունյանին և Նելլի Հարությունյանին՝ “Աբովյան” քրեակատարողական հիմնարկում իրականացրած դիտորդության համար:

Կազմակերպությունը շնորհակալություն է նաև հայտնում ՀՀ արդարադատության նախարարությանը, քրեակատարողական վարչությանը, Աբովյան քրեակատարողական հիմնարկի պետին, վարչակազմին, ինչպես նաև Աբովյան քրեակատարողական հիմնարկի բոլոր դատապարտյալներին զեկույցի պատրաստմանն աջակցելու համար:

Մեթոդաբանություն

Մույն զեկույցի պատրաստման համար օգտագործվել են իրար փոխլարցնող մի քանի մոթեղներ, որոնք հնարավորություն են արդյունավետությամբ հավաքագրել և ներկայացնել տեղեկատվությունը:

Իրականացված աշխատանքներն ընդգրկել են հետևյալ հիմնական փուլերը.

1. **Նախապատրաստական փուլ**, որի ընթացքում իրականացվել է ոլորտին վերաբերող միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություն, կատարվել է դիտորդների ընտրություն և ուսուցում, մշակվել են հարցաշարեր և դիտարկման քարտեր, ինչպես նաև այլ կազմակերպչական նախապատրաստական աշխատանքներ
2. **Դիտարկման և տեղեկատվության հավաքման փուլ**, որի ընթացքում դիտորդներն անմիջականորեն իրականացրել են դիտարկումները և հավաքել են վերլուծության համար անհրաժեշտ տվյալներն ու տեղեկությունները
3. **Հետազոտության արդյունքների մշակման, ամփոփման և հրապարակման փուլ**, որի ընթացքում հետազոտության համար անհրաժեշտ տվյալներն ու տեղեկությունները մշակվել և ամփոփվել են, պատրաստվել է զեկույցը:

Զեկույցի պատրաստման նախապատրաստական փուլի ընթացքում Աղվերանում կազմակերպվել է երկօրյա դասընթաց «Դատապարտյալ կանանց իրավունքների պաշտպանությունը ՀՀ-ում՝ Բանգկոկի կանոնների կիրառմամբ» թեմայով: Դասընթացին մասնակցել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անձինք, լրագրողներ, ինչպես նաև շահագրգիռ այլ անձինք՝ թվով մոտ 30մարդ: Դասընթացի մասնակիցները կազմակերպության կողմից հրավիրված փորձագետների օգնությամբ ուսումնասիրել են ՄԱԿ-ի 65/229 բանաձևին (Բանգկոկի կանոններ) համապատասխան օրենսդրական բարեփոխումների և դրանց կիրառելիությունն ապահովող Միջազգային բանտային ռեֆորմի (Penal Reform International) ուղեցույցերը, ինչպես նաև ազգային օրենսդրությունը: Կազմակերպվել են փորձագետների և մասնակիցների համատեղ մասնակցությամբ թիմային աշխատանքներ, ինչի արդյունքում մշակվել են զեկույցի պատրաստման համար անհրաժեշտ հարցաթերթիկներն ու դիտարկման քարտերը: Դասընթացի ընթացքում պատրաստվել և մշակվել են 8 հարցաշարեր և 9 դիտարկման քարտեր, որոնց ուղղվածությունը կարող էք տեսնել ստորև ներկայացված 2 աղյուսակներում՝

Աղյուսակ 1

Հարցաշարեր	
N	Հարցաշար
1	Երեխա ունեցող դատապարտյալ անձի հետ հարցազրույցի հարցաշար
2	Հսկիչի հետ հարցազրույցի հարցաշար
3	Բժշկական անձնակազմի հետ հարցազրույցի հարցաշար
4	Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հետ հարցազրույցի հարցաշար
5	Քրեակատարողական հիմնարկի պետի/վարչակազմի հետ հարցազրույցի
6	Ճաշարանից օգտվող անձի հետ հարցազրույցի հարցաշար
7	Խոհանոցի անձնակազմի հետ հարցազրույցի հարցաշար
8	Սոցիալ-հոգեբանական աշխատանքների բաժնի հետ հարցազրույցի հարցաշար

Աղյուսակ 2

Դիտարկման քարտեր	
1	Խոհանոց
2	Կացարան
3	Սանհանգույց
4	Սննդի պահեստ
5	Բուժկետ
6	Ընդհանուր ՔԿՀ-ի դիտարկման քարտ
7	Կարճ տեսակցությունների սենյակ
8	Երկարատես տեսակցությունների սենյակ
9	Ճաշարան

Երկրորդ՝ դիտարկման և տեղեկատվության հավաքման փուլում, կազմակերպության կողմից մշակվել է Արովյան քրեակատարողական հիմնարկի այցելությունների պլանը, որը բաղկացած է եղել չորս պատահական ընտրված օրերից: Պատահական ընտրված օրերի հիմնական նպատակն էր ստանալ Արովյան ՔԿՀ-ի առօրյայի հնարավորինս իրական պատկերը:

Ծրագրի համակարգողի օգնությամբ 12 դիտորդներից բաղկացած մոնիթորինգային թիմը բաժանվել է չորս տարբեր խմբերի: Այս բաժանումը պայմանավորված էր նրանով, որպեսզի այցելությունների չորս օրերի ժամանակահատվածը հնարավորինս արդյունավետորեն օգտագործվի:

Առաջին այցելության ընթացքում խմբերը նախապես մշակված դիտարկման քարտերի օգնությամբ դիտարկել են Արովյան ՔԿՀ տարածքը, բոլոր հինգ կացարանները, հիվանդասենյակը, լոգարանը, սանհանգույցը, ճաշարանը խոհանոցը, սննդի պահեստը, դատապարտյալների հանձնուքի և անձնական իրերի պահման սենյակը, ծխելու սենյակը, միջոցառումների անցկացման դահլիճը, սոցիալ հոգեբանների սենյակը, լվացքատունը:

Երկրորդ այցելության ընթացքում նախապես մշակված կիսաձևայնացված հարցաշարերի միջոցով խմբերը հարցազրույցներ են իրականացրել դատապարտյալների և բուժանձնակազմի հետ, ինչպես նաև դիտարկվել է ՔԿՀ բուժկետը:

Երրորդ այցելության ընթացքում խմբերը հարցազրույց են անցկացրել վարչակազմի տարբեր աշխատակիցների հետ: Իրականացվել է՝

- Խոհանոցի և սննդի պահեստի դիտարկում
- տնտեսական իրերի պահեստի դիտարկում
- Սննդի համտես
- Հարցազրույց ճաշարանից օգտվող անձանց հետ
- Հարցազրույց ճաշարանի անձնակազմի հետ
- Հագուստի, սպիտակեղենի և սանիտարահիգիենիկ պարագաների պահեստների դիտարկում
- Գորգագործության, խոզապահության և աշխատանքի այլ վայրերի դիտարկում

Եվ վերջապես չորրորդ այցելության ընթացքում դատապարտյալներին բաժանվել է նախապես մշակված անանուն հարցաթերթ, որը վերաբերել է դատապարտյալներին տրվող սննդի և տնտեսական իրերի պարունակությանը:

Յուրաքանչյուր այցելությունից հետո իրականացվել է խմբային քննարկում, որտեղ դիտորդների կողմից ներկայացվել են այցելության ընթացքում առաջացած խնդիրները, ինչպես նաև մոտակա 3 օրվա ընթացքում յուրաքանչյուր դիտորդի կողմից պատրաստվել է անհատական հաշվետվություն յուրաքանչյուր այցելության օրվա վերաբերյալ:

Այսպիսով, ընդհանուր առմամբ իրականացվել է ավելի քան 30 հարցազրույց դատապարտյալների և վարչակազմի աշխատակիցների հետ: Դիտարկված վայրերի ամբողջական պատկերը կարող եք տեսնել ստորև ներկայացված աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

N	Դիտարկված վայրի անունը	Քանակը
1	Կացարան	6
	Հիվանդների սենյակ	1
2	Լոդասենյակ	1
3	Սանհանգույց /զուգարան/	1
4	Ճաշարան	1
5	Խոհանոց	1
6	Սննդի պահեստ	2/մեկը մեծ 4 սենյակ/
7	Տնտեսական իրերի պահեստ	1
8	Դատապարտյալների հանձնուքի և անձնական իրերի պահման սենյակ	1
9	Ծխելու սենյակ /ձմռանը/	1
10	Դատապարտյալների սննդի պատաստման սենյակ	1
11	Կալանավորված կանանց պահման խցեր	3
12	Միջոցառումների անցկացման դահլիճ	1
13	Գինեկոլոգի սենյակ	1
14	Ատամնաբույժի սենյակ	1
15	Բժշկի սենյակ	1
16	Սոցիալ հոգեբանների սենյակ	1
17	Լվացքատուն	1
18	Կարի սենյակ	1

19	Դասասենյակ	2
20	Վերմիշելի արտադրամաս	1
21	Ոչխարների և խոզերի պահման գոմեր	1/մեծ/
22	Կարճատև տեսակցությունների սենյակ	2
23	Երկարատև տեսակցությունների սենյակ	2

Երրորդ և վերջին՝ հետազոտության արդյունքների մշակման, ամփոփման և հրապարակման փուլում, կատարվել է զեկույցի պատրաստման համար անհրաժեշտ հավաքված տվյալների և տեղեկատվության ամփոփում և վերլուծություն: Հավաքված տեղեկատվությունը վերլուծվել է տվյալների ավանդական կամ բովանդակային վերլուծության միջոցով: Զեկույցում վեր են հանվել հետազոտության արդյունքում պարզված բոլոր խնդիրները, մշակվել են համապատասխան առաջարկություններ, հաշվի առնելով նաև դատապարտյալների և վարչակազմի առաջարկությունները:

Ծանոթություն ազատազրկված կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքներին

Հավասարության սկզբունքը ենթադրում է ավելին, քան բոլոր մարդկանց նկատմամբ ուղղակի դրսևորված հավասար վերաբերմունքը: Անհավասար պայմաններում գտնվող մարդկանց հավասար վերաբերվելը նպաստում է անարդարության տարածմանը, ոչ թե վերացնում է այն¹:

Կանանց իրավունքները պաշտպանող տարածաշրջանային և միջազգային փաստաթղթերը հիմնականում հիմնված են խտրականության արգելման սկզբունքի վրա և պահանջում են, որ կանայք և տղամարդիկ արժանանան հավասար վերաբերմունքի ընդհանուր հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Այդ փաստաթղթերը, սակայն, անտեսում են այն մասնավոր հատվածը, որտեղ կանանց և տղամարդկանց հավասար վերաբերմունքի արժանացնելը կարող է դիտարկվել խտրականություն: Օրինակ՝ կանանց ազատազրկման արդյունքում ծագող խնդիրները հիմնականում սեռով պայմանավորված խոցելիության հատկանիշների դրսևորման արդյունք են: Կանանց՝ սեռով պայմանավորված առանձնահատկությունների անտեսումը, ոչ համաչափ ուշադրությունը կամ համարժեք խնամքի բացակայությունը, ազատազրկման ընդհանուր պայմանների կիրառումը տղամարդկանց և կանանց նկատմամբ արդեն իսկ կարող է կանանց նկատմամբ խտրական և դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հանգեցնել²:

Ազատազրկման վայրերը պատմականորեն կառուցվել և նախատեսված են եղել տղամարդկանց համար, այդ պատճառով դրանց ճարտարապետական կառուցվածքը, անվտանգության համակարգը հարմարեցված չեն կանանց՝ իրենց սեռով պայմանավորված առանձնահատկություններին:

Ամբողջ աշխարհում ազատազրկված կանանց շրջանում իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ ազատազրկված կանայք ավելի շատ են “պիտակավորվում”, վերջիններիս հասարակություն վերաինտեգրման գործընթացը ավելի դժվար է: Բացի այդ, ազատազրկված կանանց մոտ ավելի շատ են հոգեկան առողջության խնդիրներ առաջանում, քան տղամարդկանց մոտ: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում ազատազրկված կանանց 80%-ը հոգեկան առողջության տարբեր խնդիրներ է ունեցել: Ավելին՝ ազատազրկված կանայք ավելի շատ են հակված ինքնավնասումների:

Հաշվի առնելով կանանց՝ սեռով պայմանավորված առանձնահատկությունները՝ 2010 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից մշակվեց “Ազատազրկված կանանց նկատմամբ վերաբերմունքի և կանանց նկատմամբ այլընտրանքային պատժամիջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները” (այսուհետ Բանգկոկի կանոններ)³: Այդ կանոնները սահմանում են կանանց պահման պայմանների և վերջիններիս նկատմամբ վերաբերմունքի

¹ Office of the United Nations High Commissioner for Human Rights, 1994, http://www.euro.who.int/_data/assets/pdf_file/0004/76513/E92347.pdf

² Women in detention: a guide to gender-sensitive monitoring, Penal Reform International 2013, http://www.penalreform.org/wp-content/uploads/2013/06/Women-in-Detention-a-guide-to-gender-sensitive-monitoring_English_0.pdf

³ Վավերացվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 2010 թվականի դեկտեմբերի 10, A/RES/65/229

չափանիշներ, որոնք պետությունները պետք է ներդնեն և կիրառեն ազատագրկված կանանց պահման համար նախատեսված հաստատություններում:

Բանգկոկի կանոնները խրախուսում են պետություններին ներդնել կանանց համար այլընտրանքային պատիժների պրակտիկա՝ առաջարկելով պետություններին սահմանել «սեռի հատկանիշներով պայմանավորված առանձնահատուկ միջոցներ»՝ մինչդատական կալանքի և ազատագրվումը որպես պատիժ կիրառելու փոխարեն: Նման գործողությունների նպատակը կանանց բռնություններից զերծ պահելն է:

Օրինակ՝ շատ երկրների փորձը ցույց է տալիս, որ վերականգնողական արդարադատությունը կարող է շատ արդյունավետ լինել կանանց հասարակություն վերինտեգրելու համար:

Եւ խոշտանգումների Կանխարգելման Կոմիտեն ևս անդրադարձել է ազատագրկված կանանց պահման առանձնահատկություններին և սահմանել է համապատասխան չափանիշներ վերջիններիս համար: Կոմիտեն ընդունում է, որ Եվրոպայի Խորհրդի անդամ երկրներում ազատագրկված կանանց թիվը փոքր է, և կանայք պահվում են այնպիսի հաստատություններում, որոնք ի սկզբանե նախատեսված և հարմարեցված են եղել միայն տղամարդկանց համար, դրանք շատ հեռու են գտնվում կանանց հիմնական բնակավայրերից: Այս կապակցությամբ Կոմիտեն նաև ընդունում է, որ պետություններից ֆինանսական մեծ ռեսուրսներ են պահանջվում կառուցել նոր, կանանց համար հարմարեցված քրեակատարողական հիմնարկներ: Այս կապակցությամբ Կոմիտեն ընդգծում է նաև, որ առանձնահատուկ խնամք է անհրաժեշտ՝ ազատագրկված կանանց համար անվտանգ և պատշաճ պայմաններ ապահովելու համար:

Կոմիտեն ըստ այդմ ներկայացնում է մի քանի առանձնահատուկ խնդիրներ, որոնք պետությունները պետք է հասցեագրեն՝ ազատագրկված կանանց նկատմամբ պատշաճ վերաբերմունք ապահովելու համար:

Երկսեռ անձնակազմի առկայություն

Կոմիտեն ընդգծում է, որ երկսեռ անձնակազմի առկայությունն անհրաժեշտ է խոշտանգումները կանխարգելելու համար: Դրա շնորհիվ հնարավոր կլինի պահպանել հավասարակշռված ընդհանուր բարոյահոգեբանական մթնոլորտ: Սակայն պետք է հաշվի առնել, որ անձնական խուզարկությունները պետք է բացառապես իրականացվեն նույն սեռի անձանց կողմից:

Ցանկացած դեպքում կանայք պետք է առանձին պահվեն տղամարդկանցից և աշխատակիցների գերակշիռ մասը պետք է կանայք լինեն:

Կանայք պետք է հնարավորություն ունենան մասնակցել այն բոլոր միջոցառումներին և գործողություններին, որոնք նախատեսված են տղամարդկանց համար: Օրինակ՝ կանայք չպետք է զբաղվեն միայն կարով կամ ձեռագործությամբ, քանի որ դա է դիտարկվում նրանց վերաբերելի:

Բոլոր հնարավոր միջոցները պետք է ձեռնարկվեն հղի կանանց անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար, այդ թվում նաև սննդի կապակցությամբ՝ տրամադրելով բարձր կալորիականությամբ սնունդ, միրգ և բանջարեղեն:

Հիգիենա և առողջություն

Կոմիտեն ցանկանում է ընդգծել, որ կանանց համար պահանջվում է առանձնահատուկ հիգիենա՝ հասանելիություն լվացվելու և լողանալու պարագաներին:

Անհրաժեշտ է, որ բժշկական օգնությունն ու սպասարկումը տրամադրվի այն որակով, որը հասանելի է քրեակատարողական հիմնարկից դուրս: Մասնավորապես՝ ակնկալվում է, որ նրանց կարող է տրամադրվել կանանց համար հատուկ նախատեսված մասնագիտական օգնություն, այդ թվում նաև գինեկոլոգի ծառայություն: Ավելին՝ հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումները ևս պետք է կիրառվեն, օրինակ՝ կրծքի և արգանդի քաղցկեղը կանխելու համար պարբերական հետազոտությունների անցկացումը:

Որպես կանոն՝ մինչև ազատազրկումը բուժման կուրս սկսած կանայք պետք է հնարավորություն ունենան շարունակել իրենց բուժումը նաև ազատազրկման ժամանակ: Այս կապակցությամբ, պետք է երաշխավորել, որ համապատասխան դեղորայքը և բժշկական սարքավորումները հասանելի են նաև քրեակատարողական հիմնարկում⁴:

Կանանց նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու, մասնավորապես՝ ազատազրկումը որպես պատիժ կիրառելու դեպքում, պետք է անպայմանորեն հաշվի առնվեն մի շարք սկզբունքներ.

1. Կանաց ազատազրկումը պետք է կիրառվի որպես վերջին միջոց, այն դեպքում, երբ մնացած բոլոր այլընտրանքները հաշվի են առնվել և դրանք համարվել են անհամապատասխանելի կամ անօգտագործելի: Հարկ է կնոջ դեմ մեղադրանքը հաշվի առնել նրանց սոցիալական կարգավիճակի կոնտեքստում:
2. Առողջապահական ծառայությունը և այդ ոլորտի ծրագրերը պետք է առանձնահատուկ կերպով հասցեագրեն հոգեկան առողջության խնդիրները, ինչպես նաև թմրամիջոցների, էտոտրավմատիկ սթրեսի վերաբերյալ հարցերը:
3. Եթե ներգրավված են նաև երեխաներ, երեխայի լավագույն շահերը պետք է հաշվի առնվեն: Երեխայի լավագույն շահերի վրա հիմնված որոշումը պետք է կայացվի դատարանից և քրեակատարողական հիմնարկից անկախ ոլորտի մասնագիտացվածություն ունեցող կազմակերպության հետ խորհրդակցությամբ:
4. Կանանց տարբեր խմբերի՝ հղի կանայք, երեխաներ ունեցողներ՝ փոքր տարիքի կամ անչափահաս, առողջության վերաբերյալ անհատական ծրագիր կազմելիս պետք է հաշվի առնվեն վերջիններիս առանձնահատկությունները:
5. Ընտանիքից և համայնքից մեկուսացվելու դեպքում անվտանգության միջոցառումները և իրավական տարբեր հետևանքները կարող են վատթարացնել կանանց հոգեկան առողջությունը, էմոցիոնալ կեցությունը: Այդ իսկ պատճառով նրանց

⁴ The CPT standards “Substantive” sections of the CPT’s General Report, CPT/Inf/E (2002) 1-Rev. 2006, pp. 76-80

բուժսպասարկման պլանը պետք է ներառի համակողմանի և մանրամասն տեղեկատվություն, ներառյալ վերջիններիս սոցիալ-տնտեսական և կրթական անցյալը, առողջության և վնասվածքների պատմությունը, ներկա առողջական վիճակը և դրա գնահատման եզրակացությունը:

6. Պետք է խուսափել կոշտ քաղաքականությունից, հաշվի առնելով փոփոխվող աշխարհում անհատական կարիքների փոփոխությունը, որն էլ ընկած է մարդու իրավունքների պաշտպանության հիմքում:

□

Ակնկալվում է, որ զեկույցի յուրաքանչյուր օբյեկտիվ ընթերցող կկարողանա իր համար պատասխանել այն հարցին, թե որքանով են Հայաստանում ազատագրված կանանց պահման պայմանները վերջիններիս համար երաշխավորում իրենց առանձնահատկություններով պայմանավորված կարիքների ապահովումը:

Ակնկալում ենք նաև, որ զեկույցը ահագանգ կհնչեցնի որոշում կայացնողների համար՝ կանանց նկատմամբ ազատագրված ձևով պատիժ կիրառելու իրավական պահանջը վերանայելու և այլընտրանքային պատիժների կիրառման պրակտիկան խթանելու համար:

Կանայք անհամատեղելի են ազատագրված կանանց հետ
--

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկի կենսապայմանները

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկի տեղակայումն ու ճարտարապետաշինարարական կառուցվածքը

Աբովյան քրեակատարողական հիմնարկը (այսուհետ՝ ՔԿՀ) կանանց և անչափահասների համար Հայաստանի Հանրապետությունում նախատեսված միակ քրեակատարողական հիմնարկն է, որտեղ կանայք ազատազրկման են դատապարտվում հանրապետության բոլոր բնակավայրերից:

Քրեակատարողական հիմնարկը Երևանի կենտրոնից գտնվում է 25 կմ հեռավորության վրա: ՔԿՀ-ին ամենամոտ 3 բնակավայրերն են Մայակովսկի և Բալախովիտ գյուղերը, որոնք գտնվում են առավելագույնը 3 կմ հեռավորության վրա, ինչպես նաև Աբովյան քաղաքը (մոտ 5 կմ): Աբովյան ՔԿՀ-ին հարակից տարածքում հասարակական տրանսպորտի կանգառներ չկան, ինչը վկայում է այն մասին, որ կանոնավոր աշխատող հասարակական տրանսպորտ այդ ուղղությամբ նախատեսված չէ:

Քրեակատարողական հիմնարկին հարող տարածքը բնակեցված չէ և հիմնարկին հատկացված ամբողջ տարածքը՝ լայնությամբ և երկարությամբ, ճանապարհից առանձնացված է բետոնե պարսպով:

Ընդհանուր տարածքն ունի 30 հեկտար մակերես, որից 7.2 հա պատկանում է քրեակատարողական հիմնակին, իսկ մնացածը հատկացվել է “Դատապարտյալների հիմնադրամ” ՊՈԱԿ-ին:

Քրեակատարողական հիմնարկին հատկացված ընդհանուր տարածքից 4 հա համարվում է մշակելի տարածք, իսկ մնացած մասը զբաղեցված է տարբեր շինություններով՝ վարչական շենք, անչափահասների պահման շենք, կանանց պահման շենք: Այդ շենքերը ևս իրարից առանձնացված են բետոնե պարիսպներով: Շենքերի մուտքի մոտ՝ մոտ 5 մետր հեռավորության վրա, կա պահակակետ, որի աջ և ձախ կողմերում համապատասխան դարպասներով նախատեսված է կանանց և անչափահասների պահման վայր մուտքերը:

Պահակակետի դռները ավտոմատացված են՝ բացվում/փակվում են պահակների կողմից՝ դրսից համապատասխան զանգը ստանալուց հետո: Սահմանված կարգի համաձայն այդ հատվածով ռեժիմային գոտի մուտք գործելիս անհրաժեշտ է հանձնել արգելված իրերը (հեռախոս, դեղամիջոց, կտրող-ծակող իրեր, զենք):

Կանանց համար առանձնացված տարածքում կա նաև փոքրիկ մատուռ, կրոնական անկյուն, որն իրենից ներկայացնում է բաց զանգակատուն, խաչքար, մոմ դնելու հատված և խճանկարով նկարազարդված պատ:

Քրեակատարողական հիմնարկի դարպասներից մինչև կանանց և անչափահասների պահման համար առանձնացված տարածքն իրենից ներկայացնում է այգի, որը մշակվում է կին դատապարտյալների կողմից: Շինությունների ետևի մասը նախատեսված է ֆիզիկական մարզանքի համար:

Ընդհանուր տարածքը մաքուր է, ասֆալտապատ. թե՛ հիմնարկի, թե՛ ամբողջ տարածքի արտաքին կահավորանքը չեն վկայում, որ այն ծառայում է որպես ազատազրկման վայր:

“Մինչև վարչական մասնաշենքը հասնելը, սկսած դարպասներից և բակից, սովորական անցորդը չի կարող հասկանալ, որ այդ հաստատությունը ազատազրկման վայր է:

Առաջին անգամ “Աբովյան” քրեակատարողական հիմնարկ այցելած դիտորդի կարծիք

Քրեակատարողական հիմնարկի շենքը, ընդհանուր պայմանները

Արժվյան քրեակատարողական հիմնարկը կառուցվել է 1957 թվականին: Շենքը ի սկզբանե նախատեսված է եղել անչափահաս դատապարտյալների պատիժը կրելու համար՝ ճարտարապետաշինարարական ընդհանուր կանոններով և կանանց առանձնահատկություններից բխող հարմարեցված պայմաններ նախատեսված չեն եղել:

Կառուցումից հետո հիմնարկի ներքին վերանորոգման հիմնական աշխատանքները կատարվել են միայն 2012-2013 թվականներին: Շինարարական նյութերը ձեռք են բերվել քրեակատարողական վարչության կողմից, վերանորոգման բուն աշխատանքներն իրականացվել են ՔԿՀ աշխատակիցների և դատապարտյալների մասնակցությամբ: Այս վերանորոգման շրջանակներում կանանց համար նախատեսված կացարանները որոշակի փոփոխության են ենթարկվել. եթե նախկինում մեկ ընդհանուր կացարանում ապրում էին երկհարկանի մահճակալներով կահավորված սենյակում, ապա վերանորոգումից հետո ընդհանուր մեծ կացարանները կիսվել են միջնապատով և ներկայումս կան 6 կացարաններ⁵:

Կացարանների ներսում զուգարաններ կամ լոգասենյակներ չկան:

Կացարաններն իրենց վերանորոգմամբ, ներքին հարդարմամբ, չափսերով հնարավոր չէ դասակարգել ընդհանուր ստանդարտներով: Դրանք իրարից տարբերվում են բնակիչների քանակով, կահավորանքով, ջեռուցման հնարավորություններով, չափսերով:

Երկրորդ հարկում տեղակայված են չորս կացարանները, առանձին սենյակները մինչև երեք տարեկան երեխա ունեցող մայրերի համար, զուգարանը, հսկիչների սենյակը:

Ողջ ՔԿՀ-ում գործում է մեկ լոգարան՝ 5 լոգախցիկներով, որը տեղակայված է առաջին հարկում: Լոգարանին մոտ գտնվում է նաև լվացքատունը, որտեղ տեղադրված է լվացքի մեքենան և չորացուցիչը: ՔԿՀ նկուղային հարկում գտնվում է դատապարտյալների անձնական իրերի պահեստասենյակը: Վերջինս իրենից ներկայացնում է կոսմետիկ վերանորոգում չունեցող մոտ 25 քմ մակերես ունեցող տարածք, որի մուտքը կողպվում է և բացվում է վարչակազմի կողմից սահմանված կոնկրետ ժամերի: Այստեղ բնական լույս չի ներթափանցում և պատուհաններ չկան:

Սենյակում՝ պատերի մեջ, բացված են մոտ 30/60 սմ² անվանական տարբերակում ունեցող անցքեր, որոնք ծառայում են որպես կանանց անձնական իրերի, մասնավորապես՝ սննդի և սննդի պատրաստման իրերի՝ կաթսա և այլն, պահման դարակներ: Անցք-դարակները դռներ չունեն, դրանք չեն կողպվում, այլ ծածկված են վարագույրով, այդ պատճառով էլ նշանակվել է վճարովի հիմունքներով աշխատող պատասխանատու անձ, ով հսկում է, որպեսզի անձնական իրերի կորուստ չլինի:

Անձնական իրերի պահեստասենյակին կից գտնվում է վարսահարդարման և ծխելու սենյակը: Սենյակներում լուսամուտներ չկան և բնական լույս չի ներթափանցում: Ծխելու համար նախատեսված հատվածում՝ դիմացից դեպի դուրս, օդափոխման համար բացված են անցքեր: Դատապարտյալները, սակայն, ծխասենյակից չեն օգտվում, քանի որ՝ նախ շատ ցուրտ է, ջեռուցում այնտեղ չկա, բացի այդ, լուսամուտ չկա և հնարավոր չէ այն օդափոխել:

Վարսավիրանոցի համար հատվածն առնանցացված է պոլիէթիլենային անգույն վարագույրով: Մրահում կա մեկ մեծ հայելի և մի քանի ջարդած աթոռներ:

Այս սրահից օգտվելու հնարավորությունները ձմռանը սահմանափակված են՝ ջեռուցման բացակայության պատճառով:

Ազատ ժամանցի համար կացարանային մասնաշենքի առաջին հարկի միջանցքում նախատեսված է կինոսրահ, որտեղ դրված է մեկ փոքր հեռուստացույց և 16 աթոռներ:

⁵ Կացարան են անվանվում դատապարտյալ կանանց կեցության այն սենյակները, որտեղ տեղադրված են վեց և ավելի մահճակալներ և որտեղ միաժամանակ ապրում են վեց և ավելի կանայք:

Դատապարտյալները այնտեղ սերիալներ և այլ ծրագրեր են դիտում: Հեռուստացույցից ոչ բոլորն են օգտվում, քանի որ յուրաքանչյուրը իր նախընտրած ծրագիրը կամ ֆիլմն է ցանկանում դիտել, իսկ մեկ հեռուստացույցը դրա համար բավարար չէ:

Խնդիրը նրանում է, որ 100-ից ավել դատապարտյալի համար 16 աթոռը շատ քիչ է և կարող է վեճերի պատճառ դառնալ: Հեռուստացույցի կողքին դրված է մեկ սեղան, որի վրա դատապարտյալներից մեկը ծաղիկների համար նախատեսված զամբյուղների ձևավորմամբ է զբաղվում:

«Կինոգալ կա, բայց չի բավարարում, քանի որ մեկ հեռուստացույց է ու 10-15 հոգի նստում նայում են: Կարող է ես եմ ուրիշ բան եմ ուզում նայել»:

Ազատագրված կին

Քրեակատարողական հիմնարկի շենքն ունի գետնափոր նկուղային հարկ և երկու վերգետնյա հարկեր, որի առաջին հարկում տեղակայված են երկու կացարաններ, լոգարանը, լվացքատունը, բժշկի և սոցիալ-հոգեբանի սենյակները, հարմարեցված խոհանոցը՝ «սննդի տաքացման սենյակը»:

Կացարանային շենքից դուրս գտնվում են տեսակցությունների սենյակները, գրադարանը, պահեստները, գինեկոլոգի և ատամնաբուծի սենյակը: Վերջիններս կողպվում են բժշկի կողմից: Ավելին՝ կացարանային շենքից դեպի ատամնաբուծի և գինեկոլոգի սենյակ կարելի է գնալ ռեժիմային գոտու պետի հատուկ թույլտվությամբ:

Կարճատև տեսակցության համար նախատեսված սենյակների թիվը 2-ն է, իսկ երկարատև տեսակցության համար նախատեսված սենյակների թիվը՝ 4-ը:

Տեսակցության սենյակների անմիջապես հարևանությամբ գտնվում է հանձնույնների հանձնման/ստացման սենյակը, որտեղ պատուհանի մի ծայրից՝ դրսից հանձնում, իսկ մյուս ծայրից աշխատողը ընդունում, ստուգում և այնուհետև ապրանքները հանձնում է դատապարտյալներին:

ՔՀԿ հիմնական մասնաշենքի աջ կողմում, մոտ 100 մետր հեռավորության վրա, գտնվում է մեկհարկանի պահեստային մասնաշենքը՝ մոտ 300քմ մակերեսով: Այս տարածքում առանձնացված են սննդի մեծ և փոքր, ինչպես նաև տնտեսական ապրանքների պահեստասենյակները: Պահեստասենյակները կոսմետիկ վերանորոգում չունեն, բետոնե հատակի և պատերի վրա նկատվում էին խոնավության հետքեր, առավել ևս, երբ սննդի փոքր պահեստասենյակ բնական լույս չի ներթափանցում: Սննդի փոքր սենյակում (որտեղ լույս չի թափանցում) ամբողջ երկարությամբ ձգվող երկաթե ձողերի վրա ամրացված են փայտե դարակներ: Այստեղ պահվում է ընդեղենը՝ ձավարեղեն, լոբի և այլն, ինչպես նաև ձեթ, տոմատ, խտացրած կաթ, մսի պահածո, շաքար, յուղ:

Սննդի երկրորդ պահեստում առանձնացված են 3 ենթասենյակներ, որտեղ, ըստ նշանակության, պահվում են տարբեր տեսակի սննդամթերքներ: Օրինակ՝ թթու, այլ բանջարեղեն՝ կարտոֆիլ, կաղամբ, բազուկ, սոխ, գազար, որոնք ուղղակի լցված են հատակին: Այս մեծ սենյակում առանձնացված է նաև մոտ 8քմ մակերես ունեցող սառնարան, որտեղ պահվում են կարագը, միսը, պանիրը:

Երրորդ պահեստասենյակը նախատեսված է տնտեսական ապրանքների համար: Այստեղ պատի ամբողջ երկարությամբ և լայնությամբ տարածվող դարակների վրա շարված են տնտեսական օճառ, լվացքի փոշի՝ նախատեսված ավտոմատ և ձեռքով լվացքի համար, կոշիկ, ներքնագգեստ, գիշերանոց, խալաթ, սննդի ամաններ, բաժակներ, գթալներ, ատամները լվանալու մածուկ, ատամները լվանալու խոզանակ, անկողնային պարագաներ՝ սպիտակեղեն, վերմակ, ներքնակ, բարձ, կանացի հիգիենայի պարագաներ:

Հիմնական կացարանային շենքից դուրս՝ հարակից շենքում, գտնվում են նաև խոհանոցը և ճաշարանը, որոնք միմյանցից բաժանվում են քարե պատով:

Խոհանոցի համար առանձնացված տարածքը համեմատաբար ավելի փոքր է, քան ճաշարանինը: Խոհանոցային հատվածը օգտագործվում է սննդի պատրաստման համար: Վերջինիս համար նախատեսված էին երկու նոր ինքնաջեռուցվող կաթսաներ: Ներսի հատվածում դրված էր նաև երկու գազօջախ, մի քանի փոքր կաթսաներ, մեկ սառնարան և լվացարան՝ անկյունային հատվածում:

Ճաշարանի հատվածում տեղադրված են մոտ 10 սեղաններ, որոնք հնարավորություն են ընձեռում միաժամանակ ճաշել մոտ 70 ւանձի: Սա է պատճառը, որ ազատագրված կանայք ճաշում են երկու հերթով:

Ճաշարանի պատին փակցված էր օրվա ճաշատեսակի ցանկն ու շաբաթվա կերակրատեսակները:

Ուսումնասիրության պահին քրեակատարողական հիմնարկում պատիժ կրում էր 136 կին: Դիտարկման պահին ՔԿՀ-ում եղել են 5 երեխաներ, որոնցից 3-ը գտնվում էին կացարանային մասնաշենքում, 2-ը՝ մեկուսարանում պահվող կանանց հետ:

Ազատագրված կանանց պատժի կրման կենսապայմանները

Ապրելու տարածք և բնակեցում

Խոշտանգումների կանխարգելման դեմ Կոմիտեի ստանդարտներ/ CPT standards

Անձնական տարածքի բացակայության և դատապարտյալների միջև կոդոպուտների հավանական ռիսկի պատճառով Խոշտանգումների Կանխարգելման Կոմիտեն ոչ բավարար է համարում կացարանային տիպի սենյակների առկայությունը բանտերում⁶: Ավելին՝ 25քմ մակերես ունեցող սենյակում պետք է բնակվեն ոչ ավել, քան 6 մարդ, իսկ 35 կամ 60քմ մակերես ունեցող սենյակներում համապատասխանաբար ոչ ավել, քան 6 և 12 մարդ:

Այնուամենայնիվ, Խոշտանգումների Կանխարգելման Կոմիտեն նման պայմանները համարում է “ապրելու համար սահմանափակ հնարավորություններով սենյակ”:

Կոմիտեն որպես բացառություն է սահմանում հանրակացարանային տիպի սենյակների օգտագործումն այն դեպքում, եթե մեկ դատապարտյալին բաժին ընկնող տարածքը 3,5-3քմ պակաս չէ և այդ կացարանն օգտագործվում է միայն քնելու համար, իսկ ազատ ժամանակը տնօրինելու համար սահմանված են այլ պայմաններ:

Ի տարբերություն տղամարդկանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկների, որտեղ ազատագրվածներն ապրում են խցերում, “Աբովյան” քրեակատարողական հիմնարկում ազատագրված կանայք ապրում են ընդհանուր սենյակներում, որոնք ստացել են կացարան անունը: Կացարանն իրենից ներկայացնում է 90-190 մակերեսով ընդհանուր տարածք, որտեղ ապրում են 11-80 մարդ⁷: Կացարաններում ազատագրվածներին հատկացված անհատական տարածքը փոքր է՝ մոտ 3քմ, իսկ առանձին դեպքերում՝ մոտ 2քմ տարածք: Ընդհանուր առմամբ, կացարանային տիպի սենյակների

⁶ CPT standards regarding prisoners, The prevention of torture in Europe, Brochure no 6, page 14, http://www.apr.ch/content/files_res/APT%20CPT%206%20En.pdf

⁷ Կացարաններում բնակեցման և տարբերությունների դրսևորումներին անդրադառնում ենք սույն զեկույցի առանձին բաժիններում:

առկայության պարագայում անձնական մեկուսացվածության հնարավորությունը (right to privacy) չի ապահովվում: Ընդհանուր համատեղ կեցության համար նախատեսված կացարաններից բացի, տարբերակված են նորածին և անչափահաս երեխաների համար նախատեսված սենյակները, ինչպես նաև առողջական տարբեր խնդիրներ ունեցող ազատազրկվածների սենյակները:

Կացարանները նախատեսված են հիմնականում և՛ քնի, և՛ հանգստի համար, ինչով պայմանավորված դրանցում թույլատրվում են տեղադրել միայն մահճակալներ և անձնական իրերը պահելու համար նախատեսված կողապահարաններ՝ տեղադրված յուրաքանչյուրի մահճակալին կից:

Մահճակալները տեղադրված են միմյանց զուգահեռ, և դրանց միջև տարածությունը կազմում է կողապահարանի զբաղեցրած տարածքը, ընդհանուր՝ մոտ 40սմ լայնությամբ:

Սահմանված կարգի համաձայն յուրաքանչյուր կացարանի պատին փակցվում են դատապարտյալների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ՔԿՀ թույլատրվող իրերի վերաբերյալ ցուցակները:

Ընդհանուր օգտագործման սանհանգույցը տեղակայված է կացարաններից դուրս: Կացարանների ներսում լվացվելու հնարավորություն չկա:

Կացարանների ջեռուցում ու օդափոխություն

Խոշտանգումների կանխարգելման դեմ Կոմիտեի ստանդարտներ

Խոշտանգումների Կանխարգելման Կոմիտեն սենյակների ջերմաստիճանի համար հատուկ սահմանված ստանդարտներ չունի: Այնուամենայնիվ, Կոմիտեն ընդգծում է, որ պետք է գործի ջեռուցման այնպիսի համակարգ, որը կհամապատասխանի ձմռան եղանակային պայմաններին:

Միևնույն ժամանակ, Կոմիտեն ընդծում է, որ ջեռուցման համակարգին զուգահեռ պետք է գոյություն ունենա նաև օդափոխման համակարգ:

“Աբովյան” քրեկատարողական հիմնարկը չունի ջեռուցման և օդափոխման ընդհանուր համակարգ: Կացարանների օդափոխությունն իրականացվում է պատուհանների միջոցով, սակայն ամռանն այս տարբերակը ևս սահմանափակվում է՝ շոգի պատճառով: Ցանկության և հնարավորության դեպքում, այնուամենայնիվ, դատապարտյալները իրենց միջոցներով կարող են օդափոխիչներ ձեռք բերել և տեղադրել կացարաններում:

Ձմռանը խցի ջերմաստիճանն ապահովվում է գազի վառարանների միջոցով, որոնք միացվում են առավոտյան ժամը 7:00-ին և միացված մնում մինչև կեսգիշեր՝ 23:00: Բացառություն են կազմում “հիվանդների” և մինչև 3 տարեկան երեխաներ ունեցողների սենյակը, որտեղ տաքացվում է էլեկտրական սալիկների միջոցով: Նշված հանգամանքով պայմանավորված՝ այս սենյակներում ջերմաստիճանը համեմատաբար ցածր է:

Բոլոր կացարաններում տեղադրվում է մեկական վառարան՝ անկախ կացարանի չափերից, ինչի հետևանքով կացարաններում ջերմաստիճանը համաչափորեն չի տարածվում և դատապարտյալները, ում մահճակալները վառարանից ավելի հեռու են դրված, բողոքում են ցրտից: Այս առումով բացառություն է ամենամեծ կացարանը, որտեղ տեղադրված է երկու գազի վառարան:

Վառարանները սկսում են միացնել հոկտեմբերի կեսերին, անջատվում՝ մարտին, և այդ ժամանակահատվածում կացարաններում ջերմաստիճանը հասնում է մոտ 19°C:

Սենյակների ջերմաստիճանի ապահովման հետ կապված լրացուցիչ խնդիր է առաջանում, երբ կենտրոնացված համակարգով օդափոխման համակարգի բացակայության պատճառով ձմռանն օդափոխությունն իրականացվում է պատուհանների միջոցով: Այս դեպքում սենյակների ջերմաստիճանը նվազում է:

Կան այնպիսի սենյակներ, որտեղ ընդհանրապես չի ջեռուցվում, օրինակ ծխարանը, ինչը ձմռան ամիսներին ջեռուցման պատճառով չի օգտագործվում: Չի ջեռուցվում նաև հեռուստացույցի դիտման սենյակը:

- «Ցուրտ չեմ զգացել, ձմեռը, երբ շատ ցուրտ էր, բերել էին լրացուցիչ տաքացնող սարքեր»:
- «Ջեռուցումը միացնում են իբր հոկտեմբեր ամսից, բայց իրականում ձմռանն են միացնում: Ձմռանը շատ ցուրտ էր՝ գիշերները բոլոր տաքացնող սարքերը անջատում էին: Միշտ անջատվել է, ամեն գիշեր»:
- «Մեր կացարանում ջեռուցումը ոչ միշտ է միացված: Մարդիկ կան պատուհանները բացում են ու լավ ցուրտ է լինում: Չես կարա ասես. «մրսում եմ փակի», որովհետև ինքն էլ կարող է շոգում է ու չի ուզում փակի: Էս ել կոնֆլիկտների թեմա է»:

Ազատագրված կին

Լուսավորություն

Խոշտանգումների կանխարգելման դեմ Կոմիտեի ստանդարտներ

Ըստ Կոմիտեի՝ սենյակները պետք է ապահովված լինեն բնական լույսով, և դատապարտյալները պետք է լուսամուտների ծածկոցները ինքնուրույն բացելու և փակելու հնարավորություն ունենան⁸:

ՔԿՀ-ում առկա կացարանների լուսավորությունը ցերեկային ժամերին ապահովվում է պատուհանների միջոցով, իսկ երեկոյան ժամերին և գիշերը՝ էլեկտրականության միջոցով/արհեստական լուսավորությամբ: Արհեստական լույսի հնարավորությունը հասանելի է առավոտյան ժամը 6-ից մինչև երեկոյան 23:00-ը: Ելնելով անվտանգության նկատառումներից՝ գիշերային ժամերին կացարաններում լույսերից մեկը, համեմատաբար ավելի թույլը, միշտ վառված է լինում: Այս հանգամանքը խնդիր է առաջացնում համեմատաբար մեծ կացարանային տիպի սենյակներում, որտեղ լույսերը տեղադրված են ամբողջ առաստաղի երկարությամբ, ինչի հետևանքով ավելի ուժեղ լուսավորություն է ճառագում, ինչը քնելիս խանգարում է:

Էլեկտրականությունից հիմնականում օգտվում են խոհանոցում ճաշի պատրաստման ժամերին: Լույսի անջատիչները գտնվում են կացարանների ներսում և հնարավորություն են տալիս դատապարտյալներին ինքնուրույն միացնել և անջատել լույսը: Գիշերային ժամերին սակայն էլեկտրական հոսանքը մեխանիկորեն անջատվում է ադմինիստրացիայի կողմից:

⁸ Rod Morgan and Malcolm D. Evans, The Prevention of Torture in Europe CPT Standards regarding Prisoners, Brochure no 6, page 16, http://www.apt.ch/content/files_res/APT%20CPT%206%20En.pdf

Կահավորանք և վերանորոգում

Խոշտանգումների կանխարգելման դեմ Կոմիտեի ստանդարտներ

Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն առաջարկում է պետություններին համարժեք քայլեր ձեռնարկել համապատասխան սենյակային կահավորանքով դատապարտյալներին ապահովելու համար, մասնավորապես՝ յուրաքանչյուր դատապարտյալ պետք է ապահովված լինի սեղանով, աթոռով և կողապահարանով⁹:

Կացարանային տիպի բոլոր սենյակները հիմնականում ունեն նույն կահավորումը՝ մեկ կամ ավելի շարքերով զուգահեռաբար դասավորված երկաթյա մահճակալներ և կողապահարաններ: Կացարաններում սեղաններ և աթոռներ չկան, թեև արգելվում է ցերեկային ժամերին մահճակալներին նստել:

Բացառություն են կազմում այն սենյակները, որտեղ կան նաև հեռուստացույցներ, հագուսի լրացուցիչ պահարաններ:

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկում կացարանների և սենյակների կոսմետիկ վերանորոգումը գրեթե նույնն է՝ հատակը բետոնից, պատերը սվաղած՝ պատված ներկով:

Կան սակայն կացարաններ, որտեղ հատակը պատված է լինյուլումով, գցված է գորգ, պատուհաններին վարագույրներ են կախված և դռները պլաստիկ են: Միևնույն ժամանակ նկատվել են նաև սենյակներ, որտեղ պատուհանների շրջանակների և պատի միջև ճեղքեր են բացված, առանձին սենյակներում խոնավության հետքեր են նկատվել՝ բորբոսի տեսքով:

Կացարանները աչքի են ընկել իրենց մաքրությամբ, ինչը դրսևորվել է ինչպես ընդհանուր ներքին պայմաններում, այնպես էլ դատապարտյալների մահճակալների հարակից տարածքում և դիտարկված անկողիններում: Ընդ որում, յուրաքանչյուր դատապարտյալ պատասխանատու է իր մահճակալի տարածքի մաքրության համար:

«Էստեղ մաքրությունը գիտեք ո՞նց է, ամեն մարդ իր մահճակալի տակը՝ իր «պլաշադկեն» մաքրում է: Պլաշադկեն էդ իր տարածքն է: Իսկ դրանից դուրս մաքրում են աշխատողները, ովքեր ստեղի դատապարտյալներ են»:

Ազատագրված կին

⁹ CPT/Inf (96) 1, կետ 96

Բնակեցում

Խոշտանգումների կանխարգելման դեմ Կոմիտեի ստանդարտներ

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից կացարաններում կանանց բնակեցնելու հստակ սահմանված և բոլորին վերաբերելի միասնական կարգ չի գործում, տարածված չէ նաև իրենց ընտրությամբ այս կամ այն կացարան տեղափոխվելու պրակտիկան: Կան դեպքեր, երբ ՔԿՀ պետն է որոշում, թե դատապարտյալներից ով որ կացարանում պետք է տեղավորվի և որ մահճակալը նրան հատկացվի: Դեպքեր կան, երբ կարող են ընտրել կոնկրետ կացարան և տեղավորվել այնտեղ: Սրանք բացառություններ են, իսկ հիմնականում կանանց բնակեցումը կացարաններում կատարվում է վարչակազմի կողմից՝ պատահական սկզբունքով, այսինքն՝ ՔԿՀ մուտք գործած դատապարտյալին տրվում է այդ պահին ազատ մահճակալներից մեկը: Այս դեպքում էլ անպայման հաշվի է առնվում նաև տվյալ կացարանում արդեն բնակվողների կարծիքը և համաձայնությունը: Օրինակ, եթե տվյալ կացարանը վերանորոգվել է պատիժը կրող մի քանի դատապարտյալների կողմից, վարչակազմը պարտադիր հաշվի է առնում վերանորոգումը իրականացրած դատապարտյալների կարծիքը:

Բնակեցման միասնական կարգի բացակայության հետևանքով կան կացարաններ, որտեղ ապրում է մինչև 80 մարդ, իսկ կացարաններ կան, որտեղ ապրում են մինչև 11 մարդ:

«Տեղերը հատուկ ընտրվում են անձնակազմի կողմից, և կան կացարաններ, որտեղ բնակվում են «հնարավորության տեր» դատապարտյալները»:

«Եթե իրենք են վերանորոգել, ուրեմն իրենց ուզելով պետք է բնակեցվի, ու էնպիսի մարդիկ զան, որ կարողանան իրենց պես ապրել, աղքատ չլինեն: Բայց վերանորոգված կացարանի տարբերությունը որպեսզի շատ չզգացվի, մի քանի աղքատ էլ են բերել, որ ցույց տան, թե իբր ամեն մեկը կարող է բնակվել այնտեղ»:

«Մահճակալների ընտրության հարցը այսպես է, նոր եկած մարդը քնում է ազատ մահճակալին, կոնկրետ կանոն ու չափանիշ չկա, թե ով որտեղ է քնում»:

Ազատագրված կանայք

Կան կացարաններ, որտեղ թեև տեղադրված են ազատ մահճակալներ, այունամենայնիվ, բնակիչների ավելի մեծ թիվ ունեցող կացարաններից կանայք այնտեղ չեն տեղափոխվում:

Բացի այդ, միասնական կարգի բացակայության հետևանքով կացարաններում բնակեցման ոչ միատեսակ մոտեցում է նկատվում՝ կարիքների անտեսման կամ հատուկ վերաբերմունքի արժանացնելու առումով: Օրինակ՝ նույն կացարանում բնակվում են թե՛ հոգեական առողջության հետ խնդիրներ ունեցող անձինք, թե՛ անձինք, ովքեր լրացուցիչ խնամք են պահանջում՝ միզում են և կարիքները հոգում անկողնում:

Մյուս պարագայում “հիվանդ” համարվող կանայք առանձնացված են մի սենյակում, որը հենց այդպես էլ կոչվում է “հիվանդների սենյակ” կամ պայմանականորեն «ծերերի սենյակ», մեկ այլ դեպքում՝ բնակիչներն առանձնացված են իրենց ազգային պատկանելիության հիմքով, սոցիալական հնարավորություններով:

Տարբերակում են այն կանանց, որոնք պիտակավորվել են որպես “թռած¹⁰”, և մնացած դատապարտյալները խուսափում են նրանց հետ նույն սենյակում մնալ: Բացի այդ, առանձնացվել են նաև սեռական փոքրամասնություն համարվող կանայք, ովքեր, ըստ դատապարտյալների ներքին շրջանառված տեղեկատվության, կենակցել են մեկ ուրիշի հետ, որի մասին մյուս դատապարտյալները տեղեկանալուց հետո պահանջել են վարչակազմից այդ կնոջը հեռացնել իրենց սենյակից:

1. Կացարանային սենյակների նկարագրություն

Կացարան N 1, առաջին հարկ (26 մահճակալ, 25 բնակիչ)

Գտնվում է կացարանային մասնաշենքի առաջին հարկում և ընդհանուր մակերեսը շուրջ 90 քառակուսի մետր է/երկարությունը մոտ 15 մ, լայնությունը մոտ 6 մ/:

Կացարանի ընդհանուր հատակը բետոնից էր, բացառությամբ առանձնացված հատվածի, որտեղ լինյալում էր գցված:

Պատերը սվաղապատ են, ներկով (краска) պատված:

Կացարանում բնական լույսի ներթափանցման հնարավորությունը ապահովված էր 4 մեծ լուսամուտների միջոցով, վարագույրներ չկային, չկային նաև ճաղավանդակներ:

Էլեկտրական վառարանը տեղադրված է կացարանի մեջտեղի հատվածում:

Յուրաքանչյուր մահճակալի կողքը դրված էր կողապահարան, որոնք միմյանցից տարբերվում են իրենց ձևով, որակով, մաշվածությամբ ու արտաքին տեսքով, քանի որ ձեռք են բերվել անձնական միջոցների հաշվին: Բոլոր պահարանները նույն չափսերի են՝ 45x35 սմ:

Նկատելի էր նաև ոչ միանման անկողնային սպիտակեղեն, որը վկայում է, որ դրանք ձեռք են բերվել դատապարտյալների կողմից:

Քննարկվող կացարանի դատապարտյալները կացարանի ներսում հեռուստացույց դիտելու հնարավորություն ունեն, չնայած հեռուստացույցի չափսերը փոքր են՝ 25x35սմ, կար նաև ռադիոընդունիչ, որը սակայն, ինչպես նշեցին, հաճախ չի միացվում:

Կացարանի ներսում մահճակալների մեծ մասը դասավորված էին գուգահեռաբար, իսկ մոտ վեցը՝ սենյակի վերնի ակյունում: Այդ հատվածը ամբողջ սենյակից առանձնացված էր, քանի որ ընդհանուր հատակից գտնվում էր մոտ 20 սմ բարձրության վրա: Այստեղ տեղադրված էին նաև պահարաններ, հատակին լինյալում էր գցված:

Կացարանում դատապարտյալների իրավունքներն ու պարտականությունները փակցված չէին, փակցված չէր նաև թույլատրված իրերի ցանկը: Կացարանում չկային ազդանշանային կոճակներ հսկիչներին կանչելու համար: Առկա չէր նաև օդափոխության համակարգ, փոխարենը օգտագործվում են կացարանի լուսամուտները:

¹⁰ “ԹՌԱԾ” մականունը համարվում է քրեակատարողական հիմնարկներում ազտագրկված անձանց բնորոշող անուն, որոնք դատապարտյալների վերաբերյալ տեղեկությունները հաղորդում են վարչակազմին: Այդ մականունը ստացած անձինք մյուսների կողմից հարգանքի չեն արժանանում և մյուս դատապարտյալները խուսափում են վերջիններիս հետ նույն սենյակում ապրել:

Կացարան N 2, VIP, առաջին հարկ (11 մահճակալ, 9 բնակիչ)

Գտնվում է հիմնարկի առաջին հարկում և ունի մոտ 80քմ մակերես: Վերջինս էականորեն տարբերվում էր առաջին կացարանից:

Ներքին հարդարումն ու վերանորոգման վիճակը ավելի նոր է և ժամանակակից՝ պատերի գույնը և ներկի որակը տարբերվում էր մյուս կացարաններից: Հատակն ամբողջությամբ պատված է լինոլեումով:

Կացարանում հագուստը կախելու համար առանձնացված էր տարածք, որը ծածկված էր շտոռերով, բացի այդ, առանձնացված էր նաև հագուստը փոխելու տարածք՝ պատված փայտյա ծալովի դռներով: Կային նաև թվով 4՝ 6 դարակներ ունեցող պլաստիկ պահարաններ, որոնք չափսերով ավելի մեծ էին, քան սովորական կողապահարանները: Այս պահարանները դատապարտյալները իրենց միջոցներով են ձեռք բերել: Բացի այդ, այս կացարանում ևս մահճակալների կողքին տեղադրված էին կողապահարաններ, որոնք նոր էին, փայտյա:

Մենյակն ուներ 2 պատուհան, որոնք ծածկված էին վարագույրներով, և նույն վարագույրների կտորից ծածկոցներով պատված էր նաև մահճակալների անկողինը:

Մահճակալների դիմացի պատին փակցված էր LED ֆիրմայի բարակ էկրանով 60x90 հեռուստացույց և DVD տեսանվագարկիչ, որը գնվել էր դատապարտյալների միջոցներով:

Այս կացարանում էլեկտրական լամպերը մշտապես վառ էին, քանի որ մուգ գույնի վարագույներից լույսը դժվարությամբ էր ներս թափանցում:

Կացարան N 3, երկրորդ հարկ (68 մահճակալ և 68 բնակիչ)

Գտնվում է երկրորդ հարկում և ունի մոտ 100քմ մակերես: Այս կացարանը ձևափոխվել է 2012 թվականի վերանորոգումից հետո:

Նախկինում մահճակալները եղել են երկհարկանի, վերանորոգման ժամանակ դրանք ձևափոխվել են և տեղադրվել են առանձին մահճակալներ:

Մահճակալները դասավորված էին չորս շարքով, զուգահեռ տեղադրված մահճակալների միջև կողապահարանի զբաղեցրած տարածությունը մոտ 65 սմ է:

Հատակը բետոնից էր, պատերը վերանորոգված չէին, ներկը՝ խունացած, անկյուններում տեղ-տեղ նկատվում էր բորբոս:

Այստեղ ևս կողապահարանները տարբերվում էին իրենց որակով, ձևով, մաշվածությամբ:

Այս կացարանում հիմնականում 43-45 տարեկան և ավել կանայք էին բնակվում:

Այստեղ մահճակալներն ավելի հին են, ժանգոտված:

Այս կացարանում տարածքի և դատապարտյալների թվի հարաբերակցության ակնհայտ խնդիր կար: Մահճակալների միջև փոքր մակերեսը նեղություն է պատճառում և հաճախ տարաձայնությունների, վեճերի առիթ դառնում: Նման դեպքերից խուսափելու համար հատակին մահճակալի դիրքի վերաբերյալ նշումներ են արվում, որպեսզի դրանց տեղաշարժ չլինի: Տեղաշարժի արդյունքում հնարավոր է ներխուժել կողքի դատապարտյալի տարածք, ինչը ներքին կանոններով արգելվում է և բացասական հետևանքներ է առաջացնում:

Կացարանի լուսավորությունը բավարար է, լուսամուտներին վարագույրներ և վանդակաձաղեր չկան: Ձմռանը պատուհաններից քամի է փչում, որի պատճառով տարաձայնություններ են առաջանում, թե ում մահճակալը տեղադրվի պատուհանի մոտ:

Կացարանի պատերից մեկն ապակյա է, թափանցիկ, որը բաժանում է կացարանը հսկիչների սենյակից: Արդյունքում, կացարանի ներսում դատապարտյալների գործողություններն ամբողջությամբ տեսանելի են հսկիչներին:

Յուրաքանչյուր դատապարտյալի հագուստի մաշվածությունն ու վիճակը տարբերվում էր:

«Առաջին հայցքից այնպիսի տպավորություն էր, կարծես բոլոր դատապարտյալների հագուստը նոր էր, բոլորը հետևում են իրենց տեսքին: Կային նույնիսկ դատապարտյալներ, ովքեր հագել էին բարձրակրունկ կոշիկներ»:

«Սակայն այդ ընդհանուր մթնոլորտում կային կանայք, ում տեսքը խնամված չէր, հագել էին մաշված շորեր: Պատճառն այն է, որ այդ կանայք՝ ի տարբերություն այլոց, չունեին համապատասխան միջոցներ կամ օգնություն դրսից»:

Մոնիթորինգին մասնակցած դիտորդ

Կացարան N 4, երկսենյականոց, երկրորդ հարկ (20 մահճակալ 19 բնակիչ)

Այս կացարանը բաղկացած է երկու ենթասենյակներից: Ենթասենյակներից մեկը համեմատաբար ավելի լավ պայմաններում է գտնվում, քան մյուսը, նոր վերանորոգված է և ավելի ընդարձակ: Առաջին սենյակում տեղադրված են 15 մահճակալներ՝ միատեսակ ծածկոցներով հարդարված, որոնց կողքերին դրված էին համեմատաբար նոր կողապահարաններ: Սենյակի հատակը ծածկված էր լինոլիումով: Առկա էր մեկ հեռուստացույց և երկու էլեկտրական վառարաններ:

Այս ենթասենյակից մուտք է բացվում երկրորդ ենթասենյակ, որն առանձնացված է վարագույրով:

Սենյակի մակերեսը մոտ 18 քառակուսի մետր է՝ նախատեսված 5 մահճակալների համար: Առկա է մեկ պահարան և երկու հեռուստացույց: Երկրորդ հեռուստացույցի առկայությունը բացատրվում է այն հանգամանքով, որ այդտեղ պատիժ կրող ազգությամբ ռուս դատապարտյալները կարողանան ռուսական հեռուստաալիքներ դիտել:

Այս երկրորդ ենթասենյակում լուսավորությունը բավարար չէ, այդ պատճառով էլ լուսավորությունը ապահովվում է արհեստական լամպով:

Սենյակի բացասական կողմերից են խոնավությունն ու բավականին հին վերանորոգումը:

Կացարան N 5, հիվանդների սենյակ, երկրորդ հարկ (5 մահճակալ 5 բնակիչ)

Կացարանային տիպի սենյակներից բացի կան նաև սովորական սենյակներ, ինչպիսին է օրինակ՝ “Ծերերի սենյակը”:

Սենյակի մակերեսը 20 մ² է, որտեղ ապրում է 6 մարդ: Այս սենյակի բնակիչներն առանձնացվել են իրենց հիվանդությունների պատճառով, որոնցից 2-ը տառապում են փղախտով, 2-ը՝ շաքարախտով, մեկը հոդերի խնդիր ունի, իսկ մյուսը՝ պասիվ վիճակի տուբերկուլյոզ: Հատակը բետոնից է և ծածկված չէ լինոլիումով: Պատուհանի կողքերը քանդված են և անձրևներն ու քամին անընդհատ սենյակ են լցվում:

Զմուռնը սենյակը ջեռուցվում է ճաշի տաքացման համար նախատեսված փոքր էլեկտրական սալիկի միջոցով: Հիվանդ կանայք, ի տարբերություն մյուս

դատապարտյալների, իրենց ճաշը պատրաստում են այդ սենյակում, քանի որ ներքև իջնելը վերջիններիս համար դժվար է:

«Ամենավատը սակայն այն է, որ հիվանդները անհրաժեշտ դեղերը չեն ստանում, ինչքան դիմում են, իրենց մերժում են, ասում են դեղ չկա, չունենք ձեզ անհրաժեշտ դեղերը: Ցավերի մեջ եթե լինեն նույնիսկ, չեն սրսկում, քանի որ սպրիչներ չկան, դեղեր չկան»:

Կացարան N 6, մայր և երեխա, երկրորդ հարկ

Կացարանային տիպից տարբերվող սենյակ է համարվում նաև մինչև երեք տարեկան երեխաներ ունեցող կանանց սենյակը:

Սենյակը գտնվում է երկրորդ հարկում և ունի 12քմ տարածք:

Հատակը բետոնից է, մոտ 12 քառակուսի մետր, որի մի մասն է ծածկված լինոլիտով: Ինչպես կին դատապարտյալի, այնպես էլ երեխայի համար նախատեսված մահճակալը հին էր, որոնց անկողնային պարագաները անձնական էին՝ ստացված տնից: Պատերի որոշ հատվածների վրա նկատվել է խոնավություն:

Ելնելով երեխայի խնամքի առանձնահատկություններից՝ սենյակում առկա են եղել պահարան, կոդապահարան, երկու սեղան, երեք աթոռներ և գազօջախ՝ առանձին սնունդ պատրաստելու համար: Օդափոխությունը իրականացվում է լուսամուտը բացելու միջոցով:

Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ ոչ երեխայի, ոչ էլ մոր սնունդը չի առանձնացվում, միակ տարբերությունը այն է, որ երեխայի մորը տրվում է սննդի հումքը՝ ինքնուրույն ուտելիք պատրաստելու համար: Անհրաժեշտ սննդատեսակներն ու հիգիենայի պարագաները ստացվում են տնից՝ անձնական միջոցների հաշվին:

«Եթե չլիներ հարազատների աջակցությունը դրսից, ապա երեխան պարզապես սովից կմահանար»:

Խուց N 1

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կալանավորված կանանց համար նախատեսված խցերը գտնվում են առանձին մասնաշենքում՝ անչափահասների համար նախատեսված հատվածում: Բոլոր խցերը նույնանման են, նույն մակերեսով:

Ի տարբերություն կացարանների՝ խցերում մահճակալները երկհարկանի են: Ընդհանուր առմամբ խցերը առավելագույնս 10-12 քմ են, մինչդեռ կալանք կրում են 4-ից ավելի կանայք: Առաջին հայացքից նկատելի էր, որ պատերը փչած են, բայց խուցը ընդհանուր առմամբ վերանորոգված չէր: Դիտարկված 3 խցերից երկուսում նկատվել է հեռուստացույց, որոնք բերվել են դատապարտյալների հարազատների կողմից:

Յուրաքանչյուր խուց ունի իր սանհանգույցը, որոնք թեպետ մաքուր էին, սակայն վատ պայմաններում և վերանորոգման կարիք ունեին: Խցերից յուրաքանչյուրում առկա է լուսամուտ, որից ներթափանցող լուսավորությունը բավարար է ցերեկային ժամերին ընթերցանության համար: Խցերի լուսամուտներին, ի տարբերություն կացարանային մասնաշենքի սենյակների լուսամուտների, ամրացված են վանդակաճաղեր:

Խցերում կան գազօջախ, սառնարան, պահարաններ՝ անձնական իրերը պահելու համար: Սառը ջուրը շուրջօրյա է, իսկ տաք ջուր ունենում են շաբաթվա մեջ երկու անգամ՝ լողանալու օրերին:

Կալանք կրող դատապարտյալները անհրաժեշտ հիգիենայի միջոցները ձեռք են բերում իրենց միջոցներով, չնայած այն հանգամանքին, որ ՔԿՀ-ն պետք է օրենքով սահմանված կարգով ազատությունից զրկված անձանց ապահովի հիգիենայի համար անհրաժեշտ պարագաներով: Նմանապես, կալանավորված կանայք կրում են իրենց անձնական հագուստը, մինչդեռ սահմանված կարգի համաձայն քրեակատարողական հիմնարկում պահվող անձինք պետք է կրեն ՔԿՀ կողմից տրամադրվող միասնական նմուշի հանդերձանք:

Խցերի դռների վրա փակցված են կալանավորված անձանց իրավունքներն ու պարտականությունները, ՔԿՀ թույլատրվող իրերի ցանկը:

Խցերում մշտական տաք ջրի բացակայությունը խնդիրներ է առաջացնում անձնական հիգիենայի պահպանման համար: Միևնույն ժամանակ, ՔԿՀ կողմից տրամադրվող հիգիենայի պարագաների անորակությունը կամ ոչ ժամանակին և ոչ բոլոր անհրաժեշտ պարագաները տրամադրելը լրացուցիչ հոգսեր է առաջացնում կալանավորվածների հարազատների համար, քանի որ անհրաժեշտ պարագաները ապահովվում են հենց նրանց կողմից: Այն հանգամանքը, որ ՔԿՀ-ն չի տրամադրում հեռուստացույց, սառնարան կամ այլ անհրաժեշտ պարագաներ, անհավասար պայմաններ է ստեղծում խցերի և կալանավորված անձանց համար, քանի որ ոչ բոլորն են կարողանում հեռուստացույց կամ սառնարան ձեռք բերել:

«Խցերում շատ տհաճ էին հատկապես երկաթյա ծանր ու մի քանի կողպեքներով ու շղթաներով փակվող դռները. հենց միայն դռան տեսքից ծանր տպավորություն է ստացվում»:

Մոնիթորինգին մասնակցած դիտորդ

Պատժախուց

Արժվյան քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված կանանց համար նախատեսված է մեկ պատժախուց: Վերջինս դիտարկման պահին դատարկ է եղել և, ինչպես նշել է ադմինիստրացիան, պատժախուց տեղափոխելու տույժ հաճախ չի կիրառվում:

Պատժախցում առկա է չափերով բավականին փոքր, վանդակապատ լուսամուտ: Բնական լուսավորությունը կարդալու համար բավարար չէ և արհեստական լուսավորության կարիք կար: Նախատեսված երկու մահճակալները ցերեկները փակված են լինում՝ ամրացված պատին, բացվում են միայն քնելու ժամին: Ներսում կա նաև միայն մեկ աթոռ և մեկ սեղան: Պատժախցի ներսում առանձին պատով առանձնացված է սանհանգույցը, որը վերանորոգման կարիք ունի:

Կարանտինային սենյակ

Սահմանված կարգի համաձայն կալանավորվածներին պահելու վայր փոխադրված անձը բժշկական զննություն անցնելու և կալանավորվածներին պահելու վայրի պայմաններին ծանոթանալու նպատակով մինչև 7 օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունք, որտեղ նա գտնվում է կալանքի տակ պահելու համար սահմանված պայմաններում:

Արժվյան ՔԿՀ Կարանտինային սենյակը տեղակայված է անչափահասների պահման մասնաշենքում: Այն նույնպես երկհարկանի անկողիններով, 4 հոգու համար նախատեսված սենյակ է, որի մակերեսը մոտ 16 քմ է: Առկա է մեկ լուսամուտ՝ 1,5/1մ, 20սմ չափերով, որը բացվում էր ներսից, սեղան, 2 երկար աթոռներ, բոլորը ամրացված հատակին, 1 պահարան, հագուստի պահարան: Սանհանգույցը գտնվում է բաժանմունքի ներսում, որը սակայն

հիգիենայի և վերանորոգման տեսանկյունից բարելավման կարիքն ունի: Մենյակի առաստաղի որոշ հատվածներ բորբոսնած են, զգացվել է խոնավություն:

Պատին փակցված են դատապարտյալի իրավունքների ու պարտականությունների ցանկն ու բանտի ներքին կանոնները:

ԿԱՊԸ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

Խոշտանգումների կանխարգելման դեմ Կոմիտեի ստանդարտներ

Կոմիտեն ընդունում է, որ արտաքին աշխարհի և դատապարտյալների միջև հաղորդակցությունը պետք է վերահսկվի: Այնուամենայնիվ, վերահսկողությունը պետք է լինի համաչափ և ընդհանուր առմամբ այցելությունները պետք է լինեն այնքան “ազատ” և հանգիստ, որքան հնարավոր է:

Դատապարտյալները պետք է հնարավորություն ունենան ապահովելու ընտանիքի անդամների հետ իրենց հաղորդակցությունը և այդ կապակցությամբ քրեակատարողական համակարգի վարչակազմը պետք է առավելագույնս ապահովի այդ հաղորդակցությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ դրա սահմանափակումը պայմանավորված է անվտանգության խնդիրներով: Այն դեպքերում, երբ վարչակազմը մերժում է դատապարտյալների տեսակցությունը կոնկրետ անձանց հետ անվտանգության հիմքով, այդ մերժումները պետք է ժամանակ առ ժամանակ վերանայվեն:

Ինչ վերաբերում է հեռախոսի օգտագործմանը, Կոմիտեն խստորեն քննադատում է հեռախոսների օգտագործման բացարձակ արգելքը:

Այցելությունների և հեռախոսազանգերի վերաբերյալ կանոնը պետք է ճկուն լինի՝ առավել ևս հեռավոր բնակավայրեր ընտանիքների համար: Այդ կատեգորիային պատկանող դատապարտյալները պետք է հնարավորություն ունենան օգտագործել հեռախոսը՝ որպես այցելությունների փոխարինող:

Այցերի համար նախատեսված սենյակները պետք է բավարար չափով հանգիստ և լավ կահավորված լինեն, որպեսզի հնարավորություն ընձեռեն դատապարտյալներին իրենց այցելուների հետ խոսելու առանց “բղավելու”: Մա մասնավորապես վերաբերում է այն դեպքերին, երբ դատապարտյալը ֆիզիկապես գտնվում է ապակե պատի մի կողմում, իսկ այցելուն՝ մյուս կողմում:

Երկարատև այցելությունների համար նախատեսված սենյակները պետք է հնարավորինս նման լինեն տան պայմաններին:

Կոմիտեն մեծ ուշադրություն է դարձնում դատապարտյալների անձնական կյանքի և տեղեկատվության գաղտնիությանը: Մասնավորապես՝ առողջության պատմության, առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է պաշտպանվի:

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկում արտաքին աշխարհի հետ կապն ապահովվում է երակարատև և կարճաև տեսակցությունների, հեռախոսակապի, արտաքին աշխարհից տեղեկատվությունն ապահովող տեխնիկայի միջոցների՝ հեռուստացույց, ռադիո, օրաթերթերի միջոցով:

Սահմանված կարգի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը համապատասխան պայմաններ է ստեղծում դատապարտյալի՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու համար: Ինչի համար հիմնարկում ստեղծվում են

կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու պայմաններ¹¹:

Ընդ որում, տեսակցությունները պետք է այնպես կազմակերպվեն, որ ազատագրվածները կարողանան պահպանել և զարգացնել կապն ընտանիքի հետ՝ հնարավորինս բնական կերպով:

Ավելին, դատապաշտպանի հետ ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի տեսակցությունները կարող են տեղի ունենալ այնպիսի պայմաններում, որոնք իրավապահ մարմինների պաշտոնատար անձին թույլ են տալիս տեսնել, բայց չլսել խոսակցությունը¹²:

Կապն ընտանիքի հետ

Ներպետական օրենսդրության համաձայն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու համար ուղղիչ հիմնարկներում ստեղծվում են երկարատև և կարճատև տեսակցության սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:

Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ տեսակցությունների տրամադրման կարգը որոշվում է հաշվի առնելով կատարված հանցագործության ծանրության աստիճանն ու պատժի կրման համապատասխան ռեժիմը:

Խիստ ռեժիմով պատիժ կրող կանայք նշել են, որ տարեկան իրենք ունենում են չորս տեսակցության հնարավորություն՝ մեկ երկարատև և երեք կարճատև: Երկարատև տեսակցությունների ժամանակ հիմնականում գալիս են ընտանիքի անդամները՝ ծնողներ, քույրեր և եղբայրներ, առկայության և ցանկության դեպքում նաև ամուսինները: Դատապարտյալը սեփական ցանկությամբ նախապես նշում է իր մոտ մշտական այցելուների անունները, իսկ եթե չնախատեսված այցելու է լինում, տեսակցության համար դիմում է պետք ներկայացնել պետին:

Խնդիրը, սակայն, նրանում է, որ դատապարտված կանանց մոտ իրենց ամուսինները ավելի քիչ են գալիս, քան դատապարտված տղամարդկանց մոտ այցելում են իրենց կանայք: Սա կարելի է բացատրել տարբեր հանգամանքներով, մասնավորապես, ՔԿՀ-ում պատիժ կրող կանանց մեծամասնությունը ամուսնալուծված է և միայնակ մայր, ընդ որում, ամուսնալուծությունը տեղի է ունեցել մինչև դատապարտվելը: Մինչև դատապարտվելը ամուսնության մեջ լինելու դեպքում արդեն, ամուսնալուծությունը տեղի է ունենում դատապարտվելուց անմիջապես հետո:

Իսկ այն ընտանիքները, որոնք պահպանում են ամուսնական կարգավիճակը, այնուհանդերձ, ամուսինները խուսափում են տեսակցություններից, ամոթի կամ այլ պատճառներով:

Տեսակցությունների հետ կապված արձանագրվել են այլ խնդիրներ ևս: Այսպես, օրենքով հստակ տարբերակում չի տրվում դատապարտված կանանց՝ իրենց երեք տարեկանից բարձր, անչափահաս երեխաներին տեսակցելու հարցում: Վերջիններիս հետ տեսակցությունները կատարվում են ընդհանուր կարգով: Հավելյալ տեսակցությունը թողնվում է ՔԿՀ պետի հայեցողությանը:

Դիտարկման ընթացքում կին դատապարտյալների հետ զրույցներից պարզ է դարձել, որ կանայք իրենց երեխաների հետ շփվել և կապ պահպանել չեն կարողանում, տարեկան մեկ կամ երկու անգամ տրվող երկարատև տեսակցությունը բավականին քիչ է 6-7 կամ ավելի բարձր տարիքի երեխայի հետ կապը պահելու համար: Արդյունքում, կանայք կորցնում են իրենց երեխաների հետ կապը:

¹¹ ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք

¹² Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու, ՄՄԿ-ի Գլխավոր Ասամբլեա, 43/173 բանաձև

«Շատ կցանկանայի երկարատև տեսակցությունները մայր դատապարտյալների համար շատ լինեին, ես շատ եմ նեղվում, որ երեխային քիչ եմ տեսնում: Իմ տղան 6 տարեկան է, եթե հիմա կապը չպահեմ, հաճախ չտեսնեմ, կկորցնեմ կապը որդուս հետ»:

Ազատագրված կին

Մեկ այլ խնդիր արձանագրվել է դատապարտված ամուսինների տեսակցության հարցում, այն դեպքում, երբ ամուսիններից յուրաքանչյուրը ազատագրված ձևով պատիժ է կրում քրեակատարողական տարբեր հիմնարկներում: Օրենքով արգելված է դատապարտյալների շփումն ու տեսակցությունները: Սակայն ամուսնացած, ընտանեկան կարգավիճակում գտնվող դատապարտված ամուսինների պարագայում հարթությունը փոխվում է, քանի որ վերջիններս առաջին հերթին ամուսիններ են, ում տեսակցության իրավունքը սահմանված է օրենքով, և հետո նոր իրենց կարգավիճակով դատապարտյալ:

«Ես օրինակ նեղվում եմ, որ իմ տեսակցությունը քիչ է, անցյալ տարի երկարատև տեսակցությունը պահել էի, որ ծննդյանս օրը ընտանիքս գար, բայց երկարատևի համար չթողեցին երեք չափահաս անձիք մտնեն, ես ուզում էի, որ մայրս, հայրս ու քույրս մտնեին, բայց չթողեցին, շատ էի նեղվել»:

Ազատագրված կին

Կարճատև տեսակցություններ

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկում ազատագրված կանանց կարճատև տեսակցությունների համար սահմանված օրեր չկան: Յուրաքանչյուր ազատագրված կին ամսվա մեջ մեկ կարճատև տեսակցության հնարավորություն ունի¹³:

Կարճատև տեսակցության համար նախատեսված են երկու նոր վերանորոգված սենյակներ, որոնք միմյանցից տարբերվում են չափսերով, ըստ այդմ՝ տեղադրված են երկու և յոթ սեղաններ՝ համապատասխան աթոռներով:

Կարճատև տեսակցությունների ժամանակ սակայն, պայմանավորված սենյակների տեխնիկական հնարավորություններով, տեսակցությունների գաղտնիությունը չի ապահովվում:

Մեղանների միջև տարածություններ մոտ 60սմ է, և միաժամանակ կարճատև տեսակցություն ունենալու դեպքում զրույցները կարող են հասանելի լինել միմյանց:

¹³ Ձեռքակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենք, Հոդված 15՝ Կալանավորված անձին մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ:

Քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92՝ Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ կարճատև տեսակցություն տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև չորս ժամ տևողությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Համատեղ բնակվելու իրավունքով և միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Երկարատև տեսակցություն տրամադրվում է նաև դատապարտյալի հետ ամուսնության մեջ չգտնվող այն անձի հետ, որի հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա: Դատապարտյալի խնդրանքով երկարատև տեսակցությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կարող է փոխարինվել կարճատև տեսակցությամբ:

Բացի այդ, կարճատև տեսակցություններն ընթանում են հսկիչների հսկողության ներքո, ովքեր գտնվում են կամ սենյակի ներսում կամ միջանցքում:

Առաջին տեսակցության սենյակի դուռը տեսակցությունների ժամանակ միշտ բաց է, քանի որ դուռն ապակե հատված կամ բացվող փոքր անցք չունի, որտեղից հնարավոր կլինի հսկել տեսակցությունների ընթացքը: Բացի այդ, սենյակի չափսերի պատճառով սենյակում գտնվելիս հսկիչը կարող է ամբողջությամբ տեղեկանալ ընթացող զրույցի բովանդակությանը:

Երկարատև տեսակցություններ

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկում դատապարտյալների երկարատև տեսակցությունների համար սահմանված են օրեր, որոնցով սահմանված է տեսակցությունների հերթականությունը:

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ երկարատև տեսակցությունից մեկ տարվա ընթացքում օգտվում է ազատագրված կանանց մոտ 25%-ը կամ ավելի քիչ, ում այցելում են կամ ամուսինները կամ երեխաները:

Հատկանշական է, որ հիմնականում այցելում են նույն մարդկանց:

Երկարատև տեսակցությունների համար նախատեսված են երեք սենյակներ, որոնք գտնվում են ռեժիմային գոտու սկզբնամասում՝ երկրորդ հարկում:

Սենյակների չափսերը, կահավորանքն ու վերանորոգումը միանման է: Սենյակներում տեղադրված է մեկ երկտեղանոց մահճակալ, բազմոց, սեղան, աթոռներ: Երեխաների համար սակայն առանձնացված մահճակալ չկա, ինչի պատճառով երեխաների հետ տեսակցությունների դեպքում վերջիններս քնում են բազմոցի վրա: Տեսակցությունների ժամանակ ՔԿՀ-ն թեև տրամադրում է անկողնային պարագաներ, այնուամենայնիվ, ազատագրվածներն ու նրանց այցելուները գերադասում են օգտագործել իրենց անկողնային պարագաները:

Սենյակների ներսում ներկառուցված է նաև զուգարան և լոգարան: Առանձնացված է նաև խոհանոցի հատվածը, որտեղ տեղադրված է լվացարան, սակայն սնունդ պատրաստելու համար գազօձախ կամ էլեկտրական սալիկ չկա, չկա նաև սառնարան:

Սենյակների ջեռուցումը, ջրամատակարարումը միացվում է միայն տեսակցությունների օրերին՝ նախապես:

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկում երկարատև տեսակցություններ առհասարակ քիչ են տեղի ունենում կլին դատապարտյալների հետ՝ ի տարբերություն տղամարդկանց քրեակատարողական հիմնարկների: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ դատապարտվելուց հետո կանանց ընտանեկան կապերը թուլանում են, և ինչ-ինչ պատճառներով ամուսինները իրենց կանանց ՔԿՀ տեսակցելը ոչ նորմալ երևույթ են համարում: Ինչով պայմանավորված էլ երկարատև տեսակցությունների սենյակները գրեթե միշտ ազատ են լինում:

Տեսակցությունների Հսկողություն

Դիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ հսկիչների կողմից հսկվում են նաև կարճատև տեսակցությունները:

«Պետք է ներկա լինենք և հետևենք, որ վեճ, կոիվ չլինի: Երբեմն արգելված իրեր ենք գտնում: Պետք է անպայման ներկա լինեն, սակայն հաճախ թողնում են տեսակցությունը առանց հսկման, որպեսզի մասնակցեն այլ դատապարտյալների խուզարկության բայց հետո հետ են գալիս»:

Հեռախոսագրույցների ժամանակ նույնպես հսկիչները ներկա են լինում: Նրանց խոսքերով նախկինում ընդամենը երկու հեռախոս է եղել և հսկելը շատ ավելի հեշտ է եղել: Ներկայումս հեռախոսների թիվը 6-ն է և բոլոր խոսակցությունները հսկելը անհնար է դառնում:

«Առաջ երկու հեռախոս կար և հսկելը հեշտ էր, հիմա վեց հեռախոս է և բոլոր խոսակցությունները հսկելը անհնարին է դարձել, սակայն առանձնապես կարիք էլ չկա»:

ՔԿՀ վարչակազմ

Թերթեր, ամսագրեր

Դատապարտյալներից ոմանք նշել են, որ երկու ամիսը մեկ ՔԿՀ-ն թերթեր է բաժանում՝ «Իրավունք» թերթ կամ եկեղեցիական թերթեր:

Նախատեսված է հնարավորություն ամսագրեր վերցնել սոցիալ-հոգեբանական բաժնից, ընթերցել և կրկին վերադարձնել: Ընդհանուր առմամբ ՔԿՀ-ի թերթերն ու ամսագրերը հին են և չեն թարմացվում: Այլ լեզվով, օրինակ ռուսերեն թերթեր կամ ամսագրեր ընդհանրապես գոյություն չունեն, որպեսզի ռուսախոս դատապարտյալները կարողանան օգտվել:

«Մեր ամսագրերը շատ հին են, Ստալինի թվերի: Էդտեղից ավելի շատ հնություն ես իմանում, քան թե նորություն»:

Ազատագրկված կին

Հեռախոսային կապն արտաքին աշխարհի հետ

Ներպետական օրենսդրության համաձայն՝ կապի միջոցներից, այդ թվում՝ հեռախոսակապից, օգտվելու կարգը և քանակը սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգերով:

Ըստ այդմ, Աբովյան ՔԿՀ-ի հանրակացարանային մասնաշենքի առաջին և երկրորդ հարկերում առկա են տաքսոֆոններ, որոնցից կին դատապարտյալները ազատ են օգտվելու հարցում: Հեռախոսների ընդհանուր թիվը 7-ն է՝ տեղադրված կացարաններից դուրս, ինչը սակայն 130 կնոջ համար քիչ է և հերթերի ու վեճերի առիթ է հանդիսանում:

Հեռախոսից օգտվելու համար անհրաժեշտ քարտը արժե 1000 դրամ: Վերջինս հնարավորություն է տալիս քաղաքային հեռախոսահամարների հետ խոսել մոտ 200 րոպե, բջջային հեռախոսահամարներին՝ զանգահարելիս՝ մոտ 50 րոպե և այլ մարզեր ու Լեռնային Ղարաբաղ զանգելու համար 20 րոպե: Տաքսոֆոնից հնարավոր է օգտվել ժամը 8-00-ից մինչև 23-00-ն: Ռուսաստանի Դաշնություն այդ քարտով կարող են խոսել 12 րոպե ընդամենը: Դատապարտյալներից, սակայն, նշել են, որ իրենց համար թանկ է այդ գինը և դժվարությամբ են քարտ ձեռք բերում: Քարտերը հնարավոր է ձեռք բերել ՔԿՀ-ին կից կրպակից:

Որոշ դատապարտյալներ նշել են, որ հեռախոսով խոսելիս հսկիչները հսկողություն են իրականացնում, ինչը կաշկանդում է դատապարտյալներին:

Բջջային հեռախոսները ինչպես բոլոր ՔԿՀ-ներում, այստեղ ևս արգելված են: Դրանց առկայության կամ բացակայության վերաբերյալ հակասական պատասխաններ են ստացվել:

«Բջջային հեռախոսներ էլ կան, ուղղակի ով որ ունի իրեն չեն զննում»:

«Էստեղ գաղտնի հեռախոս պահելն ու օգտագործելը հնարավոր չէ, քանի որ «ինֆորմատորները» շատ են»:

Ազատագրկված կին

Նամակագրություն

Խոշտանգումների կանխարգելման դեմ Կոմիտեի ստանդարտներ

Խոշտանգումների Կանխարգելման Կոմիտեն սահմանում է, որ քրեակատարողական հիմնարկները պետք է դատապարտյալներին նոթատետրեր, մատիտներ և նամականիշներ տրամադրեն, որպեսզի վերջիններս նամակներ գրելու հնարավորություն ունենան: Կոմիտեն ընդգծում է, որ դատապարտյալների նամակները պետք է միայն զննության ենթարկվեն և ոչ թե ընթերցվեն քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից: Այնուամենայնիվ, եթե առաջացել է նամակները կարդալու խիստ անհրաժեշտություն, ապա այն պետք է իրականացվի տվյալ դատապարտյալի ներկայությամբ¹⁴:

ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն՝ նամակագրություն իրականացվում է ուղղիչ հիմնարկի վարչակազմի միջոցով և առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով:

Այնուհանդերձ դատապարտյալները նշել են, որ իրենց նամակները ներքին, բովանդակային զննության նույնպես ենթարկվում են:

«Նամակներ կարողանում են ազատորեն ուղարկել, բայց բովանդակությունը կարդում նոր են ուղարկում: Տեղի է ունենում նամակի նախ արտաքին զննություն, հետո նաև բովանդակությանն են հրապանցիկ ծանոթանում»:

«Նամակներ ստանալու և ուղարկելու իրավունքը չի սահմանափակվում վարչակազմի կողմից: Վարչակազմը տրամադրում է թուղթը, սակայն կա ծրարի ու նամականիշի խնդիր: Ծրար տալ պարտավոր են, սակայն եթե իմանում են, որ տանից կարող են ուղարկել, չեն տալիս»:

Մոնիթորինգ իրականացրած դիտորդ

Նամակագրության հնարավորությունից սակայն ոչ բոլոր դատապարտյալներն են օգտվում, նախընտրում են ընտանիքի և հարազատների հետ հեռախոսով շփվել:

Դատապարտյալների խոսքերով մեկ այլ խնդիր վերաբերվում է նամակագրության համար անհրաժեշտ թղթերին ու ծրարին: Վարչակազմը միայն թուղթ է տրամադրում, իսկ ծրար ու նամականիշ ձեռք բերելն ինքնուրույն դժվար է:

Սանիտարահիգիենիկ պայմաններ

¹⁴ Rod Morgan and Malcome D. Evans, The prevention of Torture in Europe CPT Standards regarding Prisoners, Brochure No 6, page 23-24, available at http://www.ap.t.ch/content/files_res/APT%20CPT%206%20En.pdf

Խոշտանգումների կանխարգելման դեմ Կոմիտեի ստանդարտներ

Խոշտանգումների Կանխարգելման Կոմիտեն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում հիզենիային և սահմանում է, որ “համապատասխան սանհանգույցի հասանելիությունը և հիզենիայի ապահովման միջոցները մարդու համար անհրաժեշտ միջավայրի էական բաղադրիչներն են”: Դատապարտյալները պետք է հասանելիություն ունենան լոգանքի համար. Ցանկալի է, որ մշտական հոսող ջուրը հասանելի լինի սենյակներում: Միաժամանակ, Կոմիտեն, հղում կատարելով Եվրոպական բանտային կանոններին, նշում է, որ “շաբաթական մեկ անգամ լոգանքը նվազագույն պայմանն է, որը պետք է պահպանվի: Բացի այդ, շաբաթական երկու անգամ տաք ջրին հասանելիությունը պետք է ապահովվի:

Կոմիտեն սահմանում է նաև, որ դատապարտյալներին պետք է տրամադրվեն մաքուր անկողնային պարագաներ և անձնական հիգիենայի ապահովման այլ միջոցներ, ինչպիսիք են օձառը, ատամի խոզանակը, ատամի մածուկը և այլն: Կոմիտեն չորս գիշերը մեկ անկողնային պարագաները փոխելը գնահատում է ոչ բավարար, որ բոլոր այն դեպքերում, երբ քրեակատարողական հիմնարկը չի լվանում դատապարտյալների հագուստը, ապա դատապարտյալները պետք է հնարավորություն ունենան ինքնուրույն լվանալու և չորացնելու իրենց հագուստը: Միևնույն ժամանակ, դատապարտյալներին պետք է նյութեր տրամադրվեն իրենց սենյակները մաքրելու համար:

Ներպետական օրենսդրության համաձայն՝ դատապարտյալն ապահովվում է առողջության պահպանման համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պայմաններով¹⁵:

Նմանապես, ձերբակալված և կալանավորված անձը պետք է հնարավորություն ունենա մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում բավարարել իր սանիտարահիգիենիկ պահանջները: Նրա անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները սահմանվում են քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգով:

“Արժվյան” քրեակատարողական հիմնարկում կանանց առանձնահատկությունից բխող հիգենիայի պայմանների ապահովման համար հնարավորությունները սակայն սահմանափակ են:

Չնայած օրենսդրական պահանջներին՝ դատապարտյալների խոսքերով ՔԿՀ-ի կողմից տրամադրվող անկողնային պարագաները բավականին անորակ են, բացի այդ, սպիտակ, ինչը շուտ է կեղտոտվում, իսկ ՔԿՀ պայմաններում դժվար է միշտ սպիտակ պահել ու հեշտությամբ լվանալ: Դրա համար նախընտրում են օգտագործել տնից բերված գունավոր անկողնային պարագաները:

Սահմանված կանոնի համաձայն՝ դատապարտյալն ապահովվում է միասնական նմուշի հագուստով՝ ըստ տարվա եղանակի, կլիմայական պայմանների, ինչպես նաև՝ հաշվի առնելով նրա սեռը: Սակայն, դիտարկումների համաձայն, կանայք կրում էին իրենց անձնական հագուստը, նրանցից ոչ ոք չէր կրում ՔԿՀ-ի կողմից տրամադրված հագուստը: Վերջիններս նշում էին, որ հագուստ նույնպես ուղարկում են իրենց տնից:

¹⁵ ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք, հոդված 54

Անձնական հիգիենիայի ապահովման հնարավորություններ

Լոգանք և կանացի հիգիենիայի պահպանման հնարավորություն

“Աբվոյան” քրեակատարողական հիմնարկում լոգանքի համար նախատեսվում է շաբաթը երկու օր: Ավելին՝ որոշ դատապարտյալներ, ովքեր աշխատում են դրսում, օրինակ խոգապահությամբ են զբաղված, հնարավորություն ունեն ամեն օր լողանալ: Լոգանքի լրացուցիչ հնարավորություն է տրվում նաև տեսակցություններից առաջ, որի համար պետք է նախապես զգուշացնել պատասխանատու աշխատակցին: Վերջինս կազմում է համապատասխան ցուցակ, որտեղ սահմանվում է դատապարտյալների լոգանք ընդունելու հերթականությունը: Յուրաքանչյուր դատապարտյալի տրվում է լոգանքի 15-20 րոպե: Այդ ժամանակահատվածը կարող է օգտագործվել նաև անձնական շորերը լվալու համար:

Լոգանքի համար լոգասենյակում առանձնացված են 5 խցիկներ, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է մեկ անձի լոգանքի համար և մյուսներից բաժանված է դռնով: Խցիկների ցնցուղները ավելի շուտ ծորակներ են՝ առանց ցնցուղի, ինչից ջուրը հոսում է շիթով: Ներսի հատակը սալիկապատ է, նոր վերանորոգված:

Լոգասենյակում շորերը և հիգիենիայի պարագաները դնելու կամ կախելու հնարավորություն չկա: Կանայք տոպրակների մեջ տեղավորում են իրենց հագուստը, պարագաները, որը դնում են լոգարանի հատակին: Չկա նաև առանձնացված հանդերձարահ և խցիկներից դուրս գալուց հետո հնարավոր է հագնվել լոգասենյակի ընդհանուր միջանցքում:

Անձնական հիգիենիայի ապահովման այլ հնարավորություններ

Ներքնագգեստի վանալու և կանացի վաճուճների համար հիմնականում օգտագործվում է գուգարանը: Այս դեպքում ևս ջուրը տաքացվում է սեփական միջոցներով՝ կամ խնդրելով կամ տաք ջրի դիմաց ծառայություն մատուցելով, օրինակ՝ ջրի դիմաց վաճառ անելու պայմանով:

1.1. Լվացք

“Աբվոյան” քրեակատարողական հիմնարկում առանձնացված է վաճառատուն, որտեղ առկա է մեկ թվայնացված (автомат) վաճառքի մեքենա և մեկ չորացնող մեքենա: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ դրանցից օգտվում են միայն անչափահաս երեխա ունեցող մայրերը և հիվանդները, որոնք չեն կարող ձեռքով վանալ իրենց հագուստը: Որոշ դեպքերում թույլատրվում է օգտվել նաև “առավելություններով օժտված դատապարտյալներին”, որոնց հագուստը գումարի դիմաց վանում են մյուս դատապարտյալները:

Տարբեր խմբերի հետ հարցազրույցները ցույց են տալիս, որ դատապարտյալներն իրենց անձնական հագուստը, անկողնային սպիտակեղենը վանում են հիմնականում ձեռքով. ամռանը՝ սառը ջրով, դրսում, իսկ ձմռանը՝ լոգարանում՝ լոգանքից անմիջապես հետո: Քանի որ լոգասենյակում վաճարաններ չկան, վաճառ անելիս վաճառքի անձնական տարաները տեղադրվում են հատակին և կքանստած տարբերակով վանում շորերը: Լոգանքի օրերից տարբերվող օրերին վաճառ անելու դեպքում ջուրը տաքացվում է սեփական միջոցներով՝ էլեկտրական թեյնիկներով, իսկ այն դատապարտյալները, ովքեր նման հնարավորություն չունեն, վանում են սառը ջրով:

Լվացքի համար ՔԿՀ-ն տրամադրում է տնտեսական օճառ /շագանակագույն օճառ/, իսկ սպիտակեցնող միջոցներ կամ լվացքի փոշի դատապարտյալները ձեռք են բերում սեփական միջոցներով:

Հարկ է նշել, որ քրեակատարողական վարչության կողմից ձեռք է բերվում միայն ավտոմատ լվացքի փոշի՝ ընդհանուր լվացք իրականացնելու համար՝ համապատասխան հագուստի կլիոգրամի հաշվարկով, ինչը վկայում է այն մասին, որ ձեռքով լվացք անելու դեպքում ավտոմատ լվացքի փոշին չի կարող տրամադրվել դատապարտյալներին անհատապես:

Լվացքը չորացնելու համար ձմռանը փոքրում են կացարաններում՝ իրենց մահճակալների վրա, իսկ ամռանը՝ դրսում: Դրսում լվացքը չորացնելու մասին վկայում էին դիտարկման պահին քրեակատարողական հիմնարկի կացարանային մասնաշենքի հարակից տարածքի տարբեր հատվածներում կապված պարանները և փոված լվացքը:

«Լվացքատանը դիտարկում անցկացնելու ընթացքում լվացք չէր արվում, իսկ լվացքի փոշի կամ այլ մաքրող հեղուկ կամ նյութ չի նկատվել»:

«Օրը մեջ մի դատապարտյալ կա, որը տաշտով գալիս ու կանչում է. «Լվա՛ցք», որից հետո նրանք, ովքեր լվացքի կարիք ունեն՝ գնում են լվացք անելու: Սովորաբար, լվացքը անում են 7-10 հոգանոց խմբերով»:

«Լվացքի հետ խնդիր չկա, սակայն լվացքի փոշի մեզ չեն տալիս: Ունենք մի հատ ավտոմատ և մի հատ կիսավտոմատ լվացքի մեքենաներ և մի հատ չորացնող մեքենա: Լվացքի համար տալիս են տաք ջուր, իսկ ամռանը լվացք ենք անում դրսում՝ սառը ջրով»:

«Լվացքի մեքենաներից չենք օգտվում, որովհետև նրանց մաքրությունը խիստ կասկածելի է: Լվացքը անում ենք սառը ջրով, ձեռքերով: Լվացքի հետ կապված միշտ խնդիրներ ենք ունենում, տաք ջուր շատ քիչ են տալիս՝ մեկ դույլ»:

«Շաբաթական երկու-երեք օր նախատեսված է լվացք անելու համար: Մեզ տալիս են մեկ դույլ գոլ ջուր: Ստիպված ինքներս ենք տաքացնում, մեր տանից բերած սեփական, թեյնիկներով»:

Ազատագրված կին

Խմելու ջուրն առանձնացված չէ և օգտագործվում է զուգարանի ծորակի ջուրը:

Զուգարան

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկում կացարանների ներսում զուգարաններ չկան: Զուգարանն ընդհանուր է՝ առանձնացված մեկ մեծ սենյակում, որտեղ սանհանգույցը բաժանված է 4 խցիկների: Ընդհանուր զուգարանից օգտվում է 140 կին: Նույն զուգարանի սենյակում միաժամանակ տեղադրված են երեք լվացարաններ, որոնք ծառայում են և որպես լվացվելու և որպես հագուստի և այլ շորերի վանալու, ինչպես նաև սննդամթերքի՝ միրգ, բանջարեղեն և այլն, ինչպես նաև սննդի համար օգտագործվող ափսեները լվանալու համար:

Զուգարանները թուրքական ոճի են, հին, բայց մաքուր: Զուգարանակոնքերից յուրաքանչյուրին կից գործում է ջրի բաք, որը սակայն, ըստ դատապարտյալների, լավ չի

աշխատում, հաճախ ստիպված են լինում ջուրը դույլերից օգտագործել: Դիտարկման պահին զուգարանում սպեցիֆիկ հոտ չի զգացվել:

Զուգարանի սենյակում առկա է մշտական սառը ջուր, սակայն տաք ջուր զուգարանում չկա:

Զուգարանների մաքրությունն իրականացվում է վարձատրվող աշխատակցի կողմից, ով դատապարտյալներից է:

Մաքրություն և ախտահանում

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ յուրաքանչյուր ամիս քրեակատարողական հիմնարկում իրականացվում է միջատների դեմ ախտահանման միջոցառումներ:

Ընդհանուր կարգով մաքրություն է իրականացվում նաև լոգարանում և զուգարանում: Սակայն յուրաքանչյուր դատապարտյալ ինքնուրույն է մաքրում իր մահճակալի հարակից տարածքը: Իսկ Ընդհանուր օգտագործման հատվածները մաքրում են հատուկ աշխատակիցները՝ համապատասխան վարձատրության դիմաց:

Խնդիրը նրանում է, որ ՔԿՀ ընդհանուր ախտահանում հաճախակի չի իրականացվում: Ախտահանում իրականացվում է միայն ըստ անհրաժեշտության:

Հիգիենիկ պարագաների տրամադրում

Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալներին տրվող սննդի, հիգիենիկ պարագաների և հագուստի չափաբաժիններն ու նորմերը նախատեսված են ՀՀ Կառավարության 2003 թ. հոկտեմբերի 10-ի թիվ 413-Ն որոշմամբ՝ ”ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին”: Չնայած գոյություն ունեցող նորմատիվներին, պրակտիկայում դրանց իրացվելիության և դատապարտյալներին հասանելիության հարցը խնդրի առարկա է հանդիսանում և բազում հարցեր առաջացնում:

Մասնավորապես, ՔԿՀ հիմնարկում տրամադրվող սննդի, հիգիենիկ պարագաների և հագուստի չափաբաժինների մասին դատապարտյալների և ադմինիստրացիայի կողմից ստացվել են միմյանց հակասող տեղեկություններ:

Ադմինիստրացիայից նշել են, որ յուրաքանչյուր դատապարտյալ ստանում է իրեն հասանելիքը, անկախ այն հանգամանքից օգտագործում է, թե՛ ոչ: Ընդ որում, նախատեսված պարագաները դատապարտյալներին բաժանվում են ամսվա կտրվածքով: Այնուհանդերձ, յուրաքանչյուր ամիս սահմանված պարագաները դատապարտյալներին տրամադրել հնարավոր չի լինում, նախատեսված իրերը ճիշտ ժամանակին ՔԿՀ վարչությունը չի կարողանում բաժանել, քանի որ դա հիմնականում կախված է քրեակատարողական վարչությունից, որը իրականացնում է պարագաների բաշխումը և ինչպես պարզ դարձավ, հիմնականում ուշացվում է:

Դատապարտյալները, իրենք, նշել են, որ չեն ստանում այն ամենը, ինչ իրենց համար նախատեսված է օրենքով: Ավելին, դատապարտյալների մեծ մասը տեղյակ չի եղել օրենքով իրենց համար նախատեսված սննդի և հիգիենիկ պարագաների տեսակների և չափաբաժինների մասին: Իսկ այն պարագաները, որոնք ստացվել են դատապարտյալների կողմից, չեն օգտագործվել: Օրինակ, դիտարկման ընթացքում պարզ է դարձել, որ

դատապարտյալները չեն կրում սահմանված նմուշի համազգեստ, այլ կրում են տնից իրենց համար բերված հագուստները¹⁶:

Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ սանիտարահիգիենիկ պարագաների կապակցությամբ առկա է երկու խնդիր. առաջին՝ սանիտարահիգիենիկ պարագաների՝ օճառ, զուգարանի թուղթ, ատամի խոզանակ, ատամի մածուկ, ածելի, կանացի հիգիենիկ պարագաներ՝ միջադիր, որակը ցածր է, և երկրորդ՝ ցածր որակի պատճառով դատապարտյալների մեծ մասը չի օգտագործում տրամադրվող պարագաները:

Գրադարան

Քրեակատարողական հիմնարկում կին և անչափահաս դատապարտյալների համար նախատեսված է մեկ ընդհանուր գրադարան, որը գտնվում է անչափահասների պահման մասնաշենքում: Գրադարանում աշխատում է համապատասխան պատասխանատուն, ով առկա գրքերի հիման վրա կազմում է ցանկ: Կին դատապարտյալները այդ ցանկից կարող են ցանկացած գիրք ընտրել, որն էլ աշխատակիցը բերում է իրենց համար: Կանայք սակայն գրադարան, այսինքն անչափահասների մասնաշենք, մուտք գործել և ինքնուրույն գիրք վերցնել չեն կարող: Ըստ այդմ, կին դատապարտյալների համար չկա նաև առանձին ընթերցասրահ:

Իրազեկում իրավունքներին և պարտականություններին

Սահմանված կանոնի համաձայն դատապարտյալները իրենց իրավունքներին ու պարտականություններին պետք է ծանոթանան անմիջապես ՔԿՀ մուտք գործելուց հետո:

Չնայած այս հանգամանքին, ոչ բոլոր դատապարտյալներն են, որ նշել են ՔԿՀ մուտք գործելիս իրենց իրավունքներին ու պարտականություններին ծանոթանալու մասին: Դատապարտյալներից ոմանք նշել են, որ ՔԿՀ մուտք գործելիս իրենք անձամբ են կարդացել ներքին կանոնակարգը, որը փակցված է առաջին հարկի կացարանների պատերի միջև՝ հասանելի և նկատելի վայրում: Դատապարտյալների մեկ այլ խմբի սոցիալական հոգեբանական անձնակազմի աշխատակիցներն են բանավոր ձևով ներկայացրել իրավունքներն ու պարտականությունները, ընդհանուր կարգը: Սակայն սահմանված կարգի մանրամասնեցում դատապարտյալներին չի տրամադրվում, ինչն էլ շատ հաճախ խնդիրների տեղիք է տալիս՝ անտեղյակ լինելու կամ սխալ հասկանալու պատճառով: Դատապարտյալների մեկ այլ խումբ էլ նշել է այլ դատապարտյալներից իրենց իրավունքներին ծանոթանալու մասին:

«Մտեղ որ գալիս ես, դատապարտյալները ասում են: Ինձ ասել են դատապարտյալները, վարչակազմը ոչինչ չի բարցատրել»:

Ազատագրված կին

Խնդիրը նրանում է, որ դատապարտյալները կարևորություն չեն տալիս իրենց իրավունքներին տեղեկացված լինելուն, քանզի վստահ են, որ դրանց մասին իմանալը իրենց պաշտպանված չի դարձնի:

¹⁶ Այս մասին ավելի մանրամասն տես սույն զեկույցին կից “Մարդու իրավունքների բյուջետավորումը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում” զեկույցում:

«ՔԿՀ մուտք գործելիս ծանոթացրել են ներքին կանոնակարգին, նաև փակցված է եղել պատին: Գիտենք մեր իրավունքները, բայց ում է պետք, ինչ օգուտ ունենք իմանալուց»:

Ազատագրված կին

Այս առումով մեկ այլ խնդիր կապված է ազգությամբ ոչ հայ դատապարտյալների հետ, ովքեր հայերեն կարդալ չգիտեն և պատերին փակցված իրավունքներից ու պարտականություններից ոչինչ չեն հասկանում:

«Կացարանում կպցրած է մեր իրավունքների և պարտականությունների մասին հայտնող ցուցապաստառ: Սակայն այն հայերեն լեզվով է՝ մենք չենք հասկանում: Հատուկ բացատրություններ դրա վերաբերյալ մեզ չեն տվել: Իսկ երբ խնդրում ենք, որ տրամադրեն օրենքների ռուսերեն թարգմանությունը, մեզ ասում են՝ «ասեք ինչ է հետաքրքրում՝ բանավոր կասենք»: Ռուսերեն ոչինչ չկա: Մեր փաստաթղթերը մեզ ռուսերենով չեն տալիս: Խնդրել եմ որ քրեական օրենսգիրքը տան չեն տվել: Ընդհանրապես հույս չունեմ, որ երբեք կտան»:

Ազատագրված կին

Խոհանոց և սնունդ

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկում սննդի պատրաստման և սնվելու գործընթացի կազմակերպման հնարավորությունները կարելի է խմբավորել հետևյալ կերպ:

Ճաշարան-Խոհանոց

Նկարագրություն

Աբովյան ՔԿՀ ճաշարանն ու դրան կից փոքր խոհանոցը գտնվում են կացարանայային մասնաշենքի հարևանությամբ: Ճաշարանի հատակը բետոնից է, պատերը՝ սվաղած, մասնակիորեն ներկված յուղաներկով: Դիտարկման պահին պատերը տեղ-տեղ քանդված էին և հնացած:

Օդափոխության համակարգ ինչպես ՔԿՀ այլ տարածքներում, այստեղ ևս բացակայում է: Ճաշարանում աշխատող կանանց խոսքերով օդափոխությունն իրականացվում է փոքրիկ լուսամուտի միջոցով:

Ճաշասենյակում դրված են եղել ընդհանուր մոտ 10 սեղաններ, որի շուրջ կարող է միաժամանակ տեղավորվել մինչև 12 մարդ: Այդ է պատճառը, որ դատապարտյալները ճաշասենյակից օգտվում են հերթափոխով:

Սեղանների երկու կողմերում գուգահեռ դրված էին երկար աթոռներ /իշոտնուկ/: Սեղաններից մի քանիսի վրա նկատվել են սփռոցի նմանվող սավաններ:

Ճաշասենյակին կից կա փոքրիկ խոհանոց, որը կրկին աչքի ընկավ իր մաքրությամբ: Նշվեց, որ խոհանոցը ապահովված է 24-ժամյա տաք և սառը ջրով: Դիտարկման ընթացքում պարզվեց, որ ջուրը տաքացվում է կաթսաների մեջ և օգտագործվում ըստ անհրաժեշտության: Աշխատակիցների կամ կին դատապարտյալների համար սակայն, ովքեր գալիս են ճաշելու, լվացվելու հնարավորություն չկա: Առաջին հայացքից նկատելի էր, որ սպասքը, որի մեջ պատրաստվում է սնունդը, մաքուր է:

Ճաշարանին կից խոհանոցում աշխատում են երկու դատապարտյալ կանայք, ովքեր դիտարկման պահին կրում էին համապատասխան սպիտակ հագուստ: Հագուստը իրենից

ներկայացնում էր պիջակի երկարության սպիտակ խալաթ, որը սակայն կեղտոտ էր, պատառոտված:

«Կանայք ասացին, որ առավոտյան մաքուր հագել են, բայց արդեն ժամը 13-ի սահմաններում կեղտոտված էր, ակնհայտ էր, որ դա չի լվացել արդեն մի քանի օր»:

Մոնիթորինգ իրականացրած դիտորդ

Ճաշարանի պատին փակցված էր օրվա ճաշատեսակի ցանկն ու շաբաթվա մենյուն: Ինչպես պարզ դարձավ, իրականում տրվող ուտելիքը չի համապատասխանում գրվածին: Ճաշարանի մյուս պատին փակցված էին դատապարտյալների իրավունքներն ու պարտականությունները:

Մոնիթինգի բազմազանություն, որպես այդպիսին, չի նկատվել, քանի որ պահեստում միայն կարտոֆիլ և պանիր էր պահված, իսկ մեկ փոքր սառնարանում՝ միայն կարագ:

Մոնիթորինգից և հարցազրույցներից պարզ դարձավ, որ ճաշարանում աշխատող կին դատապարտյալները աշխատանքում ներգրավվել են իրենց ցանկությամբ: Ինչպես տեղեկացանք, հատուկ վերապատրաստում չունեն, չեն տիրապետում նաև համապատասխան հմտությունների: Աշխատողներից մեկը հանդես է գալիս օգնականի դերում և կատարում է խոհարարի ցուցումները:

Ճաշարանում աշխատող կանայք մնացած դատապարտյալներից ավելի շուտ են արթնանում՝ աշխատանքային պարտականությունները կատարելու նպատակով: Նմանապես, տարբեր է նաև նրանց հանգստի և քնի գրաֆիկը: Նրանք նախատեսված գրաֆիկից ավելի վաղ են քնում: Սա սկզբնական շրջանում դժվարություններ է առաջացրել, սակայն ժամանակի ընթացքում նրանք սովորել են և հարմարվել:

Աշխատանքի դիմաց կին դատապարտյալներին տրվող աշխատավարձը կազմում է 45.000 դրամ՝ ներառյալ հարկերը: Վերջնական արդյունքում նրանք ստանում են մոտ 30.000 դրամ:

Ճաշարանի աշխատակիցները նշել են, որ յուրաքանչյուր ամիս նրանք սանիտարահիգիենիկ բժշկական ստուգման են ենթարկվում: Սակայն ստուգման եղանակի հետ կապված ստացված տեղեկությունը հակասական է: Անհասկանալի է, մասնավորապես, թե ինչպես է իրականացվում գնությունը՝ արտաքին գնման տեսքով, թե՝ անալիզների վերցման:

Կին աշխատողները սննդի կոնկրետ տեսակը պատրաստում են ըստ սննդի սահմանված գրաֆիկի: Դատապարտյալները նախընտրում են լոբի, սիսեռ, ոսպ, ինչն էլ փորձում են ավելի հաճախ պատրաստել: Պատրաստման հետ կապված հիմնական խնդիրը կապված է հումքի անորակության, ինչպես նաև նույն սննդատեսակի տրման հաճախականության հետ:

Ճաշարանում աշխատող կանանց խոսքերով լինում է, որ սնունդը ավելանում է: Նման դեպքերում իրենք առաջարկում են, որ առավոտյան ավելացած ուտելիքը երեկոյան սպառվի կամ թափում են, քանի որ սնունդը պահելու հնարավորություն չկա: Ավելացված սնունդը սպառելու մեկ այլ եղանակ է դրսում պահվող կենդանիներին դրանով կերակրելը: Ինչպես նշվեց, սնունդը պահելու հետ լուրջ խնդիր է սառնարանի բացակայությունը:

«Եթե մեկ ուրիշը էլի է ցանկանում, ես տեսնում եմ, որ ինչ-որ մեկը չի կերել ու դրա բաժինը տվել եմ կրկնակի ցանկացողին, բայց հիմնականում բոլորը ուտում են»:

ՔԿ հիմնարկում հիվանդ դատապարտյալները հնարավորություն ունեն լրացուցիչ սնունդ ստանալ: Լրացուցիչ սննդի մեջ, ինչպես նշեց վարչակազմը, մտնում է ձու և կարագ: Սակայն

հիվանդ դատապարտյալների համար առանձին սնունդ պատրաստելու հնարավորություն չկա: Վերջիններս իրենք իրենց միջոցներով պետք է հոգան սննդի հարցը:

ՔԿՀ-ների համար սահմանված կարգի համաձայն նախատեսված է սննդի ընդունման կարգացուցակ: Վերջինիս համաձայն՝ սնունդը ՔԿՀ-ում տրվում է օրը երեք անգամ՝ նախաճաշը՝ ժամը 9-10-ին, ճաշը՝ 13-14-ին, ընթրիքը՝ 18-19-ին: Սահմանված ժամերին սակայն բոլորը չեն հասցնում օգտվել ճաշարանից, քանի որ տարածքի փոքրության պատճառով բոլոր դատապարտյալները միաժամանակ չեն տեղավորվում: Այդ իսկ պատճառով սննդի ընդունումը տեղի է ունենում մի քանի հարթափոխով: Ընդ որում, յուրաքանչյուր դատապարտյալ իր սեղանն ու աթոռն ունի, որից միշտ օգտվում է:

Ինչ վերաբերվում է հիվանդներին, ապա նրանց համար ուտելու գրաֆիկ սահմանված չէ:

Դիտարկման օրվա ճաշացանկը

Ճաշի համար նախատեսված էր ոսպով և բրնձով փլավ, ինչպես նաև կարմիր լոբով ապուր, մեջը՝ կարտոֆիլ, երբ մենք համտես արեցինք ուտելիքը, ասացին որ ճաշը պատրաստ չի, դեռ պետք է սոխառած արվի և կանաչի զցվի: Խոսակցության ավարտից հետո, երբ մոտեցանք խոհանոց, տեսանք, որ լոբով ճաշի մեջ զցել են սոխառած, մսի պահածո, ինչը, իրենց ասելով, մոտ 23 երկաթե տարայով մսի պահածո էր: Ընթրիքի համար նախատեսված էր կարտոֆիլի պյուրե, ինչի համար երկու կաստրոլյաներ արդեն լցված էին անեփ, մաքրված կարտոֆիլով: Նշեցին նաև, որ պյուրեի հետ տալու են նաև ձկան պահածո:

Մոնիթորինգ իրականացրած դիտորդ

Կանայք, ովքեր չեն օգտվում հիմնարկի ճաշարանի սննդից, հնարավորություն ունեն իրենց միջոցներով ուտելիք պատրաստել և համապատասխան ժամին սնվել ճաշարանում: Սննդի պատրաստման համար կացարանային մասնաշենքում առանձին խոհանոց կա, որտեղ կանայք ըստ սահմանված հերթականության իրենց ուտելիքը պատրաստում են: Նույն խոհանոցում նաև ափսեներն են լվանում ուտելուց հետո: Ափսեները լվանալու հարցում կարգը հետևյալն է. յուրաքանչյուր դատապարտյալ ուտելուց հետո պետք է լվանա իր ափսեն, անկախ այն հանգամանքից՝ ՔԿՀ-ի սննդից է օգտվել, թե սեփական:

ՔԿՀ-ում ընդունված է պրակտիկա, որի համաձայն մի քանի դատապարտյալներ իրենց հարազատներից ստացված սնունդը միասին են պատրաստում և միասին ուտում: Ինչպես իրենք դատապարտյալները անվանեցին սա կոչվում է “հացընկեր”:

«Հացընկերները» անձնամբ են պատրաստում իրենց ճաշը ճաշի տաքացման սենյաներում: Քանի որ սալաքարերը քիչ են, դատապարտյալները հերթ են կազմում, և «մի կերպ բոլորը հասցնում են» պատրաստել ուտելիք»:

Ազատագրված կին

Այն դատապարտյալները, ովքեր ճաշարանից չեն օգտվում, երբեմն վերցնում են իրենց հասանելիք հացը և կարտոֆիլը, սակայն միայն եփած վիճակում:

Սննդի որակի ստուգումը, ինչպես նշեցին աշխատակցները, իրականացվում է քրեակատարողական վարչության կողմից: ՔԿՀ-ում սնունդը ստուգվում է բժշկի կամ տնտեսական ապահովման բաժնի պետի կողմից: Բժշկական բաժնի քույրերի կողմից այն ստուգվում է շաբաթը երկու անգամ: Քույրերը ստուգում են նաև, որպեսզի վերցվեն ուտելիքի նմուշները և 24 ժամ պահվեն: Նմուշները պահվում են խոհանոցի սառնարանում: Իրենց նշելով, դեռևս թունավորման դեպք չի եղել:

Հատկանշական է, որ մոնիթորինգի իրականացումից մոտ 3 շաբաթ անց Աբովյան ՔԿՀ-ում տեղի ունեցավ համատարած թունավորում, ինչի պատճառը, ինչպես պարզ դարձավ հետազայում, վարչությունից ստացված կոմպոտն ու խոզի միսն է եղել:

Ճաշարանի և խոհանոցի ամենօրյա սանիտարահիգիենիկ միջոցառումները իրականացվում են ճաշարանում աշխատող կանանցից մեկի կողմից: Յուրաքանչյուր օր հատակը մաքրվում է քլորով, ինչը ստացվում է պահեստից: Իսկ սպիտակեղենի լվացումը տեղի է ունենում յուրաքանչյուր շաբաթ: Օրվա ընթացքում յուրաքանչյուր սննդակարգից հետո ճաշարանը մաքրվում է աշխատակցի կողմից: Վերջինս նշեց, որ կանայք իրենք էլ մաքուր են պահում ճաշարանը և հետքեր չատ չեն թողնում:

Միջատների և խավարասերների դեմ պայքարի հարցում ճաշարանի աշխատակիցները ունեն իրենց ինքնուրույն մոտեցումը: Իրենք անձամբ պատրաստում են անհրաժեշտ միջոցները: Խավարասերների դեմ օգտագործում են քլոր, իսկ առնետների դեմ՝ կատուներին: Նման միջոցների անհրաժեշտությունը սակայն հաճախակի չէ, եթե լուրջ խնդիրներ են լինում, ապա դրսից են գալիս և պայքարում:

Չնայած այն հանգամանքին, որ հիմնարկը սահմանված կարգով սպասք է ստանում սննդի համար, այնուամենայնիվ, դատապարտյալները մեծամասամբ օգտվում են իրենց անձնական սպասքի միջոցներից:

Հղի կամ երեխա ունեցող կանանց սննդակարգը

Սահմանված կարգի համաձայն հղի կանայք կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձինք սննդով և այլ պարագաներով ապահովվում են սահմանված չափաբաժինների համաձայն: Բացի դրանից՝ պետք է ապահովվի մանկական սնունդ՝ առողջապահության համակարգի մանկական հաստատություններով գտնվող համապատասխան տարիքի երեխաների համար նախատեսված նորմերով:

Ինչպես պարզ դարձավ դիտարկման արդյունքում՝ հղի կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կին դատապարտյալների համար առանձին սննդակարգ նախատեսված չէ: Նրանց հատկացվում է այն նույն սնունդը, ինչ մնացած դատապարտյալներին: Միակ տարբերությունը կայանում է նրանում, որ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կանայք ստանում են համապատասխան հումքը և ըստ այդմ պատրաստում այն, ինչ հնարավոր է:

9.3. Սննդի որակ և ճաշացանկ

Սննդի ճաշացանկը սահմանվում է նախապես՝ շաբաթվա յուրաքանչյուր օրվա համար:

Սննդի տեսականին սակայն փոխվելու կարիք ունի, ինչի անհրաժեշտության մասին նշել են դատապարտյալները: Ընդհանուր առմամբ տրվող սնունդը բավարարում է դատապարտյալներին, քանի որ ոչ բոլորն են սնվում ճաշարանի սննդով: Ինչպես նշել է դատապարտյալների մեծամասնությունը, եթե տնից միրգ կամ այլ ուտելիք չստանան, ապա ներսի սննդով ապրելը անհնար կլինի:

Ճաշարանի հացից օգտում են բոլորը:

«Ճաշերը հիմնականում լավի են նման, պահածոյացված մսով ճաշ տալիս են ամիսը ամենաշատը 5անգամ, օրեկան 2 ճաշի գդալ շաքարավազ, 3 ամիսը մեկ 2 ճաշի գդալ կիլկի, հացը՝ որպիսի քաշ լցնի խմորոտ է, հնարավոր չէ ուտել, պանիրը՝ տարեկան մի 5 անգամ, էն էլ յուղը հանած չգիտես պանիր է, թե ինչ: Տոն օրերին 2 կամ 3 փոքր խնձոր, կաթը՝ տարեկան մի 5 անգամ, խմելու բան չէ, իբր քաղցր կաթ է ջրով բացած, կամ ջուր է մի քիչ կաթ կաթեցրած»:

Ազատագրկված կին

Ճաշարանից օգտվում են: Գրեթե միշտ նույն ճաշերն են բրնձով կամ գրեչկայով փլավ

ու կադամբով սուպ կամ բորշ: Օրինակ երեկ չէ առաջին օրը (նկատի ունի մեր առաջին այցելության օրը) երբ դուք եկաք, ուտելիքը ավելի լավ ձևով տվեցին, սոկ տվեցին, ճաշի մեջ միս կար: Երեկ էլի ամեն օրվա նման: Էսօր երեկ չէ առաջին օրվա նման լավն էր ու էլի սոկ տվեցին: Պանիր վերջին անգամ տվել են անցած տարի: հաշմանդամներին ձեթ են տալիս ու մեկ էլ կարագ՝ 20-ական գրամ: Տարին 1-2 անգամ ձու են տալիս մի 4 օր ոչ ավել: Մեծ մասը ճաշարանից չեն օգտվում, ասում են յուրը լավը չի:

Ազատագրկված կին

Սովորաբար տալիս են ցորեն, լոբի, ոսպ, կամ սիսեռ որից երբեք չենք օգտվում: Ճաշարանից վերցնում եմ միայն շաքար և հաց: Միս չի լինում:

“Երբ ստուգող հանձնաժողովներն են գալիս հիվանդներին տալիս են ձու և նորմալ պանիր: Բանջարեղեն չի լինում”:

Սովորաբար տալիս են «դատարկ» ապուր, հնդկացորեն, լոբի կամ ոսպ, որից երբեք չենք օգտվում: Ճաշարանից վերցնում եմ միայն շաքար և հաց: Մի անգամ ճաշարանից «գրեչկա» վերցրեցի, սակայն շատ ուժեղ հոտ էր գալիս: Դա եղավ վերջին դեպքը:

ամեն օր նույն ճաշատեսակն է, ճաշացանկին ոչ ոք ուշադրություն չի դարձնում, հարկ եղած դեպքում ճաշացանկի վրա գրչով փոփոխություններ են կատարում:

Պահեստի դիտարկումից և պատասխանատու անձի հետ զրույցից պարզ դարձավ, որ պահեստում առկա է 3 տոննա 500 կգ կարտոֆիլ, օրեկան օգտագործում են 114-115կգ կարտոֆիլ, որի 30 տոկոսը թափում են:

Մարտ ամսին ստացել են հետևյալ սնունդը.

- Հնդկաձավար 500 կգ,
- Հալած յուղ 100 կգ
- տոմատի մածուկ 180 կգ
- պանիր 55 կգ,
- Մսի պահածու 950 կգ
- Մրգահյութ 660 կգ
- Աղ կերակ. 650 կգ
- Ձկան պահածու 280 կգ
- Ցորենաձավար
- Սիսեռ 300 կգ
- այլ

Ձուն պահեստում շատ քիչ էր, մոտ 20-40 հատ, որը տալի են միայն «հիվանդներին»: Հիվանդները թվով 23 էին:

Պատասխանատու աշխատակցի խոսքերով ճաշարանին տրամադրվում է այն սնունդը, որը ստանում են: Կարտոֆիլը հիմնականում անորակ է լինում և դա հնարավոր չէ թաքցնել: Նմանապես նաև մակարոնեղենը, որը տեղական արտադրության է և եփելիս դառնում է խմոր:

Դիտարկվող ժամանակահատվածում՝ մարտ ամսին, ՔԿՀ-ն ստացել էր սննդատեսակներ, որը սակայն չգիտեն ինչքան ժամանակահատվածի համար է նախատեսված: Ընդ որում նշվեց, որ նույնքան ամսից հիմնարկը ոչինչ չէր ստացել:

Իսկ պահեստապետն ու վարչակազմի մնացած աշխատակիցները իրենց ուտելիքը հիմնականում տնից են բերում, քանի որ աշխատողների համար նախատեսված ճաշարանը վճարովի է, իսկ սննդի որակը այդքան էլ գովելի չէ:

Քրեակատարողական հիմնարկի սննդի և ճաշարանի խնդիրները

Անորակ սննդի և սննդատեսակների անընդհատ կրկնության պատճառով դատապարտյալները հիմնականում չեն օգտվում հիմնարկի ճաշարանից: Ընդհանուր առմամբ 130 դատապարտյալներից միայն 20-30 են սնվում ճաշարանում:

Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ ճաշարանի պատին փակցվում է ամենօրյա ճաշացանկը, այնուհանդերձ, սննդատեսակները միշտ կրկնվում են, ինչի հետևանքով դատապարտյալները ցանկություն չունեն օգտվել ճաշարանի սննդից:

Կին դատապարտյալները, ովքեր առողջական խնդիրներ ունեն և պետք է հատուկ սննդակարգով սնվեն, ճաշարանում ստանում են նույնը, ինչ մնացած դատապարտյալները: Օրինակ շաքարով հիվանդ կանայք ՔԿՀ-ից հատուկ սնունդ չեն ստանում և հիվանդության համար պահանջվող սնունդը ստանում են տնից, իսկ եթե հնարավորություն չունեն, ստիպված պետք է օգտվեն նրանից, ինչ տալիս է ադմինիստրացիան:

Պատրաստվող սնունդը ՔԿՀ-ում հիմնականում չի սպառվում, քանի որ որակը, ինչպես նաև պատրաստումը վատն է ու թերի, ինչի արդյունքում ՔԿՀ ստացվող հումքը ոչ ամբողջությամբ է սպառվում, իսկ եթե օգտագործվում է, ապա ոչ նպատակային նշանակությամբ: Միննույն ժամանակ, առողջության հետ խնդիրներ ունեցող կանանց սննդակարգի հարցում արտոնություններ չորամադրելը հանգեցնում է նրանց առողջական վիճակի վատացմանը:

Զուր

Քրեակատարողական հիմնարկում խմելու ջուր, որպես այդպիսին, առանձնացված չէ, խմելու համար դատապարտյալ կանայք օգտագործում են լոգարանի ջուրը կամ սանհանգույցի ջուրը: Չնայած այն հանգամանքին, որ ՔԿՀ-ում տաք ջուր կա, կանայք հաճախ իրենց հիգիենային հետևելու համար առանձին էլեկտրական թեյինիկներով տաքացնում են ջուրը և դրանով իրենց հագուստը լվանում կամ այլ կարքիները հոգում: Չնայած կացարանային մասնաշենքի առաջին հարկի փոքրիկ խոհանոցում կա ջրի մեկ ծորակ, այնուամենայնիվ, այն չի բավականացնում բոլորին և կանայք ստիպված օգտվում են նաև սանհանգույցի ջրից: Սուրճը, օրինակ, կրկին պատրաստում են սանհանգույցի ջրով, սանհանգույցի ջրով լվանում են տարբեր մթերքներ ու կեղտոտ սպասքը:

Ինչպես պարզվեց դիտարկման ընթացքում, պատահում է, որ սառը ջուր չի լինում: Նման դեպքերում սառը ջուր մատակարարվում է ցիստեռնից: Այդպիսի դեպք գրանցվել է վերջին անգամ 2013 թվականի ձմռանը, երբ ջրամատակարարման դադարեցման պատճառով կին դատապարտյալները ստիպված հալեցված ձյուն են օգտագործել:

«Պատկերացրեք 140 հոգի գնում են մեկ զուգարան առանց ջրի: Բերեցին մի ցիստեռն նեխած ջրով, որը խմել չէր լինում: Խնդրեցինք, որ խանութ վաճառքի համար ջուր բերեն, երկու օր հետո նոր բերեցին: Նույնիսկ ամենաաղքատ դատապարտյալները հերթ էին կանգնում խանութում ջուր գնելու համար»:

Ազատագրված կին

Մենդի պահման հնարավորություններ. պահեստներ

Նկարագրություն

Մենդի պահեստը գտնվում է ՔԿՀ հիմնական մասնաշենքի հարևանությամբ՝ մոտ 100 մետր հեռավորության վրա: Պահեստի պատերը սվաղած են ու սպիտակ ներկված, հատակը՝ բետոնից: Սակայն ընդհանուր առմամբ այն գտնվում էր ոչ բարվոք վիճակում: Պահեստը բնական լուսավորություն ուներ միայն մուտքի դռնից, մյուս մասը արհեստական լուսավորված էր: Օդափոխության համակարգը բացակայում է, ինչով պայմանավորված խոնավության պատճառով փոքր-ինչ տհաճ հոտ էր զգացվում: Պահեստում ջերմաչափ չի նկատվել, որի օգնությամբ հնարավոր կլիներ ասել, թե քանի աստիճան է պահեստի ջերմաստիճանը:

Մենդի պահեստն ու ՔԿՀ-ում պահվող անասնաֆերման միմյանց բավականին մոտ են գտնվում:

Պահեստում առկա են եղել 2 սառնարան և մեկ սառը սենյակ՝ հատուկ փչացող սենդի համար: Դիտարկման պահին սենյակում կար մեկ կաթսա, որի մեջ պահվում էր պանիրը: Պահեստի հենց մուտքի մոտ, չժանգոտվող 2 կաթսաների մեջ պահվում է թթու դրված բանջարեղենը: Սառնարաններից մեկում պահվում էր կարագը, որի արտադրող կազմակերպությունը հայտնի չէր:

«Ոչ մի տեղ նշված չէր, թե այդ կարագը որ ընկերության արտադրանքն է»:

Մոնիթորինգ իրականացրած դիտորդ

Մյուս սառնարանը դատարկ էր:

Պահեստի ներսում՝ մուտքի մոտից ձախ կողմում, կար մեկ այլ նկուղային հարկ, որտեղ պահվում է կարտոֆիլը՝ գետնին թափված վիճակում: Դրան կից՝ ներս ընկած հատվածում, դրված էր հարկերով երկաթյա պահարան, որտեղ կրկին կարտոֆիլ են պահում, բայց այդ պահին չկար: Այդ սենյակի աջ կողմում կար մեկ այլ սենյակ, որտեղ պահվում է այլ տեսակի բանջարեղեն և տվյալ պահին առկա էր 3 փոքր, ձթով պատված ջրավազան, որտեղ նախկինում պահվել է թթու, իսկ դիտարկման պահին այնտեղ բանջարեղեն է պահվել /մի քանի կաղամբ/:

Պահեստի նախադռան դիմաց կա ևս մեկ սենյակ՝ հողե հատակով, որտեղ պահեստի սառնարաններն են, 3 սառնարաններից մեկը չէր աշխատում, իսկ մյուսը, որը ավելի մեծ էր, գործում էր և այդ պահին մեջը պանիր էր պահվում: Կար մեկ այլ՝ պաղպաղակի սառնարան, որտեղ կարագ էր պահվում: Դիտարկման պահին կլիներ մոտ 30-40կգ կարագ:

Պահեստին անմիջապես կից կառուցված էր 1 հարկանի՝ մոտ 3 մետր բարձրության պահեստ-շինություն՝ երկաթյա հարկաբաժիններով, որը նախատեսված է պարկերի և թղթե արկղերի համար: Վերջինիս հատակը բետոնից էր, գտնվում էր մաշված, ոչ բարվոք վիճակում: Պահեստի տարածքի մի մասը չէր օգտագործվում և գտնվում էր շատ վատ սանիտարահիգիենիկ վիճակում: Օգտագործվող հատվածը սակայն համեմատաբար մաքուր էր:

Դիտարկման պահին եղել է մոտ 20 պարկ ալյուր, 4 պարկ բրինձ, 2քմ փայտե արկղի մեջ մակարոնեղեն, 1լ երկաթյա տարայի մեջ մոտ 100 մսի պահածո, ապակյա տարրայով 50 տուփ 0.5 լ-անոց տոմատի մածուկ, և 10-15 հատ 15 լիտրանոց յուղի դույլեր, ձավարեղեն, աղ, ձու, ձեթ, շաքարավազ, հաճար և դափնետերև: Այդ հատվածում սակայն սառնարան չկար:

Ադմինիստրատիվ աշխատակցի խոսքերով այդ հատվածում շուտ փչացող սնունդ չի պահվում, ձուև օրինակ արագ է սպառվում, հետևաբար սառնարան իրենց անհրաժեշտ չէ:

Հատակին նկատվել է միջատների դեմ դեղամիջոց: Պահեստապետի խոսքերով պարբերաբար կատարվում են սանիտարահիգիենիկ միջոցառումներ, տարածքը մաքրվում է, որպեսզի խուսափեն խավարասերներից:

Պահեստների սանիտարահիգիենիկ վիճակը սակայն խնդրահարույց էր, քանի որ առկա էր և՛ խոնավություն, և՛ պատերի մաշվածություն, և՛ սննդի պահման համար ոչ բավարար մաքրություն:

Երեխաներ և հղի կանայք

Արովյան քրեակատարողական հիմնարկում անչափահաս՝ մինչև երեք տարեկան, երեխաները իրենց մայրերի հետ բնակվում են առանձին սենյակներում՝ հնարավորինս հարմարեցված պայմաններում: Այնուամենայնիվ, դիտարկված սենյակներում նկատվել է վերանորոգման անհրաժեշտություն: Սենյակների ջեռուցումը ապահովվում է ընդհանուր կարգով, սակայն այս խմբի կանանց տրվում է նաև էլեկտրական սալիկ, որը կարող են վառել նաև գիշերային ժամերին: Նույն սալիկը օգտագործվում է նաև սննդի պատրաստման համար: Սենյակի համար անհրաժեշտ այլ պարագաներ, ինչպիսիք կարող են լինել հեռուստացույցն ու պահարանները, ՔԿՀ-ից ստանալը գրեթե անհնար է և կրկին նման պարագաներով ապահովված լինելու պարտականությունը մնում է կանանց ընտանիքների վրա:

Այլ խնդիրներ

Անչափահաս երեխաների խնամքով ՔԿՀ-ում զբաղվում են գրեթե բոլոր դատապարտյալները: Պատիժ կրող յուրաքանչյուր դատապարտյալ երեխաներին սիրում և խնամում է իր սեփական երախայի պես: Բնչը ունի նաև իր բացասական կողմերը, քանի որ իրական վտանգ կա, որ երեխան կարող է վարակվել տարբեր հիվանդություններով: Բացի այդ, երեխային կերակրում են բոլորը՝ սպասքի չառանձնացված պարագաներով և սննդատեսակներով, ինչը կարող է ուղեկցվել երեխայի առողջության համար վտանգավոր ռիսկերով: Հնչել է նաև կարծիք, որ ծնողները չեն կարող այլ դատապարտյալներին արգելել չշփվել իրենց երեխաների հետ, քանի որ դա կվիրավորի վերջիններիս:

Մյուս կողմից, բավականին դրական է գնահատվել ՔԿՀ անձնակազմի և պետի վերաբերմունքը մինչև երեք տարեկան անչափահասների նկատմամբ:

«ՔԿՀ պետը և անձնակազմը երեխայի նկատմամբ շատ ուշադիր են և ցանկացած պահի, ցանկացած հարցով կարող եմ դիմել նրանց»:

Ազատագրված կին

Երեխայի նկատմամբ հատկապես մեծ է բժշկական անձնակազմի ուշադրությունը: Հարկ եղած դեպքում երեխային առանց որևէ դժվարության մոր հետ կարող են ուղեկցել հիվանդանոց՝ բժշկական գնման ենթարկելու համար:

Պետք է փաստել, որ երեխաների հանդեպ վերաբերմունքը դրական է, սակայն նյութատեխնիկական առումով երեխաներն ու իրենց մայրերը անհրաժեշտ պարագաները ստանում են իրենց ընտանիքներից, քանի որ ՔԿՀ-ն նման ռեսուրսներով ապահովված չէ: Ադմինիստրացիայի խոսքերով, անհրաժեշտ տաքդիրներն ու մնացած պարագաներ տրամադրելը նախատեսված չէ նույնիսկ օրենքով:

Շայրահեղ դեպքերում, երբ դատապարտյալ կնոջ ընտանիքը չի կարողանում օգնություն տրամադրել մորն ու երեխային, ՔԿՀ-ն կարող է օրինակ “տաշտ” կամ մահճակալ դուրս գրել փոքրիկի համար: Սանիտարահիգիենիկ պարագաները տրամադրել չեն կարող, քանի որ վարչությունից չեն ստանում:

Հղի դատապարտյալ կանայք սահմանված կարգով բուժօգնություն են ստանում նաև ՔԿՀ-ի տարածքից դուրս: Նրանք անցնում են բոլոր անհրաժեշտ հետազոտությունները Արովյան քաղաքի պոլիկլինիկայում:

«Սահմանված է տանել 4 անգամ, բայց եթե պետք եղավ, եթե ինչ որ խնդիր նկատեմ 10 անգամ էլ կտանեմ»:

Ծննդաբերությունը նույնպես տեղի է ունենում Աբովյան քաղաքում՝ Աբովյանի ծննդատանը, որտեղ դատապարտյալների անուններով բժշկական քարտեր են բացվում: Երեխաները, ովքեր ծնվել են ՔԿՀ-ում, հաշվառված են Աբովյանի պոլիկլինիկայում և ստանում են բոլոր երեխաների համար պարտադիր պատվաստումները, ինչպես նաև ստանում են բժշկական այլ ծառայություններ նույն պոլիկլինիկայում: Խնդիր է առաջանում այն դեպքում, երբ երեխան լուրջ հիվանդություն է ունենում և ոչ ՔԿՀ պայմաններում, ոչ էլ պոլիկլինիկայում բուժել հնարավոր չէ՝ պայմանների բացակայության պատճառով:

«Էստեղի բուժանձնակազմից շատ շնորհակալ եմ: Եվ՝ հղիությանս ընթացքում, և՛ դրանից հետո շատ ուշադիր են եղել իմ և երեխայիս նկատմամբ: Ցանկացած պահի կարող եմ կանչել իրենց»:

«Ես եմ մանկաբույժը, բայց երեխաներին տանում ենք, նորից, որ բոլոր սահմանված պատվաստումները անեն, երեխաներ ովքեր ծնվում են գրանցվում են ամբուլատոր բազայում և ստանում անհրաժեշտ բժշկական ծառայությունները: Եթե շատ լուրջ խնդիր չի գազեր ունի կամ ջերմություն ես եմ նայում, բայց եթե լուրջ ա միանգամից տանում ենք»:

Կրթություն և աշխատանք

11.1. Կրթություն

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկում նախատեսված են մի քանի կրթական և մասնագիտական խմբակներ: Վերջիններիս մեջ են մտնում կար ու ձևի ուսուցումը, համակարգչային դասընթացները, անգլերեն լեզվի, հաշվապահության ուսուցանումն ու կավագործությունը: Դասընթացները կազմակերպվում են համար 2 կրթական դպրոցում, որի ուսուցիչները գալիս են դրսից: Ուսման ավարտին, որը կարող է տևել մոտ մեկ տարի, դատապարտյալները համապատասխան վկայականներ են ստանում:

2013 թ-ին հիմնարկը 10 համակարգիչ է ստացել, որոնք տրամադրվում են դատապարտյալներին, երբ նրանք ցանկանան, սակայն դիտարկման ընթացքում պարզ դարձավ, որ համակարգիչները հիմնականում չեն օգտագործվում:

Խմբակներին ըդնգրկվելու սկզբունքը հիմնված է կամավորության վրա, այսինքն, ով ցանկանա, կարող է մասնակցել տվյալ դասընթացին: Գործող բոլոր դասընթացները առաջարկվում են անվճար հիմունքներով:

Չնայած տարբեր խմբակների առկայությանը՝ դատապարտյալների մոտ ակտիվ մասնակցություն չի նկատվել, ինչը բացատրվել է մի քանի պատճառներով:

Նախ նշվել է ոչ մասնագիտական և մակերեսային մոտեցումներով դասընթացները կազմակերպելու հանգամանք: Այս խնդրի կապակցությամբ դատապարտյալները նշել են, որ ոչ բոլոր դասընթացներն են պատշաճ մասնագիտական որակով ապահովվում, և իրենց հետաքրքրությունն աստիճանաբար պակասում է:

Օրինակ, դատապարտյալները նշել են, որ ինֆորմատիկայի ուսուցիչը ադմինիստրատիվ աշխատակիցներից մեկի որդին է, ով պարզապես գալիս է ներկայանում և լուրջ ոչինչ չի սովորեցնում:

Դասընթացների մակերեսայնության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տարվա սկզբին մեծ թվով կանայք գրանցվում են դասընթացներին, հաճախում, սակայն մի քանի դասից հետո դադարեցնում են:

«Կարծես հիասթափվում են, և այլևս չեն գնում: Օրինակ, այս տարվա սկիզբ մոտ 30 սովորող ունեին ուսումնարանում, իսկ հիմա՝ 10-ը»:

Խնդիր է նաև այն, որ ազգային փոքրամասնությունների համար դասընթացներն իրենց հասանելի լեզվով կազմակերպելու համար հնարավորություն չկա:

Նմանապես, որպես խնդիր է նշվել է դասընթացների պատշաճ կազմակերպման համար ռեսուրսների անբավարարությունը:

Ուսումնարան համարվող սենյակի վերանորոգումն ու հարամարություններն անբավարար են: Սենյակը չունի ջեռուցում, բացի այդ՝ վերանորոգված չէ, ինչով պայմանավորված դասընթացներին հաճախելու դատապարտյալների ցանկությունը նվազում է: Ավելին՝ կար ու ձևի համար նախատեսված սենյակում նախատեսված է միայն մեկ կարի մեքենա, որից պետք է միաժամանակ օգտվեն 10-20 կին:

11.2. Աշխատանք

Աբովյան քրեակատարողական հիմնարկում դատապարտյալների աշխատանքի հնարավորությունները ապահովվում է “Աջակցություն դատապարտյալներին” հիմնադրամի կողմից, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկում տարբեր ծառայությունների մատուցման միջոցով:

“Աջակցություն դատապարտյալներին” հիմնադրամը պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է ՀՀ Արդարադատության Նախարարության ներքո:

Հիմնադրամի կանոնադրության համաձայն Աբովյան ՔԿՀ-ում նախատեսված են կարի արտադրության, անասնապահության և գյուղատնտեսության աշխատանքներ, որոնց մասնակցում են ՔԿՀ-ում պատիժ կրող դատապարտյալները:

Մոնիթորինգի իրականացման պահին աշխատող դատապարտյալների ընդհանուր թիվը 8-ն էր, որը բաշխված էր հետևյալ կերպ. Պահեստի բանվոր՝ 2 դատապարտյալ, խոհարար՝ 2, մակարոնեղենի գործարանի բանվոր՝ 2, ոչխարաբուծության բանվոր՝ 2, քրեակատարողական հիմնարկի սանհանգույցի մաքրությամբ զբաղվող՝ 1, կանանց անձնական իրերի պահման վայրի հսկիչ՝ 1, լվացքատան և լոգարանի հսկիչ՝ 1 դատապարտյալ:

Դիտարկման և դատապարտյալների ու ՔԿՀ ադմինիստրացիայի հետ առանձնագրույցների արդյունքում պարզվել է, որ ՔԿՀ-ն ունի 13 հա հողատարածք, որը պատկանում է հիմնադրամին, սակայն ծառայում է ՔԿՀ կարիքներին: Հողատարածքը սակայն ամբողջությամբ դեռևս չի մշակվում, մինչդեռ մշակվելու դեպքում կապահովի ինչպես աշխատատեղեր, այնպես էլ կնպաստի արդյունավետության բարձրացմանը:

ՔԿՀ-ին պատկանող այգու տարածքում մոտ 500 պտղատու ծառատեսակներ կան, որոնք մշակվում են դատապարտյալների կողմից:

Հանրակացարանային մասնաշենքի հետևի հատվածում գտնվում են կենդանիների պահման համար նախատեսված փակ տարածքները, այսպես կոչված՝ գոմերը:

Դիտարկման պահին այդ տարածքում պահվում էր 3 խոզ, 30-40 ոչխարներ, գառներ: Վերջիններիս պահման աշխատանքները կրկին կատարում են կին դատապարտյալները: Դիտարկման պահին նրանք երկուսն են եղել:

Մակարոնեղենի արտադրամասը իրենից ներկայացնում է երկու հարկանի շինություն, որի մի հատվածը լքված և ամայի տարածք է: Արտադրամաս հնարավոր է մուտք գործել կացարանային մասնաշենքից: Արտադրամասի առաջին հարկում կան երեք՝ ոչ շատ մեծ չափսերի սենյակներ: Առաջին սենյակում պահվում են մակարոնեղենի փաթեթավորված տոպրակները: Երկրորդ սենյակում հացի վառարան է, երրորդ սենյակում՝ արդեն մակարոնի արտադրությունն է ընթանում: Վերջինում աշխատում են երկու կանայք, որոնցից մեկը հետևում է մակարոնի դուրս գալու պրոցեսին, մյուսը՝ լցնում չորացման համար պատրաստի ցանցի մեջ ու դնում չորանալու: “Աջակցություն դատապարտյալներին” հիմնադրամի կողմից արտադրվող մակարոնեղենը մատակարարվում է ՀՀ բոլոր քրեակատարողական հիմնարկներին:

Կարի արտադրամասում աշխատում են տարվա մեջ մոտ 6 ամիս: Հիմնականում անկողնու սպիտակեղեն են կարում, իսկ աշխատավարձը հաշվարկվում է տարբեր կերպ, հաշվարկի ստաբիլ և կոնկրետ մեխանիզմ չկա: Ամսական միջին աշխատավարձ եղել է 15.000 դրամ:

Չնայած կանոնադրությամբ սահմանված գործունեության հստակ տեսակների, “Աջակցություն դատապարտյալներին” հիմնադրամի կողմից կազմակերպվում են նաև գորգագործության աշխատանքներ:

Գորգագործությամբ զբաղվողների թիվը 4-ն էր, սակայն աշխատանքներում ընդգրկվելու որևէ սահմանափակում չի գործում, խնդիրը տրամադրվող ցածր վարձատրությունն է 7.000-9.000 դրամ՝ ամսական 2-3 գորգ գործելու դիմաց, որի չափսերը մոտ 30*40սմ է:

Աշխատավարձ և վճարման մեխանիզմ

Վերջիններիս տրվող աշխատավարձի համար աղմինիստրացիայի կողմից առանձին բանկային հաշիվներ են բացվում և աշխատավարձերը փոխանցվում են այդ հաշիվներին: Դատապարտյալները կանխիկ գումար, որպես այդպիսին, չեն ստանում:

Աշխատանքի դիմաց ստացվում է մոտ 45.000 դրամ, որից հանվում են պահումները: Դատապարտյալները նշեցին, որ չգիտեն վերջնական արդյունքում իրենք ինչքան աշխատավարձ են ստանում:

Պաշտոնապես գրանցված հաստիքներից և աշխատանքներից բացի, “Աբովյան” քրեակատարողական հիմնարկում իրականացվում են նաև այլ աշխատանքներ, որոնց դիմաց վճարումն իրականացվում է ոչ դրամական կարգով:

Օրինակ, կա դատապարտյալ, ով զբաղվում է բուժկետի մաքրությամբ, որի դիմաց նրան վճարում են հեռախոսի քարտերով և հավելյալ սնունդ են տալիս, օրինակ՝ կարագ: Նման կերպ, ամսական աշխատավարձը կազմում է 2.000-3.000 դրամ:

Մեկ այլ դատապարտյալ հացի խմորից տարբեր հուշանվերներ է պատրաստում, որոնք վաճառում է ՔԿՀ-ի ներսում, իսկ փոխարենը նրան հեռախոսի քարտ են տալիս:

“Կան մարդիկ, որոնք աշխատում են՝ խոհանոցում, այգում, խոզանոցներում, գաղութից դուրս բրիզադներում: Աշխատանքի ընդունվելու համար մեծ հերթ է և ստանում են միայն ղեկավարության «ինֆորմատորները»: Աշխատանքի խնդիրը շատ լուրջ խնդիր է, բոլորը ուզում են աշխատել, բայց հնարավորություն չկա”:

“Աշխատանքի հարցը շատ լուրջ է: 100-ից 90ը չեն աշխատում: Աշխատում են միայն վարչակազմի ինֆորմատորները: Առաջ էստեղ իրենց գործի համար ամեն ինչ կանեն, հիմա ռեժիմը շատ է խստացել”:

Ինչպես պարզ է դարձել, սանիտարահիգիենիկ պարագաները երբեմն օգտագործվում են որպես աշխատավարձ, այսինքն՝ այն կանայք, ովքեր տնից չեն ստանում իրենց անհրաժեշտ պարագաները որոշակի աշխատանքի դիմաց դրանք ստանում են այլ դատապարտյալներից:

Չնայած առկա փոքր հնարավորություններին, ՔԿՀ-ում նոր աշխատատեղերի կարիք կա: Դատապարտյալների մեծ մասը նշել է, որ եթե աշխատատեղ լինի, սիրով կաշխատեն, իրենց ժամանակը կլրացեն և հնարավորինս կփորձեն հոգալ իրենց ծախսերն ու նվազեցնել իրենց ընտանիքների բեռը:

Ժամանց

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկում ազատ ժամանակի տնօրինման հնարավորությունները խիստ սահմանափակ են: Սրանով պայմանավորված՝ առաջանում են այլ խնդիրներ, ինչպիսիք են վիճաբանությունները:

«Պարապ կանանց մոտ խնդիրներն ու վիճաբանությունները ավելի շատ են»:

Թեև կա կինոսրահ, սակայն տարածքը փոքր է, տեղավորում է մոտ 20 մարդ: Բացի այդ, ծրագրեր կամ հաղորդումներ դիտելիս տարաձայնություններ են առաջանում՝ պայմանավորված նախասիրություններով:

«Կինոգալ կա, բայց չի բավարարում, քանի որ մեկ հեռուստացույց է ու 10-15 հոգի նստում նայում են: Կարող է ես եմ ուրիշ բան եմ ուզում նայել»:

Ազատագրված կին

Կա նաև ակումբ, որը տեղակայված է անչափահասների կացարանի ետնամասում: Ակումբը մեկ հարկանի փոքրիկ շինություն է, բավական լավ կահավորված, հատակը լինոլյումապատ է և մաքուր: Ունի վարագուրապատ բեմ, դաշնամուր, մոտ 15 աթոռներ: Դաշնամուրը օգտագործվում է հիմնականում դատապարտյալներից մեկի կողմից: Ակումբը բացվում է տոն օրերին: Կանայք այնտեղ գնում են ռեժիմի պետի թույլտվությամբ, որտեղ հիմնականում տոն օրերի միջոցառումների փորձերն են իրականացվում և բուն միջոցառումներն են անց կացվում:

Սպորտ, մարմնամարզություն

“Աբովյան” քրեակատարողական հիմնարկում կա միայն մեկ մարզասրահ՝ նախատեսված անչափահասների համար, որը գտնվում է անչափահասների պահման հատվածում: Կին դատապարտյալների համար նախատեսված առանձին մարզասրահ չկա: Ինչպես ադմինիստրացիան, այնպես էլ դատապարտյալները նշեցին, որ ցանկության դեպքում կանայք կարող են օգտվել անչափահասների մարզասրահից, սակայն նման պրակտիկա փաստացի չի գործում մի քանի պատճառներով.

- Մարքավորումների բացակայություն
- Հատուկ թույլտվության ձևակերպում

Այդ է պատճառը, որ կանայք նախընտրում են մարզվել դրսում՝ վազքի կամ զբոսանքի միջոցով:

Կանանց պահման կացարանային մասնաշենքի հետևի հատվածում նախատեսված է վոլեյբոլի խաղահրապարակ, որից երբեմն օգտվում են դատապարտյալները: Նույն հատվածում կա նաև բացօթյա լողավազան, որը հիմնականում չի օգտագործվում, քանի որ կանայք խուսափում են տղամարդ հսկիչների ներկայությամբ լողալ: Բացի այդ, չկա համապատասխան սանիտարահիգիենիկ պայամաններն ապահովելու հնարավորություն՝ ախտահանում և այլն:

Ավելին, լողավազանը շատ փոքր է՝ մոտ 2x3քմ և կարող է վիճաբանությունների պատճառ դառնալ:

Կար նաև մեկ փոքր սեղանի թենիս, որը օգտագործման ենթակա չէ, հին է և վնասված: Անձնակազմի ներկայացուցիչներից նշեցին, որ կա ևս մեկ սեղանի թենիս, որը ամռանն են օգտագործում:

Կրոն

ՔԿՀ տարածքում՝ կացարանային մասնաշենքի հարևանությամբ՝ բացօթյա հատվածում, կառուցված է քրիստոնեական կրոնական անկյուն: Յուրաքանչյուր դատապարտյալ ցանկացած պահի կարող է այնտեղ աղոթել: Երբեմն այցելում է նաև քահանան: Դատապարտյալները նշեցին, որ վերջինս տարվա մեջ մի քանի անգամ է գալիս, շատ կարճ ժամանակով, նույնիսկ դատապարտյալները չեն հասցնում զրուցել նրա հետ: Դիտարկման օրը ՔԿՀ-ում էր նաև տերտերը:

«Հարցրեցինք, կարող է գիտեին մենք գալու ենք, դրա համար են կանչել, ասեց այո, հակառակ դեպքում այսքան չէր մնա, մոտենար դատապարտյալներին, զրուցեր ու լսեր նրանց»:

Բողոքարկման մեխանիզմներ

Բողոքարկման ընթացակարգերն առհասարակ բոլոր քրեակատարողական հիմնարկներում ուղեկցվում են նույն խնդիրներով: Դատապարտյալների որոշ մասը տեղյակ չէ բողոքարկման իր իրավունքին, մյուս մասն էլ, տեղյակ լինելով հանդերձ, կամ վախենում է նման ընթացակարգերից, կամ վստահություն չունի բողոքարկման աղյուսավետության նկատմամբ:

«Որ բողոքում ես քեզ ուրիշ աչքով են նայում: Ով որ մի խնդրի մասին բարձրաձայնում է, արդեն վարչակազմի կողմից չի ընդունվում»:

Ազատագրկված կին

Այնուհանդերձ, կան դատապարտյալներ, ովքեր գիտեն իրենց իրավունքն ու օգտագործում են այն: Սակայն խնդիրը կայանում է նրանում, որ բողոքը ուղարկելուց հետո չգիտեն այն տեղ հասել է, թե ոչ:

«Երբ բողոքը ուղարկում են, չգիտեն արդյոք տեղ հասել է, թե ոչ: Երբեմն ուղղակի վարչակազմի աշխատակիցները ստորագրում են, բայց կասկածելի է»:

Մոնիթորինգ իրականացրած դիտորդ

Դատապարտյալներից մեկը, օրինակ, նշեց, որ արդեն մեկ ամիս է, ինչ դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով վերանայել իր գործը, սակայն պատասխան դիտարկման պահին չէր ստացել: Նշեց, որ չգիտի, նամակը տեղ հասել է, թե ոչ:

Հաճախ դիմում են ՀՀ նախագահին, այս դեպքում ևս համոզված չեն, որ նամակները հասնում են, քանի որ պատասխան դատապարտյալները չեն ստանում:

«Նամակները ուղարկում ենք և ստանում ենք, ամեն ինչ մեր հաշվին, այդ թվում և բողոքները: Սակայն ըստ օրենքի բողոքները պետք է ուղարկվեն անվճար, իսկ մեզ ասում են, որ թուղթ չունեն, գրիչ չունեն»:

Ազատագրկված կին

Կին դատապարտյալների առողջության պահպանման և բժշկական օգնության սկզբունքներն ու առանձնահատկությունները

Առողջապահության միջազգային կազմակերպության կողմից տրված մեկնաբանության համաձայն առողջությունը հասկացվում է որպես ֆիզիկական, մտավոր և սոցիալական ամբողջական կանոնավոր վիճակ և ոչ թե սոսկ հիվանդության կամ արատի բացակայություն¹⁷: Առողջության պահպանման ու խթանման անհրաժեշտությունն ու իմպերատիվ պահանջը արտահայտվում է տարբեր իրավական փաստաթղթերում: Ըստ այդմ, առողջության պահպանման համար անհրաժեշտ պայմաններից են հանդիսանում՝ «խաղաղությունը, օրենքի առկայությունը, կրթությունը, սոցիալական անվտանգությունը, սոցիալական հարաբերությունները, սնունդը, կանանց իրավասություններ տրամադրելը,

¹⁷ Constitution of the World Health Organization, *Basic Documents*, Official Document No. 240 (Washington, 1991)

կայուն էկոհամակարգի առկայությունը, սոցիալական արդարությունը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ու հավասարությունը¹⁸”:

Առողջության պահպանումն ու բժշկական օգնությունը հատկապես կարևորվում է կանանց պարագայում՝ հաշվի առնելով վերջիններիս վերարտադրողական կարողություններն ու դրանից բխող իրավունքները¹⁹: Ընդ որում, վերարտադրողական առողջությունը կանանց պարագայում նրանց վերարտադրողական իրավունքների մասն է հանդիսանում: Ինչով պայմանավորված, կայուն վերարտադրողական առողջություն ունենալու համար կանայք պետք է նախ ընդհանուր առողջական վիճակի կայունություն ունենան, ինչը կներառի նաև ֆիզիկական, տնտեսական և սոցիալական վիճակից բխող պայմանների և հարաբերությունների նորմալությունը²⁰:

Հաշվի առնելով վերարտադրողական առողջության առանձնահատկությունները՝ պետք է փաստել, որ կանանց պարագայում առողջության պահպանման իրավունքի ընդհանուր չափանիշներն ու պահանջները առանձնակի մոտեցում են պահանջում, ինչը երկու հիմնական հարթության մեջ է դրսևորվում: Նախ, կանանց առողջության պահպանման իրավունքը պետք է բխի նրանց գենդերային առանձնահատկություններից: Եվ հետո, ցանկացած իրավիճակում պետք է հաշվի առնել խտրականության արգելքը: Այս երկու մոտեցումները հստակ արտահայտվում են Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին Կոնվենցիայի 12-րդ հոդվածում, ինչը սահմանում է առանց խտրականության բժշկական սպասարկման և առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքը²¹:

Կանանց և հատկապես ազատագրված կանանց առողջության հետ կապված խնդիրների լուծումը մեծապես կախված է ազատագրված վայրերում ստեղծվող պայմաններից և ոլորտի պատասխանատուներից: Ըստ այդմ, ազատագրված վայրերի բժշկական սպասարկման պատասխանատուները պետք է նախ և առաջ ենթարկվեն ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության ստանդարտ նվազագույն կանոններին, որոնց համաձայն բժշկական և հոգեբանական ծառայությունները պետք է բոլոր բանտարկյալներին հասանելի լինեն, իսկ հիվանդ բանտարկյալները ամենօրյա խնամք ստանան²²:

2010 թվականին ՄԱԿ-ի կողմից ընդունված՝ Կին դատապարտյալների հետ վարվեցողության և ազատագրված հետ կապ չունեցող պատժատեսակների մասին նվազագույն Կանոնները /Բանգկոկյան կանոններ/ իրենց մեջ առանձին տեղ են հատկացնում կանանց գենդերային առանձնահատկություններից բխող առողջության ապահովման և բժշկական օգնություն ստանալու հարցերին:

Միևնույն ժամանակ ներկայումս ձևավորվել է նաև Բանտում կանանց առողջության վերաբերյալ Կիևյան Հռչակագիրը, որը կիրառվում է ողջ աշխարհում²³: Կիևյան Հռչակագրում ներկայացված սկզբունքներն ու հանձնարարականները կարևոր քայլ են քրեական

¹⁸ Jakarta Declaration on Health Promotion (1997)

¹⁹ *The Right to Health, Using Module 14 in A Training Program*

²⁰ Asian Forum for Human Rights and Development, *Report of a Consultation on Reproductive Rights and Human Rights* (Bangkok, 1997)

²¹ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիա, հոդված 12

²² Standard Minimum Rules for the Treatment of Prisoners and Procedures for the Effective Implementation of the Standard Minimum Rules, adopted by the United Nations in 1955

²³ Declaration on women's health in prison: correcting gender inequity in prison health. Copenhagen, WHO Regional Office for Europe and Vienna, United Nations Office on Drugs and Crime, 2009.

արդարադատության համակարգում կանանց առողջության և կարիքների հետ կապված հարցերը քննության առնելու և լուծելու համար:

Վերջինիցս բխում են հանձնարարականներ, որոնք պարտադիր ուշադրության պետք է արժանանան երկրների քրեակատարողական համակարգերում բուժսպասարկման հարցերը քննարկելիս: Մասնավորապես, պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

- Նախնական կալանքն ու ազատազրկումը պետք է կիրառվեն միայն այն դեպքում, երբ առկա մնացած միջոցները բավարար և արդյունավետ չեն տվյալ պարագայում, իսկ հղի կանանց և մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց ազատազրկումը հնարավորինս պետք է կրճատվի
- Քրեակատարողական համակարգում ներդրվող պատժողական քաղաքականությունը պետք է հաշվի առնի կանանց գենդերային առանձնահատկություններն ու նրանց տարբեր կարիքները
- Առողջապահական ծրագրերն ու ծառայությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն հոգեկան առողջության պահպանմանը
- Առողջապահական ծառայությունները պետք է անհատականացված լինեն, բխեն հումանիզմի սկզբունքից

Ծառայությունները, որոնք պետք է տրամադրվեն կանանց, պետք է ներառեն հետևյալը՝

- ՔԿՀ ներս մտնելուց առաջ և պատիժը կրելու ողջ ընթացքում պարբերական և մանրակրկիտ հետոգոտություն
- Անհատականացված խնամքի և վերաբերմունքի պլանավորում, ինչը կներառի բժշկական տարբեր ոլորտներ և ծառայություններ
- Հիմնական բուժսպասարկում և դրա հետ կապված իրավունքների պարզաբանում, ինչը ներառում է բժշկական օգնության իրավունքը, գաղտնիության իրավունքը և առողջության վերաբերյալ ստացված տեղեկությունը պահելու իրավունքը
- Հատուկ և մասնագիտացված բժշկական օգնություն և խնամք, ինչը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով կոնկրետ դատապարտյալի կարիքները և կներառի հոգեկան առողջությունը, սթրեսի հաղթահարումը, ՁԻԱՀ-ՄԻԱԿ-ի հետ կապված հարցերը, հեպատիտ, տուբերկյուլոզ և այլ նմանատիպ հիվանդությունների խնամքն ու բուժումը
- Հետազատման նախապատրաստություն, որը պլանավորվում է տրամադրվող խնամքի և բուժսպասարկման հասանելիությունը շարունակական լինելու սկզբունքից ելնելով, հաշվի առնելով նաև այն, որ սոցիալական և առողջապահական օգնությունը հասարակությունից կտրված եղանակով չի կարող տրամադրվել

Սահմանված ծառայություններն ու մոտեցումները հաջողության հասնելու հնարավորություն կունենան, եթե տվյալ իրավական համակարգի քրեակատարողական համակարգը հաշվի է առնում կանանց գենդերային առանձնահատկությունները, իսկ պատժողական քաղաքականությունը համապատասխանում է կանանց կարիքներին և ՔԿՀ ադմինիստրացիան համապատասխան վերապատրաստումներ է անցել:

Բացի քրեակատարողական հիմնարկի անձնակազմից, անհրաժեշտ է, որ դատավորը, դատախազը, պաշտպանը ևս իրազեկված լինեն կնոջ առողջության առանձնահատկությունների վերաբերյալ և այդ հանգամանքը հաշվի առնեն կանանց վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Բժշկական ծառայությունների հասանելիությունը քրեակատարողական հիմնարկում

Սահմանված կարգի համաձայն յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկի վարչակազմն ապահովում է դատապարտյալի առողջության ապահովման ու պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կատարումը: Վարչակազմը միևնույն ժամանակ պատասխանատվություն է կրում դատապարտյալի առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և համաճարակային միջոցառումները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Այս առումով Աբովյան ՔԿՀ-ում դատապարտյալների բժշկական սպասարկումը մտահոգությունների տեղիք է տալիս մի քանի պատճառով: Նախ, դիտարկման ընթացքում նկատվել է բժշկական սպասարկման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ու պայմանների անբավարարություն, ինչպես նաև բժշկական անձնակազմի ոլորտային մասնագետների բացակայություն:

Ավելին, դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունն արդյունավետ ապահովելու համար ստեղծված բուժական ուղղիչ հիմնարկը, այլ կերպ ասած՝ Դատապարտյալների Հիվանդանոց ՔԿՀ-ն, նախատեսված է միայն արական սեռի դատապարտյալների համար: Առողջական լուրջ խնդիրների և բարդությունների դեպքում կին դատապարտյալները ստիպված են դիմել քաղաքացիական հիվանդանոց և հիմնականում իրենց միջոցների հաշվին:

Աբովյան ՔԿՀ-ի բուժկետը, ըստ դիտարկման արդյունքների, ունի հետևյալ պատկերը:

Բուժկետ

Բուժկետը գտնվում է հիմնարկի առաջին հարկի վերջնամասում՝ Համար 3-րդ կացարանի հարևանությամբ: Բաղկացած է 3 փոքր սենյակներից, որոնցից վերջինը նախատեսված է բուժքույրերի հանգստի համար: Բուժկետի սկզբնամասում՝ առաջին սենյակում, տեղի է ունենում դատապարտյալների ընդունելությունը: Այդ հատվածում առկա է մեկ սեղան, 2 աթոռ և մեկ պահարան, որի դարակներում պահվում են դատապարտյալների անձնական դեղերը: Բժիշկը նշեց, որ դատապարտյալներին հանձնությունների միջոցով բերված դեղերը ստուգվում են, բացվում, նայվում ու պահվում են բուժկետում, ամեն օր կամ ըստ անհրաժեշտության նրանք իջնում են ու բուժքրոջից վերցնում իրենց անհրաժեշտ դեղը: Յուրաքանչյուր դատապարտյալի անձնական դեղը պահվում է առանձին տոպրակի մեջ:

Նույն այդ սենյակում դրված էր նաև փոքրիկ մահճակալ, որի վրա մեր այցելության ընթացքում նստած էին ֆելշերները: Սենյակին կից, առանձնացված պատով ու դռնով, գտնվում էր բուն բուժկետը, որտեղ անց է կացվում դատապարտյալի գնությունը: Սենյակի լայնությունը կլիներ մոտ 2 մետր, երկարությունը՝ 2,5մ, պատերը ներկված էին յուղաներկով, բայց հին էին ու ոչ բարվոք վիճակում: Հատակը մանրահատակից էր, որը հին էր, պոկված ու գույնը գցած: Սենյակում կար թափանցիկ լուսամուտ, որը բնական լույսի համար բավարար կարելի է համարել: Լուսամուտը բացվում էր մասնակի, միայն վերևի հատվածը: Բուժկետի լուսամուտը առանց վանդակաճաղերի է: Լուսամուտի բարձրությունը հատակից կլիներ մոտ 60 սմ: Պատից կախված էր էլեկտրական լուսավորության համար նախատեսված լամպ, որը սակայն փոքր էր:

Սենյակում առկա էր մեկ էլեկտրական վարդակ: Ներսի ջերմաստիճանը դիտարկման պահին 17-18 աստիճան է եղել՝ շնորհիվ էլեկտրական մեկ պլիտայի:

Բուժկետի քննարկվող սենյակում լվացարան, ջրի ծորակ և նման այլ պարագաներ չեն եղել: Բացակայում էր նաև օդափոխության համակարգը: Հիգիենայի վիճակը ընդհանուր առմամբ կարելի է բավարար համարել:

Սենյակում կար երկաթյա պահարան՝ նախատեսված դեղերի պահպանման համար, այնտեղ պահվում են ՔԿՀ-ի համար ստացված ընդհանուր դեղերը:

Սենյակի փոքրության պատճառով միաժամանակ միայն մեկ դատապարտյալ կարող է ներսում գննության ենթարկվել, թեպետ բժշկական սարքավորումներ չեն նկատվել:

Հիվանդասենյակներ

Կացարանային մասնաշենքի առաջին հարկում, բուժմասի հարևանությամբ, առանձնացված են երկու բժշկական սենյակներ՝ հիվանդների համար: Սենյակներից մեկը ավելի բարվոք վիճակում էր գտնվում, քան մյուսը: Առաջին բժշկական սենյակի ընդհանուր մակերեսը կլիներ մոտ 15 մ², կար մեկ պատուհան, ներսի պատերը յուղաներկ էին: Լուսավորվում էր ինչպես բնական լույսով, այնպես էլ արհեստական լամպով: Դիտարկման պահին սենյակներից մեկում պատիժ կրում էր հոգեկան առողջության հետ կապված խնդիր ունեցող դատապարտյալ, որտեղ լուսամուտ չկար և ներքին հարդարման տեսանկյունից ոչ բարվոք վիճակում էր, մյուսում՝ շաքարախտով հիվանդ կին:

Գինեկոլոգի սենյակ

ՔԿՀ գինեկոլոգիական հետազոտությունների սենյակը գտնվում է անչափահասների պահման մասնաշենքում:

Վերջինս իրենից ներկայացնում է փոքրիկ սենյակ, որը ընդհանուր առմամբ ոչ բարվոք վիճակում էր գտնվում: Հատակը բետոնից էր, պատերը՝ փշած: Ներսում առկա է մեկ չբացվող լուսամուտ, որը դրսի կողմից ծածկված էր ճաղավանդակով, իսկ ներսի կողմից՝ բժշկական սրբիչով, որպեսզի դրսից հնարավոր չլինի տեսնել, թե ներսում ինչ է կատարվում: Առկա էր էլեկտրական լուսավորություն՝ բժշկի համար անհրաժեշտ սարքավորմամբ:

Սենյակի ջերմաստիճանը շատ ցածր էր, միևնույն ժամանակ՝ չկար ջերմաչափ, որպեսզի հնարավոր լիներ հստակ ասել ջերմաստիճանը, բայց սենյակի խոնավությունը նպաստում էր նրան, որ սենյակում լինի ավելի ցուրտ, քան դրսում: Կար մեկ աթոռ փայտից և մեկ սեղան, երկուսն էլ գտնվում էին ոչ բարվոք վիճակում: Կենտրոնում դրված էր գինեկոլոգիական աթոռը, դրա կողքին՝ մեկ պահարան, որտեղ պահվում էին հետազոտությունների համար անհրաժեշտ գործիքները: Բացակայում էին ջրատար և օդափոխության համակարգերը,

«Դժվարանում եմ պատասխանել, թե այդ մասնաշենք տաք ջուր տրամադրվում է, թե ոչ: Ընդհանուր առմամբ սենյակի հիգիենայի վիճակը բավարար չէ, սենյակում առկա չէ միջնորմով առանձնացված հատված»:

«Ընդհանուր առմամբ սենյակը գտնվում է ոչ բարվոք վիճակում, չեմ բացառում, որ սենյակում կարող են բնակվել խավարասերներ կամ այլ միջատներ: Առանձնահատուկ ցանկանում եմ ընդգծել, որ սենյակի ջերմաստիճանը շատ ցածր էր, մի քանի րոպե գտնվելուց հետո, մատներս սառել էին»:

Մոնիթորինգ իրականացրած դիտորդ

Ստոմատոլոգիական սենյակ

Գինեկոլոգի սենյակի անմիջապես հարևանությամբ գտնվում է ատամնաբուժարանը:

Սենյակի պատերը թեպետ փշած էին, այնուհանդերձ գտնվում էին ոչ բարվոք վիճակում, հատակը բետոնից էր՝ մաշված, կրկին ոչ բարվոք վիճակում: Առկա էր մեկ պատուհան, որը դրսի կողմից ծածկված էր ճաղավանդակով:

Սենյակում առկա էր էլեկտրական լուսավորություն, բժշկի համար համապատասխան սարքավորմամբ: Այստեղ նույնպես ջերմաստիճանը շատ ցածր էր:

Ատամնաբուժի աթոռը զբաղեցնում էր սենյակի մեծ մասը, սենյակում կար մեկ չհրկիզվաղ պահարան և մեկ փայտից աթոռ: Հատակը կեղտոտ էր, սենյակը թափթփված:

Ատամնաբուժարանի և գինեկոլոգիական սենյակի ոչ բարվոք վիճակն ու անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանների բացակայությունը նպաստում է, որ այդ սենյակները չծառայեն իրենց նպատակային նշանակությամբ օգտագործմանը:

17.1. Բժշկական սպասարկման կարգ, ծառայությունների որակ և կարիքներ

Արմվյան ՔԿՀ բժիշկը ընդհանուր բժիշկ է, նեղ մասնագիտական հարցերի դեպքում բժշկական օգնություն տրամադրելու համար համապատասխան մասնագետին հրավիրում են քաղաքացիական հիվանդանոցներից:

ՔԿՀ բժշկական սպասարկման որակի և բժշկի վերաբերյալ դատապարտյալների կարծիքները միանշանակ չեն, և ըստ այդմ դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ դրական և բացասական:

Դատապարտյալներին մտահոգում է հատկապես գինեկոլոգի հարցը: Վերջիններս նշել են, որ երկու գինեկոլոգի հաստիքի անհրաժեշտություն կա: Չնայած ՔԿՀ բժիշկը մասնագիտացված գինեկոլոգ է, սակայն գինեկոլոգիական առումով նրանից այդքան էլ գոհ չեն:

Հիմնական դժգոհությունը սակայն կապված է եղել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների բացակայության հետ: Օրինակ, ՔԿՀ-ում առկա է միայն մեկ ճնշման չափման սարք, ինչից հերթով օգտվում են բոլոր դատապարտյալները և դա այն դեպքում, երբ այն հաճախ անսարք վիճակում է: Բացի այդ, դժգոհության առիթ է նաև սրտի դեղերի և բինտի մշտական բացակայությունը, ինչի նկատմամբ սակայն պահանջարկը մեծ է:

«Բինտը, սրտի դեղերը էժան են, ու դժվար չէ միշտ ունենալ, բայց լինում է, որ ցանկանում ենք վերցնել, ասում են վերջացել է»:

Ազատագրկված կին

Դժգոհության տեղիք է տալիս նաև այն դեպքերը, երբ կանացի ինչ-որ խնդիրներով դատապարտյալները մոտենում են բժշկին, սակայն բժիկն ասում է, որ էխոյի կամ այլ ստուգման կարիք չկա:

«Երբեմն այդ ցավերից նույնիսկ սրտխառնոց եմ ունենում, սակայն օգնություն այդպես էլ չեմ ստանում»:

Ազատագրկված կին

«Բժիշկը գինեկոլոգ է ու ոչինչ չի հասկանում. «Ավելի լավ է պատին հարց տաս, քան իրեն»:

Ազատագրկված կին

Դատապարտյալների համար հատկապես կարևոր են պլանային/պարբերական հետազոտությունները, որոնց հնարավորությունը սակայն ՔԿՀ-ում բացակայում է: Որպես իզական սեռի ներկայացուցիչներ, նշել են, որ իրենց համար հատկապես կարևոր է կանացի առողջության պահպանությունը, որպեսզի պատիժը կրելուց հետո կարողանան երեխա ունենալ և ընտանիք կազմել, սակայն ՔԿՀ պայմանները առողջության պահպանման համար քիչ հնարավորություններ են տալիս:

Հատկապես կարևորվել է ՔԿՀ մուտք գործելուց առաջ իրականացվող բուժզննությունն ու հնարավոր հիվանդությունների վերհանումը, ինչը սակայն չի կատարվում:

«Երբ մեզ բերեցին, ոչ մի հետազոտություն չի անցկացվել: Ժամանակ առ ժամանակ իրականացվում են ՁԻԱՀ-ի, թոքախտի հետազոտություններ: Շատերը

մարմնավաճառներ են ու հիվանդություններով են գալիս: Մարդիկ կան, որ աշխատել են Դուբայում և Թուրքիայում որպես մարմնավաճառ և շատ առողջական խնդիրներ ունեն: Սնկային հիվանդություններն են շատ: Սունկը խժռել է որոշ դատապարտայլների ձեռքերն ու ոտքերը: Եվ մենք ամեն անգամ նույն լոգարանից ենք օգտվում: Վարակվելու վտանգը շատ մեծ է»:

«Ինձ պետք էր էնդոկրինոլոգի կոնսուլտացիա, սակայն նա ոչ մի բան չի կարող անել առանց հետազոտությունների, որոնք այստեղ անցկացնելն անհնար է: Էնդոկրինոլոգը եկավ նայեց, բայց հետազոտության արդյունքների հետ կապված խնդիրներ եղան, ինձ հետազոտության արդյունքները թույլ չտվեցին վերցնել, ասացին, որ իմ բարեկամները կարող են գալ վերցնել տանել ցույց տալ մեկ ուրիշ բժշկի, բայց խնդիրը նրանում է, որ ես էստեղ բարեկամ չունեմ»:

«2-րդ կարգի հաշմանդամ եմ: Հազարից մեկ են դեղ տալիս, տալուց էլ ասկոֆեն կամ ասպիրին են տալիս, ուրիշ դեղ չեն տալիս: 5-6 ամիսը մի անգամ ռենտգեն են են անում: Ինձ ստուգել են սպիների ու դաջվածքների համար, մնացած բոլոր հետազոտությունները չեն անցկացվում»:

«Մոմեր է նշանակել, որոնց արժեքը 12000 դրամ է, իմ ընտանիքը հնարավորություն չունի դա գնել: Չգիտեմ դուրս կգամ այստեղից, թե ոչ: Մեր մոտ կա 4-րդ աստիճանի քաղցկեղով հիվանդ, որը նույնպես ապրում է մեր հետ նույն պայմաններում: Հիվանդասենյակում ապրում է շաքարով հիվանդ մի մարդ, որը այնտեղ է իր գալուց հետո: Սակայն, մեր մոտ շատ շաքարով հիվանդ մարդիկ կան, բայց ոչ մեկին, բացի այդ մեկից հիվանդասենյակում չեն պահում»:

Ադմինիստրացիայի խոսքերով յուրաքանչյուր դատապարտյալ իրեն վատ զգալու դեպքում կարող է գալ ու դիմել բժշկին կամ բուժքույրերից մեկին: Բժշկական անձնակազմի խոսքերով դատապարտյալի՝ գիշերը վատանալու դեպքում, իրենք հնարավորություն ունեն շտապ օգնություն կանչել: Սակայն եթե դատապարտյալը ցանկանում է դրսից կոնկրետ բժիշկ կանչել, ապա դրա հետ կապված ծախսերը ինքը պետք է հոգա:

«Եթե մեկը շատ վատ վիճակում է և չի կարողանում անկողնուց վեր կենալ դա խնդիր չէ մենք ենք գնում տեսնելու համար, թե ինչ խնդիր կա»:

«Մեր մոտ չկա լաբորատորիա, դա էլ է շատ մեծ խնդիր հիվանդությունների ախտորոշման համար գնում ենք Աբովյանի հիվանդանոց, բայց դե իրանք մեզ ընդունելու իրավունք չունեն, այդ հարցը լուծված չի, չգիտես ում դիմես մի անալիզի համար, կամ մի ծառայության համար»:

ՔԿՀ բժիշկ

Բժշկական ադմինիստրացիայի կողմից նույնպես նշվել է դատապարտյալների հիվանդանոցում կանանց զննելու և բուժելու անհնարինությունն ու Աբովյան ՔԿՀ-ի բուժմասը նոր սարքավորումներով թարմացնելու անհրաժեշտությունը:

«Բուժում ենք կամ մեր մոտ, կամ էլ տանում ենք համապատասխան հիվանդանոց, բայց ինչպես նշեցի, դա էլ է խնդիր, որովհետև տանում ենք կլոր կնիքով փաստաթուղթը բայց լինում է, որ չեն ընդունում կամ երկարացնում են զննումն ու բուժումը»:

ՔԿՀ բժիշկ

Բուժապասարկման բաժնի պետի խոսքերով Աբովյան ՔԿՀ-ում պատիժ է կրում 14 շաքարով հիվանդ կին, 3 դատապարտյալ 2-րդ կարգի հաշմանդամ է և մեկ դատապարտյալ քաղցկեղ ունի և 4-րդ կուրս քիմիա է ստանում: Դիտարկման պահին ՁԻԱՀ-ի երկու

վարակակիրներ են եղել ՔԿՀ-ում: Նախկինում դատապարտյալներից մեկը տուբերկուլյոզ հիվանդությունն է ունեցել, սակայն բուժվել է և հիմա ընդհանրապես որևէ խնդիր չունի:

Դիտարկված պահին Արմյան ՔԿՀ-ում հոգեկան առողջության հետ խնդիր ունեցող մեկ կին է պատիժ կրելիս եղել, ով, ինչպես նշեց բժիշկը, ստանում է անհրաժեշտ դեղորայքը: Հոգեկան հիվանդների համար առանձնահատուկ ոչ մի խնամք սակայն չկա, բոլորովին վերջերս մի դատապարտյալի ուղղակի տարել են մտավոր խնդիրներ ունեցող մարդկանց համար նախատեսված հիվանդանոց:

Բավականին մեծ թիվ են կազմում նեվրոզով հիվանդ կանայք: Բժշկի խոսքերով պատիժը կրող դատապարտյալների մոտ 95 %-ը նեվրոզի տարբեր աստիճանների բարդություններով է տառապում:

Բուժապասարկված բաժնի պետի խոսքերով Դատապարտյալների ընդհանուր թվից 23-ին լրացուցիչ սնունդ է տրամադրվում՝ առողջական խնդիրների պատճառով: Բայց թե ինչ է մտնում լրացուցիչ սննդի մեջ, ինչ չափաբաժնով և ինչ հաճախականությամբ, այդպես էլ չհստակեցվեց:

Ծանր հիվանդությունների և հատկապես վարակակիր հիվանդությունների դեպքում ՔԿՀ-ն անմիջապես հայտնվում է խնդրի առջև, քանի որ վարակակիր հիվանդներին պահելու համար առանձին սենյակ ՔԿՀ-ում չկա, որպեսզի տվյալ դատապարտյալին մեկուսացնեն: Ինչը համաճարակը տարածելու հավանականությունը մեծացնում է:

«Արմյան ՔԿՀ մուտք գործելիս պարտադիր կատարվում է վարակիչ հիվանդությունների հետազոտություն, բայց այստեղ առկա է մեկ այլ խնդիր ես չունեմ առանձնացված խուց, որտեղ կառանտինի ընթացքում կարող եմ պահել կալանավորվածին կամ դատապարտյալին: Պատկերացնում եք ինչ որ վարակիչ հիվանդություն ունենա, ոնց կարող եմ առանձնացնել, որ համաճարակ չսկսվի»:

Բժշկական մասի պատասխանատուները նշեցին նաև, որ իրենց մոտ չկան նաև ներքին հետազոտություններ անելու համապատասխան հնարավորություններ ու սարքավորումներ: Այդ իսկ պատճառով ՔԿՀ մուտք գործելիս յուրաքանչյուր դատապարտյալ միայն արտաքին բուժզննման է ենթարկվում, անալիզներ չեն վերցվում, ինչի պատճառով դատապարտյալների մոտ առկա մի շարք հիվանդություններ չհայտնաբերված են մնում:

«Նորեկներին չեն անցկացնում բժշկական զննում: Ոմանք գալիս են դրսից, իսկ ոմանք էլ հասարակաց տներից (Դուբայ, Թուրքիա): Ինչ հիվանդություններ ասես ունեն՝ սնկային, վեներական և այլն: Բոլորը ապրում են միասին իրարից մի քանի մետր հեռավորության վրա: Էլ ինչ՝ սանիտարահիգիենիկ պայմանների մասին խոսք կարող է լինել»:

ՔԿՀ վարչակազմ

17.2. Դեղամիջոցների տրամադրում

Ստացված տեղեկության համաձայն դեղերը ՔԿՀ-ում ստանում են ըստ նախապես վարչությունը ներկայացրած պահանջագրերի: Այնուհանդերձ, միշտ չէ, որ ստացվում են ներկայացված դեղերի տեսակներն ու պահանջված չափաքանակով: Դիտարկված պահին նշվել է, որ վերջին անգամ նման կերպ դեղորայք ստացվել է 2014 թվականի հունվարի 7-ին:

Որոշակի խումբ դեղորայքներ շուտ են սպառվում, օրինակ սրտի վալերիանա դեղատեսակը /կատվախոտ/, ինչով պայմանավորված, տվյալ տեսակից մեծ քանակությամբ են պահանջում: Չնայած դրան, դատապարտյալները նշել են, որ ՔԿՀ-ում միշտ վալերիանայի պակաս կա:

Դատապարտյալները հնարավորություն ունեն նաև օգտագործել դրսից բերված դեղամիջոցները: Մասնավորապես, անձնական միջոցների հաշվին ստացվող դեղատեսակը նախ ստուգվում է ՔԿՀ բժշկի կողմից, ապա մտցվում ՔԿՀ ու պահվում ոչ թե դատապարտյալի մոտ, այլ բժշկական հատվածում: Յուրաքանչյուր դատապարտյալ իր դեղերից օգտվում է բժշկի մոտից տվյալ օրվա չափաբաժինն ու դեղատեսակը ստանալով և հենց տեղում ընդունելով: Դատապարտյալներին արգելված է իրենց մոտ դեղահաբեր պահել: Դեղերը պահվում են դրանց համար նախատեսված հատուկ պահարանի մեջ:

Դատապարտյալների խոսքերով ՔԿՀ-ից կարելի է ստանալ միայն ասպիրին և ասկոֆեն, և կապ չունի թե առողջական ինչ խնդրով են դիմում, միևնույն է՝ նույն դեղատեսակներն են տրվում:

Առանձնակի ուշադրության կարիք ունեն շաքարով հիվանդ կանաք, ում սակայն անհրաժեշտ դեղերը ՔԿՀ-ն հնարավորություն չունի տրամադրել, քանի որ նման դեղատեսակներ չեն ստանում:

«Գնում եմ, ասում եմ ճնշումս բարձր ա, ստուգում ա տեսնում ա բարձր ա, ցավազրկող ա տալիս: Ոնց որ ձեռ առնի»:

«Լինում են դեպքեր, երբ դեղ է անհրաժեշտ լինում, բայց քանի որ գիտեն, որ տանից կուղարկեն, չեն տալիս: Դեղամիջոցներից հիմնականում կա <<Պարացետամոլ>>, <<Ասպիրին>>, <<Ասկոֆեն>>»:

«Հիմնական դեղերն են պարացետամոլը, ասպիրինը, ասկոֆենը, որ խնդրում ենք սպազմալզոն՝ չեն տալիս: Ճնշման ապարատը չի աշխատում, բամբակ ու բինտը տալիս են շատ մեծ դժվարությամբ կամ չեն տալիս, իսկ որ տեսնում են դրսից մարդ է գալիս տեսակցության ընդհանրապես դեղ չեն տալիս, որ տնից բերեն»:

Ազատագրված կին

Դեղերի տրամադրումը ՔԿՀ կենտրոնական խնդիրներից մեկն է, քանի որ դատապարտյալները իրենց անհրաժեշտ դեղատեսակները ստանում են անձնական միջոցների հաշվին, ՔԿՀ-ն տրամադրում է միայն սահմանափակ թվով և տեսակի դեղահաբեր, որոնք շաքարի, հոգեկան առողջության և այլ հիվանդությունների պարագայում պարզապես անօգուտ են:

17.3. Բժշկական անձնակազմի համալրվածություն և վերապատրաստում

ՔԿՀ բժշկական բաժնում նախատեսված են 3-րդ կարգի 3 հաստիքներ բուժքույրերի համար, ինչը բավականին քիչ է, որպեսզի արդյունավետ սպասարկի ինչպես կին դատապարտյալներին, այնպես էլ անչափահասներին: Ըստ այդմ, նկատվել է բժշկական անձնակազմի համալրման անհրաժեշտություն: Մյուս կողմից, աշխատող մասնագետները վերապատրաստման կարիք ունեն, ինչը շուրջ մի քանի տարի չի արվել: Նշվել է հատկապես սրտաբանի և գինեկոլոգի անհրաժեշտություն, ինչպես նաև բժշկական հատվածի նյութատեխնիկական հագեցվածության թարմացում:

«Խնդիրն այն է, որ նման վերապատրաստումներ հիմնականում, վճարովի են և ասեմ, որ քիչ գումար չարժեն, իսկ նախարարությունը չի ցանկանում նման գումարներ հատկացնել վերապատրաստումներին, համ աշխատակազմն է քիչ համ էլ վերապատրաստված չեն»:

ՔԿՀ վարչակազմ

Բժշկական անձնակազմի վերաբերմունք

Դժգոհություն ՔԿՀ-ում նկատվել է ոչ միայն բժշկական սպասարկման որակից, այլ նաև բժշկական անձնակազմի վերաբերմունքից:

Բժշկական անձնակազմի վերաբերմունքը ըստ դատապարտյալների անտանելի է:

«Էնպիսի տպավորություն ա մոտներս, որ բժիշկը մեզանից զգվում ա», «գինեկոլոգը ինձ ասում ա. «գնա աղջի դու ոչ մի պրորբեմ չունես»:

Ազատագրկված կին

Վերաբերմունքի բացասական լինելը բացատրվել է նրանով, որ դատապարտյալների մեջ կան նախկին մարմնավաճառներ, ում գինեկոլոգը զգվանքով է զննում: Այսինքն, բժշկական անձնակազմի մոտ կանխակալ մոտեցում ու վերաբերմունք կա՝ կապված կատարված հանցագործության ու դատապարտյալի անցյալի հետ:

«Դատապարտյալ կանանց մեծ մասը բողոքում է բժշկական ծառայություններից, ընդգծելով բժիշկի վատ վերաբերմունքը, երկու կին նշեցին, որ բժիշկը իրենց վիրավորել է ասելով, որ զգվում է նրանցից և լավ կլիներ, որ մահանաին»:

«Ասում եմ վատ եմ, պատասխանում է թե բանտում ես, հո լավ չես լինելո՞ւ»:

Ազատագրկված կին

Նման պայմաններում դատապարտյալներից շատերի մոտ անվստահություն է ձևավորվել բժշկական անձնակազմի մոտ և մեծ մասը չի դիմում բժշկական օգնություն ստանալու համար:

«Գինեկոլոգից եմ շատ դժգոհ, ուզում էի ստուգվել, բայց ինչքան գնում եմ, դիմում, ասում է հետո, մի տեսակ կարծես չուզենա մարդուն օգնել: Ես գիտեմ, որ խնդիրներ ունեմ, կցանկանայի ստուգվել ու խնամք անցնել, որ այստեղից դուրս գալուց հետո կարողանամ երեխա ունենալ, բայց այստեղ այնպես են վերաբերվում, այնպիսի բժշկական խնամք է, որ հնարավոր է նույնիսկ եղած խնդիրները բարդանան ու զրկվես երեխա ունենալու հնարավորությունից: Ինձ էստեղ բերել են պահում են, պատժում են արածիս համար, բայց հո չպետք է զրկեն երեխա ունենալու հնարավորությունից.. թող էնպես պահեն, որ իմ առողջությունը տեղը մնա ու չվատանա»:

Ազատագրկված կին

Վերաբերմունք

18.1. Վարչակազմի և հսկիչների վերաբերմունք

ՔԿՀ վարչակազմ-դատապարտյալ հարաբերություններում վարչակազմի և հատկապես հսկիչների վերաբերմունքի մասով լուրջ բացթողումներ և խնդիրներ չեն արձանագրվել:

Դիտարկման ընթացքում նկատվել է անձնակազմի կողմից հարգալից վերաբերմունք դատապարտյալների նկատմամբ: Նկատվել են դեպքեր, երբ կին աշխատակիցներն ու դատապարտյալները ավելի քան մտերմիկ են զրուցել և հաղորդակցվել: Միևնույն ժամանակ,

խոսելով որոշ դատապարտյալների մասին, ՔԿՀ աշխատակիցների մոտ նկատելի էր միտում՝ նախապես որոշակի կարծիք ձևավորել վերջինիս նկատմամբ: Օրինակ, հնչել են նման արտահայտություններ՝ «սուտ է խոսում», «դերասանություն է անում» և այլն:

Պետք է սակայն նշել, որ որոշ աշխատակիցների մոտ, այնուամենայնիվ, նկատվել է արհամարական և հրամայական տոն՝ դատապարտյալների հետ շփումներում:

Դիտարկման և դատապարտյալների հետ հարցազրույցների ընթացքում ՔԿՀ աշխատակիցները որևէ կերպ չեն միջամտել և կաշկանդել դատապարտյալներին: Իրենք՝ դատապարտյալները, նշել են, որ ֆիզիկական ուժի կիրառման, խոշտանգումների դեպքեր չեն եղել: Սակայն եղել է դեպք, երբ դատապարտյալներից մեկին աշխատակիցներից մեկը ապտակել է:

«Քննարկվող հարցի շուրջ նույնիսկ կարելի է եզրակացնել, որ ՔԿՀ անձնակազմը դատապարտյալների նկատմամբ ավելի հարգալից է, քան կանայք ադմինիստրացիայի նկատմամբ»:

Մոնիթորինգ իրականացրած դիտորդ

«Առաջին հայացքից անձնակազմն ու դատապարտյալները շատ մտերիմ էին: Ականատես եմ եղել մի տեսարանի, երբ երկու հսկիչ և մի քանի կին դատապարտյալների միասին կանգնած խոսում էին, իսկ հսկիչներից մեկը գրկել էր երեխաներից մեկին»:

Մոնիթորինգ իրականացրած դիտորդ

Դատապարտյալներից նշել են, որ շատ հաճախ անձնակազմի այս կամ այն աշխատակցի վերաբերմունքը պայմանավորված է կոնկրետ դատապարտյալի վարքագծով: Մասնավորապես, եթե դատապարտյալը պահանջներ չի ներկայացնում կամ խնդիրներ չի ստեղծում ՔԿՀ-ի համար, ապա նրան լավ են վերաբերվում:

Ավելին, եթե դատապարտյալը իրեն անարժանապատիվ է պահում, ապա անձնակազմի աշխատակիցներ կարող են օգտվել այդ հանգամանքից:

«Անձնակազմի հետ եթե քեզ արժանապատիվ և պատշաճ ես պահում, խնդիրներ չեն լինում: Կոնֆլիկտներ անձնակազմի հետ չեմ ունեցել, ինձ թույլ չեմ տալիս «լկստվել»: Ոչ ֆորմալ հարաբերություններ անձնակազմի և դատապարտյալների միջև լինում են՝ և ընկերական, և սիրային: Եթե սկսում ես «լկստվել», աշխատողները նույնպես արձագանքում են դրան և կարող են ամեն ինչ էլ թույլ տալ իրենց»:

Ազատագրված կին

Դատապարտյալ-աշխատակից հարաբերություններում վարչակազմի վերաբերմունքը մեծապես կախված է կոնկրետ դատապարտյալի վարքագծից: Օրինակ, ինչպես նշվել է դատապարտյալների կողմից, եթե այս կամ այն դատապարտյալը հաճախ է բողոքում բուժկետից կամ բժշկական օգնությունից, ապա նրա նկատմամբ ադմինիստրացիայի վերաբերմունքը փոխվում է բացասակա առումով:

Միևնույն ժամանակ մեծ նշանակություն ունի նաև դատապարտյալի նյութական և ֆինանսական վիճակը: Եթե դատապարտյալը ֆինանսապես ապահովված է և կարող է ինքն իր հարցերը լուծել ու կարիքները հոգալ, ապա աշխատակիցներից վատ վերաբերմունք չի ստանում և նրա նկատմամբ վարչակազմի վերաբերմունքը համեմատորեն ավելի լավ է:

ՔԿՀ ադմինիստրացիայի որոշ աշխատակիցներ նշել են, որ դատապարտյալների միջև հավասարության և հարաբերությունների ավելի հեշտ կարգավորման համար նախընտրելի կլինեին, որ նրանք բոլորը նույն համագեղեստը կրեին:

«Միասնական համագեղեստի պարագայում դատապարտյալների միջև տարբերությունները և նրանց նկատմամբ վերաբերմունքի տարբերությունը կնվազեր»:

Մոնիթորինգ իրականացրած դիտորդ

«ՔԿՀ-ում զգացվում է տարբերությունը «հարուստի» և «աղքատի» միջև: Այդ տարբերության պատճառով «հարուստները» ավելի ազատ են իրենց զգում ՔԿՀ-ում, կարող են ստանալ ինչ և երբ ուզում են՝ ի տարբերություն «աղքատների»: ՔԿՀ-ի հիմնական խնդիրը նրանում է, որ Վարչությունը չի կարողանում համակարգել դատապարտյալներին, նրանց թույլ են տալիս «անեն ինչ, ինչ ուզում են»:

Մոնիթորինգ իրականացրած դիտորդ

«Անձնակազմի և դատապարտյալների միջև լինում են ոչ ֆորմալ հարաբերություններ, այդ թվում և սեքսուալ: Սակայն այստեղ եթե կինը չուզենա, ոչ մի բան չի լինի: Իսկ ով գնում է այդ հարաբերությունների, ստանում է դեկավարության կողմից հատուկ վերաբերմունք՝ աշխատանք, լավ տեղեր և այլն: Դատապարտյալներ կան, որ բանալիներ ունեն և հնարավորություն ունեն դուրս գալու «զոնա»-ից համապատասխան ժամերին՝ հիմնականում գիշերները»:

Ազատագրված կին

18.2.Դիմելիս

Վարչակազմի աշխատակիցները դատապարտյալներին ամենօրյա հարաբերություններում դիմելու տարբեր ձևեր ունեն: Հիմնականում նշում են տվյալ դատապարտյալի անունը-ազգանունը, եթե հիշում են, ապա նշում են նաև հոդվածը՝ թվով կամ հանցագործության անվամբ:

«Դատապարտյալներին դիմում եմ ազգանունով կամ անունով: Եթե հիշում եմ հոդվածը, ապա ըստ հոդվածի, օրինակ՝ «էն սպանության հոդվածով նստածին ասա թող գա», կամ «կամ տրաֆիկինգի հոդվածով Ա-ին ասա թող գա»:

ՔԿՀ վարչակազմ

18.3.Հանդերձանք

ՔԿՀ վարչակազմը և հատկապես հսկիչները իրենց ամենօրյա աշխատանքում հատուկ ծառայողական համազգեստ են կրում: ՔԿՀ աշխատակիցներից միայն հանձնույնների ստացման բաժնի աշխատակիցը հատուկ համազգեստ չի կրել: Մահակներ, զենք կամ այլ առարկաներ հսկիչների մոտ չեն նկատվել: Հսկիչները նշել են, որ զենքի անհրաժեշտություն Աբովյան ՔԿՀ-ում չի նկատվում և առանց զենքի նախատեսված պարտականությունները կատարելը ավելի հեշտ է:

Կին դատապարտյալները միասնական նմուշի համազգեստ չեն կրում, չեն օգտագործում նաև իրենց տրամադրված խալաթները՝ որպես համազգեստ: Վերջիններս հիմնականում մեկ չափսի են լինում, ինչը ոչ բոլորն են կարողանում կրել: Բացի այդ, այդ խալաթները հնարավոր չէ ողջ տարվա ընթացքում բոլոր ամիսներին և եղանակներին հագնել: Դիտարկումների ընթացքում պարզվել է, որ կանայք կրում են յուրաքանչյուրն իր հագուստը՝ ըստ գույնի և ձևի իր նախընտրության:

Հոգեբանի և սոցիալական աշխատողի վերաբերմունք

Քրեակատարողական հիմնարկում առանձին խնդիր է հանդիսանում սոցիալ-հոգեբանական աշխատողների արդյունավետությունը: Դիտարկման ընթացքում պարզ է դարձել, որ հոգեբանը նոր է աշխատանքի ընդունվել: Կարճ աշխատանքային փորձի պատճառով նրա աշխատանքի վերաբերյալ հստակ կարծիք կամ աշխատանքի արդյունավետության գնահատական տալ չկարողացան, իսկ նախկին հոգեբանից գոհունակություն չի արտահայտվել:

Սահմանված կանոնի համաձայն յուրաքանչյուր դատապարտյալ ՔԿՀ մուտք գործելուց անմիջապես հետո պետք է առանձնագրույց ունենա հոգեբանի հետ: Սակայն նման առանձնագրույցը ոչ բոլոր դատապարտյալների հետ է իրականացվում, ավելին, առանձնագրույցի արդյունավետության միասնական չափանիշներ սահմանված չեն: Ըստ այդմ, նույնիսկ այն դեպքերում, երբ նման առանձնագրույց է տեղի ունենում, այն կրում է պայմանական բնույթ և սոսկ որպես պարտավորության կատարում:

Նմանապես, անհասկանալի է սոցիալական աշխատակցի հաստիքային նշանակությունը, ում մասին կրկին դրական կարծիքներ չեն չեցին:

«Նոր հոգեբանին դեռ լավ չեմ ճանաչում, իսկ հինը միայն ամբողջ օրը սուրճ էր խմում, նույն է սոցիալական աշխատողը: Սոցիալական աշխատողները իրենք էլ չգիտեն ինչի համար են էստեղ ու ինչ են անում»:

«Հոգեբանը և սոցիալական աշխատողը բացառապես ոչ մի բան չեն անում կոնֆլիկտները կասեցնելու, կամ խաղաղ լուծելու համար»:

Ազատագրկված կին

Միջանձնային հարաբերություններ, կոնֆլիկտներ

Արվյան քրեակատարողական հիմնարկի առանձնահատկություններից մեկն էլ վերաբերվում է դատապարտյալների միջև հիերարխիկ հարաբերությունների բացակայությանը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ, ի տարբերություն տղամարդկանց համար նախատեսված բանտերի, կանանց պարագայում հավասարությունը ավելի շատ է տիրում: «Ձոն նայող», որպես այդպիսին, գոյություն չունի, քանի որ չկա այնպիսի մի դատապարտյալ, ում բոլորը կհարգեն ու կենթարկվեն: Ըստ այդմ, ներքին հարաբերությունները ավելի շատ կարգավորվում են աղմինիստրացիայի կողմից:

«Բոլորը հավասար են՝ մենք կին ենք, մեր մոտ գոն նայող կամ նման բաներ գոյություն չունի»: Որոշ դատապարտյալներ փորձում էին ցույց տալ, որ իրենք էդտեղի «հարց լուծողն են», սակայն իրականում նման բան գոյություն չունեին:

«Դատապարտյալների միջև միջանձնային կոնֆլիկտների հարթումը իրականացվում է վարչակազմի աշխատակիցների կողմից, որոնց վերաբերմունքը դատապարտյալների նկատմամբ շատ ավելի լավ է, քան դատապարտյալներինը միմյանց նկատմամբ»:

Ազատագրկված կին

Այնուհանդերձ, խնդիրների հիմնական պատճառներից մեկը դատապարտյալների նյութական վիճակի տարբերությունն է:

«Կան կանայք, ովքեր «եփող-թափողներ» ունեն: Որոշ կանանց լվացքը նույնպես անում են այլ դատապարտյալները: Ով հարուստ է՝ ամենքը նրանցն է: Նրանք, ովքեր ավելի ապահովված են «գործի են դնում» աղքատներին, և դրա աշխատանքի համար վճարում են ուտելիքով կամ հեռախոսի քարտերով»:

Ազատագրկված կին

Միջանձնային Կոնֆլիկտներ

Արժանի քրեակատարողական հիմնարկի առանձնահատկություններից է ներքին հարաբերություններում ամենօրյա կոնֆլիկտները: Վերջիններիս պատճառները տարբեր են, օրինակ, հեռախոսի, լոգարանի, զուգարանի հերթերի պատճառով և առհասարակ այն պատճառով, որ մեկ վայրում այդքան կին է հավաքված: Վեճեր ծագում են շատ չնչին պատճառներից, դատապարտյալների խոսքերով, լինում են դեպքեր, երբ դատապարտյալները արհեստականորեն իրար “գլխի սարքում են” ու վեճ ստեղծում:

«Որտե՞ղ էսքան կնիկ լինի ու կոիվ չլինի, կոիվներ լինում են ոնց չեն լինում»:

ՔԿՀ վարչակազմ

Դրական պետք է գնահատել սակայն այն հանգամանքը, որ նման կոնֆլիկտները կանանց մոտ շուտ են մոռացվում, քանի որ ամեն օր կողք կողքի ապրելով, նրանք շփվում են, զրուցում ու մոռացության տալիս կոնֆլիկտները:

Կոնֆլիկտների մեկ այլ պատճառ կարող է հանդիսանալ այս կամ այն դատապարտյալի փնթիությունը: Ընդհանուր կացարաններում ապրելու պարագայում նույնիսկ մեկ դատապարտյալի հակահիգիենիկ ապրելակերպը բացասաբար է ազդում մնացած դատապարտյալների վրա և լրացուցիչ խնդիրներ ստեղծում:

Այս առումով նշվել է կարծիք, որ հիմնականում խիստ ռեժիմի դատապարտյալներն ավելի զուսպ են, քան առաջին անգամ նվազ ծանրության հանցագործության համար դատապարտվածները և անչափահասները:

Կոնֆլիկտների մեկ այլ պատճառ դատապարտյալների միջև առկա ներքին առուվաճառքն է:

«Ներսում վաճառք է իրականացվում, մեկը մյուսի վրա շոր է վաճառում, ուտելիք: Վաճառքն իրականացվում է հեռախոսի քարտերով: Սակայն այն արգելված է, ու բոլորը գնում են ու իրար մասին խաբար տալիս»:

Ազատագրված կին

Կոնֆլիկտների հաղթահարման հարցում դրական է գնահատվել նոր ղեկավարության դերը, որը, ի տարբերություն նախկինի, նույնիսկ քրեական գործեր է հարուցում և պատժում օրինազանցներին:

Ադմինիստրացիայի կողմից արդեն՝ դատապարտյալների միջև ծագող ամենօրյա վեճերն ու կոնֆլիկտները բացատրվել են նաև դատապարտյալների սոցիալական պայմաններով: Մասնավորապես, տնից ուղարկված հանձնույնների չափն ու տեսակը, տեսակցությունները և նման այլ հանգամանքներ լարվածություն է առաջացնում դատապարտյալների միջև և հանգեցնում խնդիրների՝ քանի որ դատապարտյալները սկսում են միմյանց նախանձել:

Ընդհանուր առմամբ նշվել է նաև կին դատապարտյալների մեջ գերիշխող չարության մասին, որը կապված է մեծապես իգական սեռի էմոցիոնալ անկայունության և բանտային պայմանների հետ:

Կոնֆլիկտների հաճախակիությունը բացատրվում է նաև կին դատապարտյալների պարագայում/չափից դուրս ազատ ժամանակ ունենալու հանգամանքով:

«Եթե ապահովված լինի նրանց զբաղվածությունը, զբաղմունք ունենան, ապա կոնֆլիկտները հնարավորինս կնվազեն»:

ՔԿՀ վարչակազմ

Կին հսկիչների հարցում հնչել է կարծիք, որ ցանկալի կլինեք վերջիններս իրենց նախ կնոջ կարգավիճակում տեսնեն, հետո նոր ոստիկան-հսկիչի, ինչի դեպքում հսկիչ-դատապարտյալ հարաբերությունները ավելի հեշտ կձևավորվեն և լարվածություն չի լինի: Ինչպես իրավացիորեն նշել են դատապարտյալները, ստեղծված ստերեոտիպերը իրենց շատ են խանգարում: Օրինակ, իրենց հիշում և դիմում են կոնկրետ հանցանքի տեսակով և հարգանքի

մասին, ըստ այդմ, մոռանում են: Մինչդեռ յուրաքանչյուր պարագայում իրենք կին են, և արժանի են հարգանքի՝ անկախ կատարված հանցանքի ծանրությունից և տեսակից:

Վերաբերմունք ազգային փոքրամասնությունների նկատմամբ

ՔԿՀ-ում այլ ազգի ներկայացուցիչ հանդիսանում են ազգությամբ ռուս երկու կանայք: Վերջիններս ինչ-ինչ հանգամանքներում խտրական վերաբերմունքի են ենթարկվում ոչ միայն ադմինիստրացիայի, այլ նաև մնացած դատապարտյալների կողմից: Նրանց հետ կապված խնդիրներն ու կոնֆլիկտները առավել հաճախակի բնույթ են կրում, քանի որ անընդհատ վիրավորանքների են ենթարկվում և փորձում պաշտպանվել, ինչն էլ հանգեցնում է լուրջ վիճաբանությունների:

Խոշտանգման և դաժան վերաբերմունքի օրինակներ

Դատապարտյալները ՔԿՀ-ում ֆիզիկական բռնության երբևէ չեն ենթարկվել, չեն արձանագրվել նաև խոշտանգման դեպքեր: Այնուհանդերձ, կանայք նշել են, որ իրենց պահման պայմաններն ու ունեցած իրավական ու նյութատեխնիկական հնարավորությունները այնքան վատն են, որ հանգեցնում են անմարդկային վերաբերմունքի:

Խտրականության և ոչ հավասար հնարավորությունների դրսևորումները

Արվյան ՔԿՀ-ում

Արվյան քրեակատարողական հիմնարկում խտրականության և անհավասար հնարավորությունների դրսևորումները գնահատվել և ուսումնասիրվել են հաշվի առնելով խտրականության դեմ Եվրոպական օրենսդրությամբ սահմանված չափանիշներն ու սկզբունքները, որոնք առավել մանրամասն ձևակերպում ստացել են Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում և Եվրոպական միության՝ խտրականության դեմ հրահանգներում:

Ուսումնասիրված փաստաթղթերը թույլ են տալիս գալ եզրահանգման, որի համաձայն, անձի ազատ ընտրության հնարավորությանը խտրականության իրավունքը կարող է միջամտել երկու եղանակով:

Նախ, նույնանման վիճակում գտնվող անձիք պետք է հավասար հնարավորություն և վերաբերմունք ստանան և գուտ իրենց որոշակի հատկանիշներից ելնելով՝ չպետք է արժանանան նվազ վերաբերմունքի: Սա իրավական գրականության մեջ ընդունված է կոչել “ուղղակի խտրականություն” և թույլատրելի է միայն այն դեպքերում, երբ այն պայմանավորված է նման վերաբերմունքն օբյեկտիվորեն հիմնավորող ընդհանուր բացառությամբ: Ուղղակի խտրականության հիմնական առանձնահատկությունը անձի նկատմամբ ցուցաբերված անբարենպաստ վերաբերմունքն է:

Այնուհետ, խտրականության դեմ իրավունքը սահմանում է, որ տարբեր իրավիճակներում գտնվող անձինք պետք է ստանան տարբեր վերաբերմունք այնքանով, որքանով անհրաժեշտ է, որպեսզի նույն հիմքով, ինչ մյուսները, նույնպես կարողանան օգտվել իրենց հատուկ հնարավորություններից: Սա հաշվի է առնվում հատուկ գործնական գործողություններ իրականացնելիս կամ հատուկ կանոններ սահմանելիս: Նման իրավիճակը ընդունված է կոչել անուղղակի խտրականություն²⁴:

Ուղղակի և անուղղակի խտրականության դեպքերի, ինչպես նաև խտրականության այլ տեսակների դրսևորումների հնարավոր է հանդիպել հատկապես փակ և կիսափակ հաստատություններում, որտեղ ազատությունից զրկված անձիք, մասնավորապես՝ կանայք, հայտնվում են զգալիորեն անբարենպաստ պայմաններում և որպես պաշտպանվող խումբ՝ նրանց տրվող հնարավորությունների և պայմանների հարցը առավել զգուշավորություն է պահանջում:

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում իզական սեռի դատապարտյալներն ու կալանավորները ազատությունից զրկված անձանց ընդհանուր թվի մեջ չնչին փոքրամասնություն են կազմում: Ըստ այդմ, կին դատապարտյալներն ու կալանավորները պատիժը կրելիս հայտնվում են արական սեռի համար նախատեսված քրեական արդարադատության ընթացակարգերի և այնուհետ պատժի կրման պայմանների մեջ, ինչը հիմնականում հաշվի չի առնում իզական սեռի առանձնահատկություններն ու պահանջները²⁵:

Իզուր չէ, որ ներկայումս սույն հարցով հետաքրքրվող մասնագետների և տեսաբանների մոտ ընդունված է կարծիք, որի համաձայն՝ արական և իզական սեռի բանտարկյալները պետք է տարբեր վերաբերմունքի արժանանան: Սա բացատրվում է նրանով, որ կանայք և տղամարդիկ ինքնին տարբեր են և նրանց նույն և հավասար հնարավորություններով վերաբերմունքի արժանացնելը նույն հետևանքներին չի հանգեցնի: Նրանց միջև գենդերային տարբերություններից բացի առկա է նաև քրեական վարքագծի և անցած քրեական ճանապարհի վտանգավորության աստիճանի տարբերություն, ինչպես նաև նրանց կյանքի պատմությունը՝ ներառյալ էմոցիոնալ վիճակի առանձնահատկությունները, ինչը չի կարող չազդել նաև վերականգնողական աշխատանքների վրա: Ավելին, կանանց ուղեկցող բիոլոգիական ֆակտորները սթրեսների և փորձությունների հաղթահարման դժվարությունները ավելի հավանական է դարձնում, քան տղամարդկանց մոտ: Նմանապես, կանանց կողմից կատարվող հանցագործություններն են տարբեր և աչքի են ընկնում վտանգավորության նվազ աստիճանով²⁶:

Փակ հաստատությունները, ինչպիսիք են հանդիսանում բանտերը, պետք է միջազգային ստանդարտների հիման վրա ձևավորված էթիկայի նորմերին և սկզբունքներին համահունչ գործեն, ինչը կծառայի ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությանն ու նրանց վերաինտեգրման օժանդակմանը: Ստանդարտների մեջ են մտնում մասնավորապես ՄԱԿ-ի Դատապարտյալների հետ վարվեցողության ստանդարտ

²⁴ Ձեռնարկ Խտրականության դեմ եվրոպական իրավունքի վերաբերյալ, ԵՄ Հիմնարար իրավունքների գործակալություն, ԵԽ

²⁵ Who are women prisoners? Survey results from Armenia and Georgia, Penal Reform International, 2013

²⁶ Women in Prison: A Forgotten Population? Brogan Currie, Internet Criminology, 2012

նվազագույն կանոնները, Բանտարկյալների հետ վարվեցողության հիմնական սկզբունքները, Խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ Կոնվենցիան և այլն: Այս և գոյություն ունեցող բոլոր այլ փաստաթղթերն ու դրանցում սահմանված չափանիշները առանց խտրականության վերաբերվում են ազատությունից զրկված բոլոր անձանց: Այնուհանդերձ, սահմանված սկզբունքներն ու կանոնները հաճախ կիրառելի չեն հատկապես կին բանտարկյալների համար, միայն այն պատճառով որ բանտերը կառուցվում և պայմանները ձևավորվում են արական սեռի ներկայացուցիչներին պատժի ենթարկելու նպատակով: Օրինակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կին բանտարկյալների թիվը միշտ ավելի փոքր է, նրանց համար կառուցվում է հիմնականում միայն մեկ բանտ, ինչի արդյունքում կանանց մեծամասնությունը պատիժ կրում է տնից և իրենց ընտանիքներից հեռու, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց մտավոր բարեկեցության և վերաինտեգրման վրա: Նման պայմաններում պետությունների կողմից պետք է որոշակի դրական գործողություններ կատարվեն կանանց՝ տղամարդկանց հետ հավասար պայմաններում դնելու և նախատեսված հնարավորություններից հավասար հիմունքներով օգտվելու համար²⁷:

Ավելին, ի հավելումն վերոնշյալի, քրեակատարողական հիմնարկներն ու պատժողական քաղաքականությունը մշակողները պետք է առաջնորդվեն հաշվի առնելով այն փաստը, որ կին բանտարկյալների պահանջներն ու կարիքները էականորեն տարբերվում են տղամարդկանց կարիքներից: Ինչը սակայն մինչ օրս գրեթե բոլոր քրեակատարողական համակարգերում անտեսվում է: Մինչդեռ քրեակատարողական համակարգերը կառավարման այնպիսի ոճ պետք է ընտրեն, որը պատշաճ ուշադրություն կդարձնի կին բանտարկյալների հոգեբանական բարորությանը, խնամքին, հիգիենային, առողջությանն ու նրանց երեխաներին: Ըստ այդմ ձևավորված գենդերային առանձնահատկությունները հաշվի առնող բանտային համակարգը պետք է՝

- Դրական գործողություններ ձեռնարկի կին դատապարտյալների և տղամարդկանց միջև բալանսը վերականգնելու համար
- Կառավարման այնպիսի համակարգ ընտրի, որը հաշվի կառնի նրանց գենդերային առանձնահատկությունները
- Հաշվի առնի կանանց տարբեր կարիքները, որոնք կարող են բխել նրանց ունեցած տարբեր մշակույթներից, մասնագիտությունից և այլն

Կին մեղադրյալների մասնակցությամբ դիտարկված քրեական գործերի և Աբովյան ՔԿՀ-ում կատարված ուսումնասիրության արդյունքերը թույլ են տալիս փաստել, որ քրեական արդարադատության ոլորտում կանանց սեռային առանձնահատկությունները հաշվի չառնելը ինքնըստինքյան նրանց անհավասար պայմաններում է դնում նույն կարգավիճակում գտնվող՝ արական սեռի ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, նույն կարգավիճակում /մեղադրյալի-կասկածյալի աթոռ, դատապարտյալ/ գտնվող կանանց և տղամարդկանց նույն հնարավորությունները տրամադրելը, այն դեպքում, երբ կանայք իրենց սեռային հատկությունների ուժով առավել անբարենպաստ պայմաններում են, հանգեցնում է *անուղղակի խտրականության*: Եվ այս դեպքում, ոչ թե *վերաբերմունքն* է տարբեր, այլ *հանգեցրած հետևանքը*, որը տարբեր հատկանիշ ունեցող անձանց կողմից, տարբեր կերպ

²⁷ Handbook for Prison Managers and Policymakers on Women and Imprisonment, UN Publications

կարող է ընկալվել: Այս առումով, մեծ թիվ են կազմում ՀՀ քրեական արդարադատության ոլորտի օրենսդրության մեջ առկա *չեզոք դրույթները*, որոնք կանանց համար անշահավետ պայմաններ են ստեղծում, քանի որ սահմանում են նույն հնարավորությունները, ինչ տղամարդկանց համար, հաշվի չառնելով նրանց սեռային առանձնահատկությունները:

Առհասարակ, հանգամանքները, որոնց պայմաններում կանայք հանցանք են գործում, էականորեն տարբերվում են տղամարդկանց կողմից կատարվող հանցագործությունների պայմաններից: Նույնիսկ առանց խորը հետազոտություն կամ վիճակագրական ուսումնասիրություն կատարելու կարելի է ասել, որ որոշակի թվով կին դատապարտյալներ քրեակատարողական հիմնարկում են հայտնվում խտրականության այս կամ այն դրսևորման կամ իրենց ամուսինների, ընտանիքի կամ հասարակության կողմից լքված լինելու պայմաններում: Նման իրավիճակ նկատվել է նաև Աբովյան ՔԿՀ-ում: Ըստ այդմ, կանանց կողմից կատարվող հանցագործությունները իրենց բնույթով յուրահատուկ են և մեծապես կախված են աղքատության և սոցիալական պայմանների հետ: Կանանց կողմից կատարվող հանցագործությունները վտանգավորության աստիճանով նվազ վտանգավոր են, քան տղամարդկանց կողմից կատարվողները: Ընդ որում, կանանց քրեածին վարքագծին նախորդող պայմաններից են էմոցիոնալ, ֆիզիկական և/կամ սեռական բռնություններն ու զրկանքները: Այսինքն, կանանց սեռով պայմանավորված առանձնահատկությունները զգալի դեր ունեն նրանց վարքագծում, ինչը հաշվի չառնելը հանգեցնում է խտրական մոտեցման:

Արդարադատության համակարգում կանանց նկատմամբ խտրական մոտեցումները դրսևորվում են հատկապես կալանավորման և դատական ընթացակարգերի ընթացքում:

Դատական պրոցեսների ընթացքում կանանց խտրականության գոհ դարձնում է հատկապես նրանց՝ իրենց իրավունքների մասին տեղեկության պակասը, ինչը ինքնին անհավասար պայմաններում է դնում նրանց՝ մեղադրանքի կողմի հետ համեմատությամբ: Նմանապես, նյութական միջոցների բացակայության պատճառով հաճախ նրանք զրկված են իրենց համար պատճաշ իրավական ներկայացուցչություն ապահովելու հնարավորությունից, ինչի արդյունքում կարող են անազատության մեջ հայտնվել: Այս առումով, արդյունավետ լուծում է համարվում ազատագրկման հետ չկապված պատիժների կիրառումը²⁸:

Առանձնակի ուշադրություն են պահանջում ազատագրկման դատապարտված կանանց անչափափաս երեխաները, ովքեր, կախված ընտրված սանկցիայից, կարող են ***ասոցացված խտրականության*** գոհ դառնալ՝ մոր ազատագրկման հետևանքով զրկանքների ենթարկվելով:

Խտրականության առանձին դեպքերի կարելի է հանդիպել նաև ՔԿՀ բժշկական սպասարկման հարցում: Նախ, ի տարբերություն դատապարտված և կալանավորված արական սեռի ներկայացուցիչների, կին դատապարտյալները կամ կալանավորները հնարավորություն չունեն օգտվել “Դատապարտյալների հիվանդանոց” ՔԿՀ բժշկական ծառայություններից, քանի որ բացակայում են կանանց համար առանձնացված և նրանց կարիքներին հարմարեցված պայմանները: Բացի այդ, դեղերի տրամադրման և բժշկական օգնության միասնական և արդյունավետ պրակտիկայի բացակայության պայմաններում, դատապարտյալները իրենց առողջության հետ կապված հարցերը լուծելիս անհավասար

²⁸ Նման պրակտիկա արձանագրվել է կազմակերպության կողմից իգական սեռի ներկայացուցիչների, որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավվածությամբ դատական գործերի մոնիթորինգի արդյունքում

պայմաններում են հայտնվում: Քանի որ ոչ բոլորն են կարողանում հոգալ բժշկական սպասարկման ծախսերն ու դեղեր ձեռք բերել: Ըստ այդմ, նրանք ովքեր հնարավորություն ունեն անձնական միջոցների հաշվին դեղեր ձեռք բերել կամ ՔԿՀ բժիշկ հրավիրել, կարողանում են լուծել իրենց առողջության հետ կապված խնդիրները, իսկ նրանք ովքեր նման հնարավորություն չունեն, մնում են առանց բուժման և խնամքի:

Պատժողական քաղաքականության ներկայիս պայմաններում խտրական մոտեցում նկատելի է ոչ միայն կին-տղամարդ դատապարտյալների պարագայում, այլ նաև տարբեր սոցիալական կարգավիճակ ունեցող կանանց պարագայում: Օրինակ, ՔԿՀ ներսում բոլոր դատապարտյալներին իրենց հնարավորությունների սահմաններում իրենց համար նյութատեխնիկական պայմաններ ստեղծել թույլ տալը ևս կարող է հանգեցնել *անուղղակի խտրականության*: Սա նկատելի է եղել հատկապես Աբովյան ՔԿՀ կացարանների ներքին կահավորման և հարդարման հարցում, ինչի արդյունքում կացարաններից մեկը և դրանում բնակվող կանայք ավելի լավ պայմաններում են հայտնվում, քան մնացած կացարաններում բնակվողները: Դրա համար պետության կողմից պետք է բանտարկյալների նյութատեխնիկական ապահովումը այնպես իրականացվի, որ դատապարտյալների և նրանց ընտանիքների վրա լրացուցիչ բեռ չընկնի: Հակառակ պարագայում ՔԿՀ-ում պատիժ կրելու ընթացքում ծագած նյութական հարցերի կարգավորումը մնում է առանձին դատապարտյալների վրա, ինչը դատապարտյալների միջև անհավասարության է տանում:

Աբովյան ՔԿՀ-ում պատիժ կրող կանայք ներքին հարաբերություններում ենթարկվում են սիստեմատիկ խտրականության, ինչը արտահայտվում է չեզոք օրենսդրության, քաղաքականության, դատական ընթացակարգերի և պրակտիկայի մեջ առկա չեզոք դրույթներով և ընդհանուր կանոններով, որոնք կանանց պարագայում պետք է առավել ճկուն և կարիքներին հարմարեցված լինեն՝ վերջիններիս անբարենպաստ վիճակից վեր հանելով և մյուսների հետ հավասար պայմաններում դնելով:

Ռեժիմ և կարգապահություն

Քրեակատարողական հիմնարկներում խուզարկությունների, զննումների և առգրավումների իրականացման կարգը նախատեսված է ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին 2006 թվականի օգոստոսի 3-ի Կառավարության որոշմամբ²⁹:

Որոշման համաձայն՝ կանոնակարգով արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի ներթափանցումը, ինչպես նաև քրեական գործի քննությանը խոչընդոտելը կամ նոր հանցագործություն կատարելը կանխարգելելու նպատակով կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի կողմից իրականացվում են կալանավորված անձանց, դատապարտյալների, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայր և ուղղիչ հիմնարկ մուտք ու ելք ունեցող այլ անձանց անձնական խուզարկություններ, կալանավորված անձանց կամ դատապարտյալների խցերի կամ կացարանների խուզարկություններ, կալանավորված անձանց կամ դատապարտյալների իրերի զննումներ և առգրավումներ: Վերջիններս պետք է կատարվեն առնվազն երկու քրեակատարողական ծառայողի ուղեկցությամբ: Անձնական խուզարկությունը պետք է կատարվի անձի պատիվն

²⁹ ՀՀ Կառավարության կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին 2006 թվականի օգոստոսի 3-ի որոշում

ու արժանապատվությունը չոտնահարելու սկզբունքով՝ պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը:

Դիտարկման արդյունքում պարզվել է, որ Աբովյան ՔԿ հիմնարկի կացարաններն ու խցերը տարբեր պարբերականությամբ են խուզարկության ենթարկվում: Այսպես, որոշ դատապարտյալներ նշել են, որ իրենց կացարանը շաբաթական մեկ անգամ են խուզարկում, որի ընթացքում փնտրում են անթույլատրելի իրեր: Որոշ դատապարտյալներ նշել են, որ իրենց կացարանը խուզարկության է ենթարկվում շաբաթական երկու անգամ: Մեկ այլ խումբ նշել է, որ ամսվա ընթացքում մի քանի անգամ խուզարկություն է լինում իրենց մոտ: Խուզարկությունների ընթացքում դատապարտյալները հիմնականում ներկա են լինում՝ գտնվելով իրենց մահճակալի կամ այլ անձնական տարածքում:

Խուզարկությունների նման տարբերակված հաճախականությունը սակայն որևէ հիմնավորում չունի: Դատապարտյալները խուզարկությունների մասին նախապես չեն իմանում: Ինչպես նշեցին հսկիչները, նման սկզբունքով խուզարկությունը նպատակ ունի կանխել դատապարտյալների կողմից արգելված իրերը թաքցնելը:

Վարչակազմի խոսքերով՝ խուզարկությունների իրականացման հաճախականությունը որոշվում է ռեժիմի պետի կողմից: Սովորաբար ՔԿՀ մուտք գործելուց հետո, ինչպես նաև տեսակցություններից հետո անձնական զննումը պարտադիր է: Անձնական զննմանը տղամարդիկ չեն մասնակցում: Անձնական խուզարկության ենթարկվում են նաև հարազատները՝ երկարատև տեսակցությունից առաջ:

Ադմինիստրացիայից տեղեկացանք, որ ՔԿՀ-ում խուզարկության պլանը որոշում են բաժնի պետը և պետի տեղակալը, հետո հիմնարկի պետը հաստատում է: Կան սահմանված ժամկետներ, սակայն եթե ինչ-որ տեղեկություն կա, կարող են արտահերթ խուզարկություն անցկացնել:

Վարչակազմը խուզարկությունների վերաբերյալ մեկ անգամ հատուկ պատրաստություն է անցել, ինչը սակայն բավարար չէ նախատեսված չափանիշները պրակտիկայում կիրառելու համար:

«Հատուկ պատրաստություն ստացել եմ միամսյա պրակտիկայի ժամանակ: Խուզարկելիս անձը չպետք է վիրավորել, ամեն դեպքում մարդ է, պետք է շատ զգույշ խուզարկել, որ չվիրավորվի»:

ՔԿՀ վարչակազմ

Դատապարտյալները նշեցին, որ անձնական խուզարկությունները անց են կացվում ինչպես տղամարդ, այնպես էլ կին հսկիչների կողմից:

«Խուզարկություններ պարբերաբար լինում են, այսօր էլ է եղել: Իմ իրերը տղամարդ հսկիչն էր նայում»:

Ազատագրված կին

19.1. Կարգապահական ընթացակարգեր

Ադմինիստրացիայի խոսքերով կին դատապարտյալների միջև ծագող վեճերը հարթվում են իրենց կողմից: Հսկիչները կամ պատասխանատու այլ անձիք կանչում են երկու կողմերին, բացատրություն վերցնում, քրեական գործ սակայն, չեն հարուցում:

Օրենքով սահմանված կարգը խախտելու դեպքում կիրառվում են համապատասխան պատիժներ: Պատժի կոնկրետ տեսակը որոշում է ՔԿՀ պետը՝ համապատասխան գեկուցագրի հիման վրա: Կանանց նկատմամբ բռնություն կամ հատուկ միջոցներ սակայն չեն

կիրառվել: Չեն կիրառվում նաև ոչ ֆորմալ պատժատեսակներ, դատապարտյալները միմյանց պատժելու հնարավորություն չունեն:

«Ձենք կամ մահակ չենք կրում, մեզ չեն տվել այդպիսի բան: Անհրաժեշտություն է չկա, մենք իրավունք չունենք դատապարտյալներին խփել, եթե խփեմ՝ բողոք կգրի իմ վրա: Պետք է կանխենք, որ խելոք մնան: Խփելու կարիք երբեմն կարծում եմ լինում է, սակայն մենք գիտենք, որ խփելու իրավունք չունենք»:

«Եղել են դեպքեր, երբ երկու կողմերն էլ նկատողություն են ստացել: Երբ մենք տեղում ենք, կռիվն անհնարին է: Միշտ հույս ունեմ, որ կռիվ, հայհոյանք չի լինի: Ես այնպիսի հայհոյանքներ, ինչպիսին ստեղ եմ լսում, երբեք չեմ լսել: Պատժամիջոցներից են նկատողությունը, խիտ նկատողությունը, մենախուցը: Տույժ կիրառելու որոշումը պետն է կայացնում: Մենք գրավոր ներկայացնում ենք տվյալները և նրանք որոշում են կայացնում»:

19.2. Օրվա կարգացուցակ

Կառավարության 1543-Ն որոշման համաձայն սահմանվում է նաև կալանավորված անձանց և դատապարտյալների օրվա կարգացուցակը՝ հաշվի առնելով տարվա եղանակը, կլիմայական պայմանները և այլ հանգամանքներ: Օրվա կարգացուցակը ներառում է վերկացի, ավարտակաչի, հանգստի, հարդարանքի, մարմնամարզության, սննդի ընդունման, զբաղվածության և այլ ժամերը:

Ինչպես ցույց է տվել դիտարկումը, վերոնշյալ գործողությունների կարգացուցակը փակցված է եղել կացարանների դռների կամ մուտքի պատերի վրա՝ դատապարտյալներին հասանելի և նկատելի վայրում:

Հսկիչները նշեցին, որ իրենց մոտ արթնանալու համար նախատեսված է առավոտյան ժամը 7-ը, 20 րոպե նախատեսված է անկողինը հավաքելու և “ռազվոդ”-ին կանգնելու համար: Հիվանդ դատապարտյալները սակայն կարող են մնալ անկողնում: Դատապարտյալներին օրվա ընթացքում հաշվում են երեք անգամ, մեկ անգամ էլ զիշերային ժամերին են հաշվում:

Սահմանված կարգացուցակից շեղումներ նկատվում են հիմնականում զուգարանի պատճառով գոյացող հերթերի արդյունքում:

Խանութից օգտվելու խնդիր

Սահմանված կարգի համաձայն դատապարտյալները իրենց միջոցների հաշվին հնարավորություն ունեն գնումներ կատարել ՔԿՀ-ին կից գտնվող կրպակից: Գնումները կանխիկ գումարով չեն կատարվում, այլ դատապարտյալների հաշվին փոխանցված միջոցների հաշվին: Խնդիրը, սակայն, կայանում է նրանում, որ գները այդ կրպակում սովորական շուկայական գներից շատ ավելի թանկ են:

«Գները խանութում ոնց որ օդանավակայանում լինեն՝ շատ թանկ»:

«Իմ աշխատավարձի փողերով օգտվում եմ կրպակից, բայց գնացուցակ չկա և չգիտեմ մեջը ինչ կա: Շատ բաներ կան, որ ուզում եմ գնել, բայց չկան: Բուդ եմ ուզում, կիլոգրամը արժե 1500 դրամ, բայց չգիտեմ իրականում մեկ կիլոգրամ է, թե ոչ, կշեռք չունենք»:

Մյուսը խնդիրը կապված է խանութի հասանելիության հետ: Ինչպես նշեցին դատապարտյալները, խանութը օրվա ընթացքում մեկ կամ մեկուկես ժամ է բաց լինում:

Աշխատակազմ

ՔԿՀ աշխատակազմ և կառուցվածք

ՔԿՀ-ն ունի 161 աշխատակից, որից 6-ը հատուկ քաղաքացիական ծառայող են և 2-ը՝ վարձու աշխատողներ: Սոցիալ հոգեբանական բաժնում աշխատում են 6 աշխատակիցներ:

Բժշկական անձնակազմը բաղկացած է 2 բժշկից և 5 բուժակից:

Չնայած գոյություն ունեցող հաստիքներին, ՔԿՀ-ում նկատելի է աշխատողների խնդիր: Մի կողմից նկատվել է կադրերի պակաս՝ պայմանավորված հաստիքների բացակայությամբ, մյուս կողմից՝ հաստիքի առկայությամբ համապատասխան աշխատակցի բացակայությունը, ինչով պայմանավորված՝ թափուր աշխատատեղի աշխատանքը կարող է մեկ այլ հաստիքի աշխատող կատարել:

«Օրինակ, էլեկտրիկին հանել են աշխատանքից, թոշակի է անցել, ստիպված նրա գործառույթները պահեստապետն է իրականացնում»:

ՔԿՀ վարչակազմ

Քրեակատարողական հիմնարկի անձնակազմի աշխատակիցների մեծամասնության մոտ նկատվել է քրեակատարողական ոլորտի աշխատանքի մեծ փորձ: Մասնավորապես, հսկիչներն ու սոցիալ-հոգեբանական բաժնի աշխատողներն այս ոլորտում նվազագույնը 10 տարվա աշխատանքային փորձ ունեն: Հատկանշական է, որ մինչև կանանց համար նախատեսված հիմնարկում աշխատելը, աշխատակիցների մի մասն աշխատել է նաև այլ քրեակատարողական հիմնարկներում:

Այնուամենայնիվ, կին դատապարտյալների հետ աշխատանքի առանձնահատկությունների և մասնավորապես՝ Բանգկոկի կանոնների պահանջներին համապատասխան մասնագիտական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը նկատելի է: Առավել ևս, երբ այդ ուղղությամբ մասնագիտական վերապատրաստումներ աշխատակիցների համար չի կազմակերպվում:

Աշխատակիցների համար վերապատրաստման երկօրյա կամ եռօրյա դասընթացներ կազմակերպվում են միայն հասարակական կազմակերպությունների կողմից, ինչը բավարար չէ: Ավելին, ՔԿՀ աշխատակիցների համար բացակայում են պետության կողմից կազմակերպվող պարբերական բնույթ կրող, երկարաժամկետ և կարճաժամկետ վերապատրաստումները:

Հաստիքների Գործառնական Նշանակությունը

Սոցիալ-հոգեբանական բաժնի նպատակային նշանակությունն ու խնդիրները նախատեսված են “Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության” կարգը հաստատելու մասին 2008 թվականի N 44-ն որոշմամբ: Վերջինս սահմանում է քրեակատարողական ծառայության մարմիններում և հիմնարկներում կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կազմակերպումը, իրականացումը և վերահսկողությունը: Մասնավորապես, սահմանված է, որ քրեակատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող

ստորաբաժանումների նպատակը ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների սոցիալական վերականգնմանը և դատապարտյալների ուղղմանը նպաստելն է: Ինչով պայմանավորված՝ առանձնացվում են նաև ստորաբաժանների կողմից իրականացվող աշխատանքների խնդիրները:

Սոցիալ-հոգեբանական բաժնի աշխատակիցների հետ իրականացվող հարցազրույցների արդյունքում սակայն պարզվել է, որ աշխատակիցները այս հաստիքների նպատակային նշանակությունը ոչ միայն ամբողջությամբ չեն ըմբռնում, այլ նաև պրակտիկայում չեն կարողանում իրականացնել: Սոցիալական աշխատողի գործառնությունների մեջ նշվել է միայն դատապարտյալի և նրա ընտանիքի հետ կապի ապահովումն ու կենսաթոշակների հետ կապված հարցերում նրանց օժանդակության տրամադրումը: Երբեմն սոցիալական աշխատողը մասնակցում է նաև մշակութային ու կրթական ծրագրերի իրականացմանը, ինչի հարցում սակայն մեծ դերակատարում են ունենում իրենք՝ դատապարտյալները:

Հոգեբանի գործունեությունը Աբովյան ՔԿՀ-ում հիմնականում ծառայում է անչափահաս դատապարտյալներին, ընդ որում, միայն մեկ հոգեբանը չի կարողանում աշխատել միաժամանակ թե կանանց, թե անչափահասների հետ: Առավել ևս, երբ կին դատապարտյալների հետ աշխատանքն ավելի մեծ ջանքեր է պահանջում, ինչպես նաև ժամանակ և հատուկ հմտություններ: Իրավաբանի հարցում նույնպես հիմնական խնդիրը աշխատանքի հազեցվածությունն է, դատապարտյալների մոտ իրավաբանական բնույթի տարբեր հարցերի առկայությունը, ինչին միայն մեկ իրավաբանը, ով աշխատանքի է անցել համալսարանը ավարտելուց անմիջապես հետո և աշխատանքային փորձ չունի, չի հասցնում արձագանքել:

Սոցիալ-հոգեբանական բաժնի պետը ամենից փորձառուն է քրեակատարողական ծառայությունում, նրա հիմնական գործառնությոթ բաժնի աշխատանքների համակարգումն է:

Բաժնի հետ կապված հիմնական խնդիրը աշխատակիցների մոտ հատուկ մասնագիտական գիտելիքների և պրակտիկ հմտությունների բացակայությունն է, ինչը նրանց աշխատանքը դարձնում է անարդյունավետ: Հաշվի առնելով հատկապես կին դատապարտյալների սեռային առանձնահատկությունները՝ քրեակատարողական ծառայությունում նման առանձնահատկություններից բխող դասընթացներն ու վերապատրաստումներ պետք է պետության կողմից պարբերաբար իրականացվող ծրագրերի մաս հանդիսանան:

«Հատուկ կանանց մասին ինչ-որ բան խոսել են, բայց հստակ չեմ հիշում: Մասնագիտական վերապատրաստման կարիք ունենք, մարդ ինչքան ապրում է, ուզում է սովորել»:

«Ցանկալի է, որ այդպիսի դասընթացներ քաղաքից դուրս հաճախ անցկացնեն, որովհետև հետո էլ հանգստանում ես ու ցրվում: Անցած, թե նախանցած տարի էրեքունիի արդարադատության ինստիտուտից եկել էին, դասընթացներ անցկացրեցին: Բայց պետք է հետևողական լինեն և հաճախ կազմակերպեն»:

ՔԿՀ վարչակազմ

Աշխատակազմի հետ կապված մեկ այլ խնդիր կապված է աշխատանքի հազեցվածության և վարձատրության անհամաչափության հետ: Հսկիչների ամենօրյա աշխատանքի ծանրությունն ու լարվածությունը չի փոխհատուցվում ստացված եկամտով: Աշխատակիցները զրկված են նաև հանգստի համար անհրաժեշտ միջոցներից և հնարավորություններից: Ավելին, աշխատակազմի աշխատանքային պայմանները բավարար չեն բնականոն գործունեության համար: Մասնավորապես, աշխատակիցները չունեն իրենց աշխատանքային սենյակները, չկա ընդհանուր ճաշարան, որից կարող են օգտվել

ադմինիստրատիվ աշխատակիցները և վերջապես՝ դատապարտյալներն ու աշխատակիցները օգտվում են միևնույն սանհանգույցից:

Նման պայմաններում աշխատակիցների մոտ նկատվում է աշխատելու մոտիվացիայի պակաս, քանի որ մեխանիկորեն կատարում են նույն միօրինակ աշխատանքը, ինչի նկատմամբ անտարբեր են:

«Կին հսկիչները քիչ են: Հերթափոխության մեջ հինգ հոգի ենք՝ 2 կին, 2 տղամարդ և հերթափոխության պետ»:

«Եթե աշխատողները ստանային նորմալ աշխատավարձ, գործին ավելի լավ մոտեցում կցուցաբերեին»:

«Լավ կլինեք տարածքը մեծացվեր»:

ՔԿՀ վարչակազմ

20.1. Կին դատապարտյալների հետ աշխատելու առանձնահատկությունները

Ընդհանուր առմամբ այն ադմինիստրատիվ աշխատակիցները, ովքեր նախկինում աշխատել են արական սեռի դատապարտյալների հետ, նշել են, որ կին դատապարտյալների հետ աշխատելը շատ ավելի դժվար է և խնդրահարույց:

«Եթե համեմատենք, կարող եմ ասել, որ տղամարդիկ ավելի լուր են, զսպված են, նաև կանանց նկատմամբ կասկածամիտ»:

ՔԿՀ վարչակազմ

Կանանց հետ աշխատելիս տարբեր խնդիրների է հնարավոր հանդիպել, որոնք երկու հիմնական բնույթի են լինում՝ կապված ՔԿՀ ներքին կյանքի հետ և ՔԿՀ կյանքից դուրս՝ արտաքին խնդիրներ: Առաջինի լավագույն օրինակն են հերթերը, որոնք միշտ կան և վիճաբանության առիթ են տալիս և միջանձնային հարաբերությունների, կոնֆլիկտի պատճառ են դառնում:

ՔԿՀ-ից դուրս խնդիրները կապված են կանանց անձնական կյանքի և ընտանիքի հետ շփումների հետ: Օրինակ, վատ լուր իմանալը կոնկրետ դատապարտյալին ագրեսիվ է դարձնում, ինչը անդրադառնում է նաև մնացած դատապարտյալների վրա: